

№ 1

ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՂԾ-ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԵՐԿԱՑՈՒՄԸ

Հ

ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՂԾ-ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԵՐԿԱՑՈՒՄԸ

(ՆՅՈՒԹԵՐ ՀՈՒՍՔՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ ՁԵՂԱՌ
ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

Պատ. Խմբագիր Ա. Առաւոյան
Տեխ. Խմբագիր Ի. Վարդանյան
Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան Հ. Դոլովստենյան

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ ՅԵՂԱԾ ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ 1936 թՎԻ
ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համեկ (բ) Կ կենտրոմն արձանագրում ե, վոր ՌԴՖԽՀ Հ-ի
Լուսժողկոմատը և մյուս դաշնակից հանրապետությունների
լուսժողկոմատները խեղաթյուրումներ են թույլ տվել դպրոցի
ղեկավարման զործում, վորն արտահայտվել ե դպրոցներում
այսպես կոչված «մանկաբաններ» մասայարար առաջ ըերելու և
դպրոցի ղեկավարման ու աշակերտների դաստիարակության
կարևորագույն ֆունկցիաները նրանց հանձնելու և վստահելու
մեջ: Լուսժողկոմատների կարգադրությամբ, մանկաբանների վրա
յե դրվել դասարանների կոմպլեկտավորման, դպրոցական սեժի-
մի կազմակերպման, ամբողջ ուսումնական պրոցեսին «դպրոցի
ու մանկավարժի մանկաբանացման տեսակետից» ուղղություն
տալու, աշակերտների վատ առաջադիմության պատճառները
վորոշելու, քաղաքական հայացքների նկատմամբ վերահսկողու-
թյուն ունենալու, դպրոցներն ավարտողների պրոֆեսիան վորո-
շելու, վոչ առաջադեմ աշակերտներին դպրոցներից հեռացնելու
և այլ պարտականությունները:

Դպրոցում մանկավարժական կազմին զուգընթաց, անկախ
մանկավարժներից մանակաբանների կազմակերպություն ստեղ-
ծելը, վորն ունի իր ղեկավար կենտրոնները, հանձինս զա-
նազան մանկաբանական կարինետների, մարդաբն լաբորա-
տորիաների և դիտա - հետազոտական ինստիտուտների, ու-
սումնական ու դաստիարակչական աշխատանքի մասնատումը
մանկավարժների ու մանկաբանների միջև, յերբ մանկա-



11-28549 ՁՐ

վարժների նկատմամբ վերահսկողություն և սահմանված յեղել մանակաբանների ողակի կողմէից—այս ամենը չեյին կարող դորձնականում չիջնել մանկավարժի գերն ու պատասխանառությունն ուսումնական ու դաստիարակչական աշխատանքի զբովածքի համար, չեյին կարող փաստական վերահսկողության բացակայություն չստեղծել դպրոցի ղեկավարման գործում, չեյին կարող վնաս չհասցնել խորհրդային դպրոցի ամբողջ գործին: Այդ վնասը խորացվել եր գոլրոցում կատարված մանկաբանական աշխատանքի բնույթով և մեթոդովիայով: Մանկաբանների պրակտիկան, վորն ընթանում եր ամբողջովին կարված մանկավարժից ու դպրոցական պարապմունքներից, հանդեց հիմնականում կեղծ դիտական փորձերի և աշակերտների ու նրանց ծնողների մեջ անթիվ հետազոտությունների կազմակերպմանը՝ անհմաստ և վնասակար հարցաթերթերի, տեսաերի ձեռով և այլն, վորոնք վազուց դատապարտվել են կուսակցության կողմէից: Մեծթվով աշակերտների և նրանց ծնողների մեջ անցկացվող այդ իրրե թե «գիտական» հետազոտություններն ուղղված եյին գլխավորապես չառաջադիմով կամ դպրոցական ուժիմի շրջանակներից դուրս յեկող աշակերտների դեմ և նախատակ ունեյին ժամանակակից մանակաբանության իրրե թե «գիտական», «բիոսոցիալական» տեսակետից ապացուցելու աշակերտի չառաջադիմելու կամ նրա վարքագծի առանձին գեֆեկտների ժառանդական ու սոցիալական պայմանավորվածությունը, գտնել հենց իր՝ աշակերտի, նրա ընտանիքի, ծնողների, նախահայրերի, հասարակական միջավայրի առավելագույն բացասական ազդեցություններն ու ախտաբանական (պատալողիական) խեղաթյուրումները և դրանով իսկ առիթ դանել հեռացնելու աշակերտներին դպրոցական նորմալ կոլեկտիվից:

Նույն նպատակով եր գործում դպրոցականների մտավոր զարգացման ու չնորհալիության հետազոտման ընդարձակ սիստեմը, վորը վոչ քննադատաբար փոխադրվել եր խորհրդային հոգի վրա բուրժուական դասակարգային մանկաբանությունից և ներկայացնում եր կատարյալ ծաղր աշակերտների վրա, վորը հակասում եր խորհրդային դպրոցի խնդիրներին և առողջ մտքին: 6-7 տարեկան յերեխային տալիս եյին ստանդարտային կազությատական հարցեր, վորից հետո վորոշվում եր նրա՝ այսպես կոչված մանկաբանական տարիքը և նրա մտավոր չնորհալիության աստիճանը:

Այդ բոլորը հասցըեց այն բանին, վոր ավելի ու ավելի մեծ քանակությամբ յերեխաներ դասվում եյին մտավորապես հետամնացների, դեֆեկտավորների և «գժվար դաստիարակելիների» կատեգորիան :

Մանկաբանական «ուսումնասիրման» յենթարկված աշակերտներին վերոհիշյալ կատեգորիաներից մեկը դասելու հիման վրա, մանկաբանները վորոշում ենին այն յերեխաններին, փորոնք նորմալ դպրոցից պետք ե մեկուսացվեն և փոխադրվեն «դժվար դաստիարակելի»՝, մտավորապես հետամնաց, պսիխոնեվրոտիկ և այլ յերեխանների համար հատկացված «հատուկ» դպրոցներն ու դասարանները:

Համ կ(ր)կ կենտկոմն արձանադրում է, վոր մանկաբանների վնասակար գործունեյության հետևանքով «Հատուկ» դպրոցների համալրումը կատարվում եր լայն և զնալով ավելացող մասշտառով։ Հակառակ Համկ(ր)կ կենտկոմի և ԽՍՀ Միության ժողկոմների ուղղակի ցուցումին, վոր ստեղծվի յերկու-յերեք դպրոց՝ դեֆեկտավոր և ուսումը կազմալուծող աշակերտների համար, ԽՍՖԽՀ Լուսժողկոմատը ստեղծել եր մեծ թվով «Հատուկ» դպրոցներ զանազան անվանումներով, վորոնց սովորողների հըսկայական մեծամասնությունը նորմալ դպրոցները հետ փոխադրելու յենթակա կատարելավես նորմալ յերեխաններ են։ Այդ դպրոցներում, դեֆեկտավոր յերեխանների հետ միասին, սովորում են տաղանդավոր ու չնորհալի յերեխաններ, վորոնց մանկաբանները կեղծ-դիտական թերիանների հիման վրա, անխոտիր դասել են «դժվար դաստիարակելիների» կատեգորիան։ Ինչ վերաբերում է գործի դրվածքին այդ «Հատուկ» դպրոցներում, ապա՝ Համկ(ր)կ կենտկոմը նրանց ուսումնական ու գաստիարակչական աշխատանքի գրությունը գտնում է միանդամայն անհանդիր և հանցավոր անպատճախանատվությանը սահմանակցվող։ «Հատուկ» դպրոցներն ըստ Եյության հսկողությունից դուրս են, այդ դպրոցներում ուսումնական աշխատանքի, ուսումնական ռեժիմի ու գաստիարակության դրվածքը հանձնված են ամենից քիչ վորակյալ դաստիարակների ու մանկավարժների ձեռքը։ Այդ դպրոցներում վոչ մի լուրջ ուղղիչ աշխատանք չի կազմակերպված։ Դրա հետեւանքով մեծ թվով յերեխաններ, վորոնք նորմալ դպրոցի պայմաններում ուղղվում են և դառնում են ակտիվ, բարեխիղճ ու կարդապահ աշակերտներ, «Հատուկ»

Դպրոցի պայմաններում ձեռք են բերում վատ սովորույթներ ու հակումներ և Ա.Վ.Ելի Դժվար ՈՒՂՂԵԼԻՒՆԵՐ են դառնում:

Համկ(բ)կ կենտկոմը գտնում է, վոր լուսժողկոմատի որդանների պրակտիկայում կուսակցության դաստիարակչական քաղաքականության այդպիսի խեղաթյուրումները կարող ելին առաջ գալ վորպես հետեւանք այն բանի, վոր լուսժողկոմատները մինչեւ այժմ ել հեռու յեն դպրոցի ղեկավարման և խորհրդային մանկավարժական դիտության զարգացման արմատական ու կենսական խնդիրներից:

Միմիայն մանկավարժական դիտության և պրակտիկայի ղեկավարությանը լուսժողկոմատի կողմից ցուցաբերվող արհամարհանքով կարելի յե բացատրել այն փաստը, վոր դպրոցի մահացման հակադիտական տղետ թեորիան, վորը դատապարտված է կուսակցության կողմից, մինչեւ վերջին ժամանակներու ճանաչված եր լուսժողկոմատներում և նրա հետեւորդները, թերուս մանկարանների ձեռով, ավելի ու ավելի ելին շատանում:

Միմիայն աճող սերնդի դաստիարակման գործի ճիշտ դրսվածքի խնդիրներին լուսժողկոմատների ցուցաբերած աղաղակող անուշաղքությամբ և նրանց մի շարք ղեկավարների տղետությամբ կարելի յե բացատրել այն փաստը, վոր լուսժողկոմատի սիստեմում մանկավարժությունն արհամարհական կերպով հայտարարվել եր վորպես «եմպիրիկա» և «դիտականակերպ դիտցիլին», իսկ չկազմակերպված, գեռ յերերուն, իր առարկան ու մեթոդը չփորչված և վնասակար հակամարքսիստական տենդեցներով լի այսպես կոչված մանկաբանությունը հայտարարվել եր վորպես մի ունիվերսալ դիտություն, վորը կոչված և ուղղություն տալու ուսումնական դաստիարակչական աշխատանքի բոլոր կողմերին, վորոնց թվում նաև մանկավարժությանն ու մանկավարժներին: Միմիայն խորհրդային մանկավարժական դիտության զարգացմանը ցուցաբերվող քյալագյողական արհամարժանությունը կարելի յե բացատրել այսպիսի բաղմամարդ բանակի լայն ու բաղմակողմանի փորձը չի մշակվում ու չի ընդհանրացվում և խորհրդային մանկավարժական դիտությունն անտես և առնված լուսժողկոմատների մոտ, մինչեւ ներկա, այսպես կոչված մանկաբանության ներկայացուցիչներին լայն հանրավորություն և տրվում կեղծ դիտական հայցքներ քարողելու և մասսայական ավելի քան կասկածելի փորձեր կատարելու յերեխաների վրա:

Համկ(բ)կ կենտկոմը դատապարտում է ժամանակակից այսպես կոչված մանկաբանության թեորիան ու պրակտիկան: Համկ(բ)կ կենտկոմը գտնում է, վոր այսպես կոչված մանկաբանության թե թեորիան և թե պրակտիկան հիմնած են կեղծ դիտական, հակամարքսիստական դրույթների վրա: Այդպիսի դրույթների թվին և պատկանում նախ և առաջ ժամանակակից մանկաբանության գլխավոր «որենքը»՝ այն «որենքը», թե յերեխաների ճակատագիրը Փատալիստորեն պայմանավորված է կենսաբանական ու սոցիալական գործոններով, ժառանգականության և ինչ վոր անփոփոխ միջավայրի ազգեցությամբ: Խորապես ռեակցիոն այդ «որենքը» աղաղակող հակասության մեջ է գտնվում մարքսիստմի և սոցիալիստական շինարարության ամբողջ պրակտիկայի հետ, վորը հաջողությամբ վերաբաստիարակում է մարդկանց սոցիալիզմի վորով և վերացնում է կապիտալիզմի մնացուկներն եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ:

Համկ(բ)կ կենտկոմը գտնում է, վոր այդպիսի թեորիա կարող եր հրապարակ գալ միմիայն այն պատճառով, վոր անքննադատ կերպով խորհրդային մանկավարժության ասպարեզն ելին փոխադրվել հակադիտական բուրժուական մանկաբանության հայցքներն ու սկզբունքները, մանկաբանության, վորն իր առջև խնդիր եր գրել՝ շահագործող դասակարգերի տիրապետությունը պահպանելու նպատակով ապացուցել շահագործող դասակարգերի և «բարձր ռասաների» հատուկ չնորհաւությունն ու գոյության հատուկ իրավունքները և մյուս կողմից աշխատավոր դասակարգերի ու «ցածր ռասաների» ֆիզիկական ու հոգևոր դատապարտվածությունը: Բուրժուական մանկաբանության հակադիտական սկզբունքներն այդպես խորհրդային դիտության մեջ փոխադրելը վնասակար և առավել ևս այն պատճառով, վոր նաքողարկվում է «մարքսիստական» Փրազիորգիայով:

Համկ(բ)կ կենտկոմը գտնում է, վոր մանուկների վերաբերյալ մարքսիստական դիտություն հնարավոր և ստեղծել միմայն ժամանակակից այսպես կոչված մանկաբանության վերոհիշյալ հակադիտական սկզբունքները հաղթահարելու և նրա իղեռլողներին ու պրակտիկներին քննադատելու հողի վրա՝ մանկավարժության վորպես դիտության և մանկավարժների վորպես նրա կրողների ու արմատացնողների լիակատար վերականգնման հիման վրա:

Համկ(բ)կ կենտկոմը վորոշում է՝

1. Ալովին վերականդնել մանկավարժության ու մանկավարժների իրավունքները:

2. Վերացնել մանկաբանների ողակը դպրոցներում և հանել մանկաբանական դասագրքերը:

3. Առաջարկել ՌՍՖԽՀ Լուսժողկոմատին և մյուս դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատներին՝ վերանայել դժվար դաստիարակելիների դպրոցները, յերեսաների հիմնական մասսային փոխադրելով նորմալ դպրոցները:

4. Սխալ ճանաչել ՌՍՖԽՀ Լուսժողկոմատի վորոշումը՝ մանկաբանական աշխատանքը կազմակերպելու մասին»:

5. Վերացնել մանկաբանության, վորպես հատուկ դիտության, դասավանդումը՝ մանկավարժական ինստիտուտներում ու տեխնիկումներում:

6. Մամուլում խիստ քննադատել ներկա մանկաբանների միջև այժմ լույս տեսած թերետիկական դրվերը:

7. Պրակտիկ մանկաբաններից ցանկացողներին փոխադրել մանկավարժների շարքը:

8. Պարտավորեցնել ՌՍՖԽՀ Լուսավորության ժողկոմին՝ մի ամսից հաշվետվություն ներկայացնել Համկ(թ)կ Կենտկոմին՝ սույն վորշման կատարման ընթացքի մասին:

Համկ(թ)կ ԿԵՆՏԿՈՄ
1936 թ. Հունիսի 4

ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՂԾ-ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ

«ՊՐԱՎԴԱ»-ՑԻ ՀՈՒԼԻՍԻ 5-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ

Համկ(թ)կ Կենտրոնական կոմիտեյի այսոր Հրապարակվող վորոշումը «Մանկաբանական խեղաթյուրումների մասին լուսժողկոմատների սխառեմում», անկասկած, վիթխարի գեր կխաղամեր դպրոցի առողջացման, դպրոցի մահացման ձախլիկ թերթիաների մնացորդների վերացման գործում։ Վերջ դրվեց մանկաբանական կեղծ-գիտությանը, վորը յեռանդով արմատավորում ելին խորհրդային դպրոցում ՌՍՖԽՀ-ի Լուսժողկոմատը և մյուս լուսժողկոմատները։

Ներկայի մանկաբանության կեղծ-գիտականությունը զալոնիք չեր լուսժողկոմատների համար։ Իրենք՝ մանկաբանության ոյտները (Բլոնսկին, Զալկինդը և մյուսները) չելին քաշվում գրելու, վոր ի վիճակի չեն տալ իրենց «գիտության» ճիշտ բնորոշումն անդամ։ Այնուամենայնիվ լուսժողկոմատներն այդ «գիտությունն» ու նրա ներկայացուցիչներին տեր ելին դարձել դպրոցում, վորի ամբողջ կյանքը գրված եր մանկաբանների վերահսկողության ներքո։ Լուսժողկոմատների այդ քաղաքականության տիսուր արդյունքները արտահայտվեցին ավելի ու ավելի մեծ ուժությամբ։ Մանկավարժի, ուսուցչի դերը և պատասխանատվությունը ուսումնական ու դաստիարակչական աշխատանքի դրվածքի խնդրում ուժեղ չափով պակասեցին, և այդ «չեր կարող վնաս չհասցնել խորհրդային դպրոցի գործին»։

Մանկաբանության արմատավորման ուղղությամբ ճիզ ու ջանք թափող ՌՍՖԽՀ Լուսժողկոմատը նրա մասին հատուկ հրամանդ եր հրատարակել։

Զկա դպրոցի աշխատանքի այնպիսի բնագավառ, ուր Լուսժողկոմատը չպահանջեր մանկաբանների ամենորյա միջամտությունը, անթիվ հարցաթերթեր, «ուսումնասիրություններ»,

«մշակումներ», կոնսուլտացիաներ և նման այլ բաներ արտադրելը: Բանն այնտեղ հասավ, վոր ՌՍՖԽՀ Լուսժողկոմատը պահանջում էր «մանկաբանացման» յենթարկել վոչ միայն մանկավարժներին այլև պիոներական կոլվարներին նույնիսկ... աշակերտների ծընողներին, վորոնք իր թե պետք եւ տիրապետելին «մանկաբանական այբուբենին»: Իսկ գործնականում մանկաբանների աշխատանքը դպրոցում հանգում եր այն բանին, վոր մեծ թվով աշակերտների անց ելին կացնում «վոչ-առաջադեմ», «դժվար դաստիարակելի» և նման այլ կատեգորիաների շարքը:

Մանկաբանների անփառունակ դործունեյության գլխավոր նպատակն եր՝ ապացուցել, ինչպես գրված ե ԿԿ-ի վորոշման մեջ, «աշակերտի անառաջադիմության կամ նրա վարքի առանձին թերությունների ժառանգական ու սոցիալական պայմանավորվածությունը, դանել դպրոցականի, նրա ընտանիքի, հարազատների, նախնիների, հասարակական միջավայրի բացասական ազդեցությունների ու ախտաբանական խեղաթյուրումների առավելագույնը և դրանով իսկ առիթ դտնել դպրոցականներին դպրոցական նորմալ կոլեկտիվից հեռացնելու համար»:

Կարիք ել չկա ասելու, թե ի՞նչպիսի վիթխարի վնաս եր հասցնում արհեստականորեն մեծ թվով «անառաջադեմ» և «գե-Փեկտավոր» աշակերտներ ստեղծելու այդպիսի քաղաքականությունը: Կարիք ել չկա ասելու, վոր նման «մանկաբանական գիտության» հիմունքները վոչ մի առնչություն չունեն մարքսիզմի հետ, թեպես և մանկաբանները պճնվում եյին մարքսիստական դզեստներով և ամեն անկյունում, իրենց զրքերի ամեն եղում յերդվում եյին մարքսիզմին հավատարիմ լինելու մասին: Միայն բուրժուական դասակարգային կեղծ-գիտությունը յենթադրում ե դժվար դաստիարակելիների անփոփոխ կատեգորիաներ: Համեկ (բ)Կ ԿԿ-ը սահմանում ե, վոր գործնականում մանկաբանական սխտեմը «կատարյալ ծաղը ե աշակերտների վրա, վորը հակասում ե խորհրդային դպրոցի խնդիրներին և վողջամտությանը»:

Մանկաբանական «գիտությունը» տանում ե ուղղակի գեպի ֆատալիզմը, դեպի «բիոլոգիական և սոցիալական գործոններով, ժառանգականության և ինչ-վոր անփոփոխ միջավայրի ազդեցությամբ յերեխաների բախտի ֆատալիստական պայմանավորվածության» որենքը:

Ի՞նչ են նշանակում այդ հայացքները, յեթե վոչ «բարձր ցեղերի» և շահագործող դաստիարակերի առանձին ձիրքի վերաբեր-

յալ ըուրժուական «գիտության» դասակարգային ստի կրկնությունը: Ի՞նչ ե այս յեթե վոչ գիտության, գիտությունների ըմբռնման նկատմամբ խոհարարների զավակների անրնդունակ լինելու ռեակցիոն տեսակետի պաշտպանությունը վերջին հաշվով: Սոցիալիստական պետությունն իր ամբողջ փորձով ապացուցել ե այդ «թեորիաների» դատարկությունը, գիտությանը հաղորդակից դարձնելով հազարավոր բանվորների և գյուղացիների, հաջողությամբ սովորեցնելով բարձրագույն ուսումնական հիմնարկներում, չխոսելով արգեն միջնակարգ դպրոցի մասին, մեր մեծ հայրենիքում բնակվող բոլոր աղեքերի հարցուր հաղարավոր բանվոր ու գյուղացի յերիտասարդներին:

Մանկավարժությունն ամենից ավելի լուրջ ու կարեօր գիտություններից մեկն ե սոցիալիստական պետության համար: Բայց հենց այս գիտությունն ե', վոր լուսժողկոմատները պահել են հալածական, ճնշված վիճակում, հայտարարել են յերկրորդական և «եմպիրիկ»: Միջնակարգ դպրոցի դասարանների հիմնական կադրերը պատրաստող մանկավարժական ինստիտուտներում ուժեղ կերպով պաշտպանվում եր մանկավարժությունն արհամարհելու և կեղծ-գիտական մանկաբանությունը գովարանելու վողին: Մանկաբանների ամենահիմնար ու տգետ «աշխատությունները» առատորեն տպագրվում և տարածվում եյին:

ՌՍՖԽՀ-ի Լուսժողկոմատի և մյուս հանրապետությունների լուսժողկոմատների վրա ծանր մեղք ե ընկնում կուսակցության, կառավարության առաջ, վողջ խորհրդացին հասարակայնության առաջ նաև այն բանի համար, վոր մանկավարժական բարձրագույն ուսումնական հիմնարկների հաղարավոր ուսանողներ դաստիարակվել են մանկավարժությունն արհամարհելու վողով: Այս տարիվա գարնանը Միության խորացույն մանկավարժական ինստիտուտներում—լենինգրադի Գերցինի անվան ինստիտուտում—մի խորհրդակցության ժամանակ մանկավարժական ֆակուլտետի ուսանողները կարծես հպարտանում եյին իրենց մանկաբանական հակումներով, բացե ի բաց խոստովանելով, վոր մանկավարժությունն այնքան ել լավ չգիտեն, վոր նույնիսկ այնպիսի հնարովի գիսցիպիլիներ, ինչպես «մանկաբանական վիճակաղբությունը», տասնյակ ժամեր են գրավել ի վնաս մանկավարժության: Իսկ չե՞ վոր լենինգրադի ինստիտուտն ամենից մեծն ե ու աղեքցիկը: Ել ի՞նչ ասենք մյուս դավառական ինստիտուտների մասին, վորտեղ մանկաբանական

դառնացանքը հոչակվում եր իրրե մարքս-լենինյան դիտության վերջին խոսքը գովրոցի մասին...

Մանկաբան ազետները մեծ ազդեցություն ունեյին նաև նախադպրոցական հիմնարկներում։ Մամուլում գեռ յերկու տարի սրանից առաջ, (տե՛ս, որինակ «Պրավդա»-յի 1934 թ. ողոստոսի 14-ի համարը) ծագրի յե յենթարկվել այն բանը, վոր մանկաբաները նախադպրոցականներից և նույնիսկ մսուրի տարիքի մանուկներից պահանջում եյին «դասակարգային դիրքավորումներ» և քաղաքական դիտակցականություն։ Բայց ՌՍՖՀՆՀ-ի Լուսժողկոմատը, վորի շտամպը գրված եր այս ամբողջ հիմնարության վրա, մինչև վերջին որերը չփոխեց իր քաղաքականությունը, և հենց Լուսժողկոմատում շարունակեցին տիրություն անել մանկաբանական տգիտառության սյուները։ Այդ «սյուները» շարունակ բազմացնում եյին այսպես կոչված «գժվար դաստիարակելիների» համար հատուկ դպրոցները և դասարանները, վորտեղ եքսպերիմենտներ անող մանկաբան տխմաններն անպատճ կերպով հաշմում եյին աշակերտների հոգեբանությունը և արգելակում խորհրդային դպրոցի զարգացումն ու բարելավումը։

Մանուկների վերաբերյալ մարքսիստական դիտությունն առանձին սիրո չի արժանացել լուսժողկոմատներում, և նրանք մատների արանքով նայելով մանկաբանների ծագրին դպրոցի նկատմամբ, զրեթե վոչինչ չարին խոկական մարքսիստական մանկապարժական դիտությունը զարգացնելու ուղղությամբ։ Համեկ(բ)կ ԿԿ-ի այսոր հրապարակվող վորոշումը, վորը պահանջում ե «լիովին վերականդնել մանկավարժության և մանկավարժների իրավունքը», ինչպես նաև «լիբրացնել մանկաբանների ողակը դպրոցներում և հանել մանկաբանական դասադրերը», մաքրում ե մանուկների վերաբերյալ խոկական, չաղալազիած մարքս-լենինյան դիտության զարգացման ուղին։ Այս վորոշումը, վորը ավարտում է կուսակցության և կառավարության մի շարք խոչընդունույն վորոշումները միջնակարգ դպրոցի մասին, թարմացնող քամու պես կներխուժի խորհրդային դպրոց, այն կմաքրի բուրժուական արտից, վորը մացրել են մանկաբանները և նրանց հովանալվորող լուսժողկոմատները։ Նա կողնի խորհրդային բոլոր ուսուցիչներին մեր դպրոցն արժանի զարձնել բանլորների և գյուղացիների սոցիալիստական պետության մեծ այսորվանը և ե՛լ ավելի մեծ վաղվանը։

Ի. Գ. ԼՈԲՈՎ

ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԻ ՍԻՄԵՄՈՒ ՅԵՂԱԾ ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԽԵՂԱ- ԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
ԺՈՂՈՎՈՒՄ ՅԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԴԱՍԱ-
ՏՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-ի 1936 ԹՎԻ ՀՈՒՂԻՍԻ
4-Ի ՎՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԴԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՅՄԱՆ ՄՇԱԿՎԱԾ
ՍՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային դպրոցի ամբողջումը և նրա ամբողջ ուսումնական-դաստիարակչական աշխատանքի վորակի հետազարձրացումը բացառիկ կարեռություն ներկայացնող գործ ե։ Այս խորհրդի լուծումն անիմաստ և առանց ամենայն վճռականությամբ դպրոցից վարելու այն ամենն, ինչ խորթ և դաստիարակության լենինյան-սոտալինյան մեթոդներին։

Համեկ(բ)կ ԿԿ-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումը «Լուսժողկոմատների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին» նոր ու մեծադույն մուծանք և դաստիարակության խորհրդային սիստեմի զարգացման և մեր դպրոցի հետազարձրացման դործում։ Այդ վորոշումը վերջնականական մերկացնում ե մանկաբանության կեղծ-դիտությունը, վերականցնում և մանուկների վերաբերյալ խոկական դիտության մանկավարժության իրավունքները և բարձրացնում ե խորհրդային մանկավարժի պատասխանատվությունը աճող սերնդի ուսուցման ու դաստիարակման գործի համար։

Համեկ(բ)կ ԿԿ-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումն անխղելիորեն կապված է մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի 1931 թվի սեպտեմբերի 5-ի պատմական վորոշման հետ։

Հինգ տարի առաջ Համեկ(բ)կ կկ-ը վերջ դրեց դպրոցի մաշացման լայնորեն քարոզվող «թեորիային»։ Սույն թվի հուլիսի 4-ի իր վորոշումով՝ Համեկ(բ)կ կկ-ը վերջնական հարված և հասցնում այդ հիմար, Հակադիտական, տղեա «թեորիայի» վերջին մնացորդներին՝ հանձննս մանկաբանության կեղծ - գիտության և նրա կրողների՝ մանկաբանների։

Համեկ(բ)կ կկ-ի 1931 թվի սեպտեմբերի 5-ի պատմական վորոշման որվանից մինչև այժմ հինգ տարում անցած ուղին սոցիալիզմի յերկրում դպրոցական կրթության զարգացման գողծում ձեռք բերված մեծ ու միանդամայն կոնկրետ նվաճումների ուղին է։ Այդ նվաճումների Փոնի վրա առավել ևս միանդամայն անհանդուրժելի յեն այն ամենակոպիտ խեղաթյուրումները խորհրդային դպրոցի շինարարության բնագավառում, վոր թույլ եյին տվել ժողովրդական կրթության որդանները։

Դրա համար եկ դպրոցի աշխատանքի քննադատական ստուգումը միջոցներից մեկն է, վորը պետք է խորհրդային ուսուցիչներին մոբիլիզացիայի յենթարկի հաղթահարելու այլ խեղաթյուրումները։

Զեկուցման նպատակն է՝ ժողովրդական կրթության աշխատողներին և խորհրդային ուսուցին պարզաբանել Համեկ(բ)կ կկ-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշման իմաստն ու վիթխարենշանակությունը և այդ հիման վրա նրանց մոբիլիզացիայի յենթարկել իրական պայքար մղելու խորհրդային դպրոցի ամրացման համար, անհապաղ հաղթահարելու թույլ տրված խեղաթյուրումները և լիկիդացիայի յենթարկելու այն ահաղին վնասը, վոր պատճառել են խորհրդային դպրոցին մանկաբանության կեղծ-գիտությունը և նրա կրողները՝ մանկաբանները։

I. ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ի ժողովրդների առաջնորդ մեծ Ստալինի հանձարով և կամքով վոգենչված, մեր յերկրի բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության զեկավարությամբ համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ տարավ։ Սոցիալիզմը ԽՍՀՄ-ում հաղթանակեց վերջնականապես և անվերադարձ կերպով։

«Այն հասարակական կազմակերպությունը, վորը մենք ստեղծել ենք, կարող է կոչվել խորհրդային, սոցիալիստական կազմա-

կերպություն, տակավին վոչ լրիվ կառուցված, բայց իր հիմքում հասարակական սոցիալիստական կազմակերպություն։

Այդ հասարակության հիմքը հանդիսանում է հանրային սեփականությունը. պետական, այսինքն՝ համաժողովրդական, ինչպես նաև կոռպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը» (ՍՏԱԼԻՆ)։

Սոցիալիզմի հսկայական արտադրողական ուժերի ծավալումը մեր յերկիրը դարձրեց առաջավոր, հզոր, ինդուստրիալ յերկիր։ Նախկինում հետամնաց, մանր, անհատական գյուղատնտեսությունը տեխնիկական վերակառուցման հիման վրա դարձավ նորագույն տեխնիկայով հաղեցած ամենախոշոր կուլտիվ տնտեսությունն ամբողջ աշխարհում։

Կուսակցության և խորհրդային իշխանության ջանքերով աճեցված և ակտիվ, ստեղծագործական աշխատանքի յեն հանգած տասնյակ միլիոնավոր աշխատավորներ, գորոնք խորապես նվիրված են Լենինի-Ստալինի գործին և անձնուրացաբար սիրում են իրենց սոցիալիստական հայրենիքը։

ԽՍՀՄ-ում ընդմիջությունը վոչնչացված է դործազրկությունը, մտցված է աշխատավորների նյութական բարեկեցության մակարդակը, ստեղծված է ունեվոր և կուլտուրական կյանք։ «Կյանքն ավելի լավ է դարձել, ընկերներ։ Կյանքն ավելի ուրախ է դարձել» (Ստալին)։

Միայն սոցիալիզմի յերկրում բոլոր քաղաքացիների համար արի չափով իրագործվում է աշխատանքի իրավունքը, հանգստի իրավունքը, կրթության իրավունքը։

Կուսակցությունը, կառավարությունը և անձամբ ընկեր Ստալինը մեծագույն հոգատարություն են ցուցաբերում մարդկանց մասին, աճող սերնդի գաստիարակության մասին, նոր կաղըեր աճեցնելու մասին։ «Աշխարհումս յեղած բոլոր արժեքավոր կապիտալիստից ամենաարժեքավոր և ամենավճռական կապիտալը, —ասում եր ընկեր Ստալինը կարմիր բանակի ակազեմիականների ավարտական հանդեսին, —հաղթիսանում են մարդկիկ, կաղըերը»։ Բնկեր Ստալինը բազմից նախադպուշացրել են մարդկանց և հատկապես աճող սերնդի նկատմամբ նրբազգաց ու հոգատար վերաբերմունք ունենալու անհրաժեշտությունը։

Եւտաղաձուլիչների հետ ունեցած զրույցում նա մատնանշեց, վոր «մարդկանց պետք է հոգատարությամբ և ուշա-

գրությամբ աճեցնել, ինչպես պարտիզանն և աճեցնում իր սիրած պտղատու ծառը»: Փողովուրդների առաջնորդի այս խոսքերի մեջ խորը սեր և մեծագույն հայրական հոգատարություն կամարդու մասին, կաղըերի մասին, աճող սերնդի դաստիարակության մասին:

Ընկեր Ստալինը բազմիցս մատնանշել է նաև գիտությանը տիրապետելու, այն սոցիալիզմին ի սպաս զնելու անհրաժեշտությունը: «Կառուցելու համար, -ասում եր նա, -հարկավոր է զիտենալ, հարկավոր է տիրապետել զիտությանը, իսկ զիտենալու համար հարկավոր է սովորել: Սովորել համառորեն, համբերությամբ»:

Փողովուրդների առաջնորդի այս լողունզն այժմ դարձել է մոտիկ ու մատչելի՝ քաղաքի և դյուզի բոլոր աշխատավորների համար: Խորհրդային ժողովուրդը, յերկրի բոլոր նյութական և հոգեոր արժեքների այդ իսկական տերը, շահազդուված և կուլտուրայի ծաղկումով, կրթության զարգացումով՝ ինչպես վոչ վոք: Մարդկության մեծագույն հանձար լենինի այն ցուցումը, թե «կոմունիստ կարելի յե դառնալ այն ժամանակ միայն, յերբ քո հիշողությունը կհարստացնես մարդկության մշակած բոլոր հարստությունների գիտությամբ», այժմ ուղեցույց և դարձել մեր անծայրածիր, բազմամիլիոն Խորհրդային Միության բոլոր աշխատավորների համար:

Գիտելիքների, կուլտուրայի անսահման ծարավն այժմ համակել է խորհրդային ազգաբնակության ամենալայն խավերին: Տասնյակ միլիոնավոր մարդիկ, ողտագործելով խորհրդային կարգերի ընձեռած կրթության իրավունքը, համառորեն սովորում են դպրոցներում և բանֆակներում, տեխնիկումներում և բուհերում, խմբակներում և դասընթացներում, ձեռնարկություններում և կոլտնտեսություններում, իրենց յուրահատուկ յեռանգով տիրապետելով գիտության և տեխնիկայի բոլոր բարձունքներին: Յերկիրն այժմ վճռում է բանվորների կուլտուրա-տեխնիկական մակարդակն ինժիներ-տեխնիկական աշխատողների մակարդակն բարձրացնելու խնդիրը, վորը դրեց ընկեր Ստալինը:

Զանազան ստացիոնար ուսումնական հիմնարկներում սովորուների ընդհանուր թիվը ներկայումս անցնում է 30 միլիոնից: ԽՍՀՄ-ում ներկայումս կա մոտ վեց հարյուր ԲՈՒՀ, ուր սովորում են ավելի քան հինգ հարյուր հազար հոգի, այն-ինչ նախա-

հեղափոխական Ռուսաստանում կար միայն 91 բարձրագույն ուսումնական հիմնարկ՝ վոչ ավելի, քան 125 հազար սովորողներով:

ԽՍՀՄ-ում տեխնիկումները հաշվում են ավելի քան յերկու հազար հինգ հարյուր, ուր սովորում են առնվազն 700 հազար հոգի. նախահեղափոխական Ռուսաստանում կար միայն 233 տեխնիկում, ուր սովորում եյին վոչ ավելի, քան 48 հազար հոգի:

Լիովին հասկանալի յե, վոր ժողովրդական կրթության բնագավառում ձեռք բերված այս հսկայական հաջողությունների հետեանքով արմատապես փոխվում. ե նաև մեր յերկրի կուլտուրական կերպարանքը, փոխվում ե վոչ միայն քաղաքի, այլ և գյուղի գեմքը:

Ընկեր Ստալինը ԽՎԱ կուսակցական համագումարում մատնանշեց. «Հին դյուզն իր յեկեղեցիով աչքի ընկնող տեղում, ուր յաղնիկի, տերտերի, կուլակի իր լովագույն աներով առաջին վլանում, դյուղացիների իր կիսափուլ խրճիթներով հետին պլանում — սկսում ե անհետանալ: Նրա տեղը հանդես է դալիս նոր դյուզն իր հասարակական-տնտեսական շինություններով, իր ակումբներով, ռադիոյով, կինոյով, դպրոցներով, գրադարաններով, և մուլիներով, տրակտորներով, կոմբայններով, կալսիչներով, ավտոմոբիլներով»: Այս տեսակետից ցայտուն որինակ ե հանդիսանում Խերսոնի Մրջանի Ստանիսլավ դյուզը (Ռուկաիչնա):

«Նախքան հեղափոխությունը Ստանիսլավ դյուզը հռչակված եր ազգաբնակչության անգրագիտությամբ, անթափանց խավարով և անհավատավի աղքատությամբ: Նրա վրա հաստատվել եր «խողալափուկը» արհամարհական անունը: Այժմ նախկին «խողալափուկը» գնում ե զեպի ունեփոր, կուլտուրական կյանքը: Վերջին տարիներս կոլտնտեսային Ստանիսլավը յերկրին տվել ե 60 ուսուցիչ, 28 աշունոմ, 18 ինժեներ և տեխնիկ, հեռավոր նավագնացության 7 նավակետ, 1 դոցենտ, մի քանի գերասան և ժուրնալիստ, 100 տրակտորիստ և մեխանիկ: Ստանիսլավի 150-ից ավելի կոլտնտեսականներ այժմ սովորում են զանազան բուհերում և տեխնիկումներում»: («Խովեստիա» թիրթից):

Առանձնապես խոչըր հաջողություններ են ձեռք բերված դպրոցական կրթության զարգացման գործում: Ընդհանուր պարագագիւր տարրական ուսուցում մացնելլու այդ «վճռական քայլը

կուլտուրական հեղափոխության գործում» (Ստալին) — արդեն անցած ետապ ե: Խորհուրդների յերկիրը մի քանի տարում իրագործեց այն, վորի համար «լուսավորության» մինիստրության շարական չինովնիկները հարցուրամյա ժամկետ ելին նշում:

Նշանակալի հաջողություններ են ձեռք բերված նաև ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում յոթնամյա ընդհանուր ուսուցում մտցնելու մասին XVII կուսհամագումարի տված դիրեկտիվների իրականացման գործում:

Անցյալ ուսումնական տարում խորհրդային հանրակրթական դպրոցում սովորում ելին ավելի քան 25 միլիոն յերեխա, այնինչ նախահեղափոխական Ծուսաստանի դպրոցում 1914 թվին սովորում ելին միայն 7,8 միլիոն յերեխա: Սովորողների թվի այսպիսի աճումը նշանակում է, վոր ԽՍՀՄ-ում դպրոցական ուսուցման ապահովված ե ամրող աճող սերունդը:

Ուսուցումը հանրակրթական դպրոցում, վորպես կանոն, տարվում ե մայրենի լեզվով: Բայ վոչ-լրիվ տվյալների, ԽՍՀՄ-ում այժմ արդեն մայրենի լեզվով սովորում են 82 ազգությունների յերեխաններ:

Թերեւս հարկավոր չե վոչ մի ապացույց բերել՝ հասկանալու համար կրթության գործի զարգացման տեսակետից վիթխարի այն տարբերությունը, վոր կա սոցիալիզմի յերկրի և կապիտալիզմի յերկիրների միջև: Արդեն իսկ խիստ ցայտուն կերպով ե աչքի ընկնում այդ տարբերությունը: Զկա և չի կարող լինել վոչ մի կապիտալիստական յերկիր, ուր հողացողությունը յերեխանների դաստիարակության և ուսուցման, դպրոցի, ուսուցչի մասին թեկուղ հեռավոր կերպով հիշեցներ այն, ինչ մենք ունենք խորհրդային պետության մեջ: Ինչպիսի աղաղակող կոնտրաստի տեսք ունի դպրոցի և ուսուցչի գրությունը մեզ հարեւան կապիտալիստական յերկիրներում: Լեհաստանում առանց այդ ել խըզ-ճուկ բյուջետային հատկացումները ժողովրդական լուսավորության մինստրության գծով, վորոնք 1931 թվին կազմում ելին մոտ 472 միլիոն զլոտ, 1934/35 ուսումնական տարում իջեցվեցին 311,5 միլիոն զլոտի: Սովորողների թիվը Փաշչիստական Գերմանիայի միջնակարգ դպրոցում 1930 թվից մինչև 1935 թիվը կրճատվեց 20 %-ով:

Խնայողության նպատակով դպրոցական ցանցը լեհաստանում այն աստիճան ե կրճատված, վոր ավելի քան մեկ միլիոն յերեխա դպրոց չընդունվեցին: Ամենաչքավոր ծնողների յերեխա-

ների մեծամասնությունը հագուստ և կոշիկ չունենալու պատճառով զրկված ե դպրոց հաճախելու հարավորությունից: 1934 թվին լեհական վարչապետը, ընդունելով «Ժողովրդական դպրոցների ուսուցիչների միության» պատվիրակությանը, վորը նրա ուշաղբությունը հրավիրեց դպրոցի ծանր դրության վրա, հայտարարեց, վոր «ամենայն հավանականությամբ վարձ ե սահմանվելու տարրական դպրոցի ուսուցման համար»:

Ժողովրդական կրթության գործի դրությունն, իհարկե, ավելի լավ չե նաև մյուս կապիտալիստական յերկիրներում: Ժողովրդական կրթության նկատմամբ հոգացողության բացակայությունը կապիտալիստական յերկիրներում ուժգնորեն անդրդագունում ե նաև ուսուցչի դրության վրա: Նա այնտեղ «Յ-րդ կարգի» մարդ ե հանդիսանում: Առանձնապես աննախանձելի յե ուսուցչի դրությունը Փաշչիզմի յերկիրներում, ուր նա պետք ե կուրորեն ծառայի կապիտալիստական կարգերին: «Ուսուցիչները դանում են Հիտլերի զինվորներ...՝այնպես հայտարարեց բարվարական դավանության մինիստր Հանս Շեմը: Ով չի կամենում դպրոցում հիտլերյան զինվոր լինել, նրան մենք Գերմանիայից կքենք շան մտրակով»: Նացիստական-սոցիալիստական մանկավարժության առաջնորդը «շան մտրակից» բացի այլ բառեր չգտավ ուսուցչի համար:

Նույնպիսի դրության մեջ են ուսուցիչները նաև Գերմանիայի հարեւան յերկրում՝ լեհաստանում: Զաղովրելով ուսուցչների աշխատավարձը 25 տոկոսով կրճատելու մասին, լեհական «Ֆազետա Վարչավակա» թերթը, վորին ամենենին չի կարելի կը տամրել կողմնապահության մեջ, դրում եր-դեռևս յերեք լեհաստանում ուսուցիչների դրությունն այնքան ծանր չեր յեղել, վորքան այժմ: Ուսուցիչները տնքում են պարտականությունների ահապին ծանրության տակ դպրոցում և դպրոցից դուրս ։ Նույնիսկ խիզն ու համոզումները դարձել են այսոր պերճանքի առարկա, վոր վոչ ամեն մարդ կարող ե իրեն թույլ տալ: Հարկավոր ե կատարել այն ամենն, ինչ կհրամայեն: Զկան այնպիսի որենքներ, վորոնք պաշտպանեյին ուսուցչի իրավունքները»:

Կարիք չկա արդեն խոսել այն դրության մասին, վորի մեջ դանումներ ժողովրդական կրթության դրության դարձել ցարական նուօստանում: Կառավարության չինովնիկներն ավելի շատ հոգում ելին այն մասին, թե ի՞նչպես սահմանափակեն աշխատավորների

Կրթություն ստանալու հնարավորությունները։ Բոլորին հայտնի յե «խոհարարների զավակների» վերաբերյալ նշանավոր չքջամերականը, վորը հրատարակեց ցարական լուսավորության մինիստր Դելյանովը։ Շրջաբերականում ասված եր։ «այս կանոնն անէղորեն պահպանելու դեպքում (այդ կանոնը վերաբերում եր այն անձանց զավակներին գիմնազիա ընդունվելուն, վորոնք կարող ելին տանը «ճիշտ հսկողություն» սահմանել յերեխաների վրա) ... «գիմնազիաները և պրոդիմնազիաները կաղապահն ընդունելուց՝ կառավանների, լակեյների, խոհարարների, լվացարարուհիների, մանր խանութպանների և նման մարդկանց զավակներին, վորոնց, բացառությամբ թերեւ անսովոր ընդունակություններով ոժտվածների, ամենեին ել չպետք ե դուրս րերել այն միջավայրից, վորին պատկանում են նրանք»։

Ժողովրդական լուսավորության ցարական մինիստր Շիշկովն ուղղակի հայտարարում եր։ «Լուսավորությունը ոգտակար և... միայն այն ժամանակ, յերբ այն չափավոր են գործածում»։ Դրա դիմաց ցարական կառավարությունը յեռանդադին տարածում եր յերկրում յեկեղեցիներ և վանքեր։ Վիճակագրությունը ցույց է տալիս, վոր 1912 թվին Ռուսաստանում կային ավելի քան 77 հազար յեկեղեցիներ, վանքեր ու մատուռներ, այնինչ դպրոցների թիվը հազիվ եր համար 100 հազարի։ Այլ կերպ ասած, յուրաքանչյուր դպրոցին ընկնում եր մեկ յեկեղեցի։

Ցարական Ռուսաստանի կրթության դործի բացառիկ ցայտուն բնութագրությունը մենք գտնում ենք ընկեր լենինի մոտ։ «Այնպիսի վայրենի մի յերկիր, -գրում եր նա, -զորտեղ ժողովրդի մասսաներն այնքան կողովագած լինեն կրթության, լույսի և գիտության իմաստով, -այդպիսի յերկիր Յեկվոպայում չի մնացել և վոչ մի հատ, բացի Ռուսաստանից»։ Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակը սահման դրեց կամայականությանը, անկուլտուրականությանը և աշխատավորության կողովատմանը կրթության իմաստով, վորպիսիք ծաղկում ելին ցարական Ռուսաստանում։ Խորհրդային կարգերն աշխատավորների առաջ բայց արին ամենալայն հնարավորություններ կրթություն ստանալու համար, կուլտուրայի բարգավաճման համար։ Խորհրդային Միության մեջ ամեն ազգի աշխատավորներն իրավահավասար են։ Այս լենինյան սկզբունքն իր արտահայտությունն է գտնում մեր քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում։ Դրա համար

ել կրթության իրավունքը ամբողջ խորհրդային ժողովրդի էրավունքն ե, անկախ ազգային պատկանելիությունից։ դրա համար ել կրթության իրավունքն այնքան լայնորեն իրականացվում ե զորդնականում մեր Խորհրդային Միության բոլոր անկյուններում։

Կապիտալիստական յերկիրների ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները, չխոսելով արդեն բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության մասին, իրենց հայացքներն ուղղում են ԽՍՀՄ-ի կողմը։ Նրանք սկսում են հասկանալ մեր յերկրում կատարվող սոցիալիստական վերակազմության ամբողջ մեծությունը և այն, վոր նրանց ուղին՝ պրոլետարիատի ուղին և, ԽՍՀՄ-ի ուղին, սոցիալիզմի ուղին։ Իդուր չե, վոր Արեմուտքի առաջավոր հնատիլիգենցիայի այդպիսի ցայտուն ներկայացուցիչներից մեկը, ԽՍՀՄ-ի մեծ բարեկամ Ռոմեն Ռոլանը հայտարարեց։ «Իր ուժը գիտակցող ժողովուրդը, կատարելապես վերափոխում ե իր յերկիրը, միացնում ե ծովերը, կենդանացնում անապատները, փոխում և տեղաշարժում կլիմաները, դառնում տարերային ուժերի աիրակալը»։

ԽՍՀՄ-ում ժողովրդական տնտեսության աճման և ամբացման համեմատ, վերջին տարիներս դպալիորեն ամբացավ նաև դպրոցական կրթության վողջ նյութական բազան։ Ընթացիկ 1936 թվին խորհրդային դպրոցի բյուջեն բարձրացավ 4995,9 միլիոն ռուբլու այն 150 միլիոն ռուբլու դիմաց, վոր բաց եր թողնվում դպրոցների համար նախահեղափոխական Ռուսաստանում 1913 թվին։ Սոցիալ-կուլտուրական շինարության ամբողջ գործի վրա խորհրդային պետությունն ընթացիկ տարում ծախսում և ավելի քան 21 միլիարդ ռուբլի, վորից միայն ժողովրդական կրթության գործի վրա ծախսվում է ավելի քան 12 միլիարդ ռուբլի։ Անվերադարձ անցյալի գիրկն են զնացել այն ժամանակները, յերբ մենք ստիպված եյինք տնտեսել նույնիսկ դպրոցներից, վորպեսզի անհրաժեշտ միջոցներ կուտակեյինք ինդուստրիա ստեղծելու և ժողովրդական տնտեսությունը բարձրացնելու համար։

Խորհրդային պետության համայնքումները դպրոցական կրթության գործին տարեց-տարի ավելանում են։ Պետությունն ահազին միջոցներ և ծախսում դպրոցական շինարարության, դպրոցների կահավորման, դասադրքեր և ուսումնական պիտույքներ բաց թողնելու, ուսուցիչներ վերապատրաստելու և նրանց

նյութական բարեկեցությունը բարձրացնելու, դրադարաններն ընդարձակելու վրա և այլն և այլն։ Դոլրոցական շենքերի թիվը ԽՍՀՄ-ում այժմ արդեն ավելի քան կրկնապատկվել է 1914 թվի համեմատությամբ։ Անցյալ, 1935 թվին կառուցվեց 3362 նոր դպրոց, ընթացիկ 1936 թվին կառուցվում է 4309 նոր դպրոց։ Մոտակա տարիներին նոր կառուցվելիք դպրոցական շենքերի թիվը եւ ավելի շատանալու յէ։

Բայց բանը միայն դպրոցական կրթության քանակական թափը չէ։ Այլ ե դարձել նաև խորհրդային դպրոցի ամբողջ բովանդակությունը։

Յարական չինովնիկները հոգում եյին միայն այն մասին, վոր պատրաստեն «հավատքի և բարոյականության տեսակետից հաստատուն» մարդիկ։ Նրանք գտնում եյին, վոր «ամբողջ ժողովրդին կամ անհամապատասխան քանակությամբ մարդկանց գրագիտություն սովորեցնելը ավելի շատ վնաս, քան թե ոգուտ կտա»։

Խորհրդային դպրոցն ի հակադրություն նախահեղափոխական դպրոցի և կապիտալիստական յերկիրների դպրոցի, —կոմունիստական հասարակություն կառուցելու ազտուղըլած ժողովրդի դպրոցն ե։

Մեր խորհրդային դպրոցն աշխարհիս ամենառաջավոր դըպրոցն ե։ Նա իրազործում ե աճող սերնդի կոմունիստական դաստիարակությունը. նա կոչված է դաստիարակելու կրթված, բարձր աստիճանի կուլտուրական, հանրակողմանիորեն զարգացած և սոցիալիստական հայրենիքին անձնուրացաբար նվիրված նոր մարդուն։ Խորհրդային դպրոցն պետք է իրադորձի ինտերնացիոնալ լայն դաստիարակությունը և ԽՍՀՄ-ի բազմաթիվ ժողովուրդների յերիտասարդ սերնդին հաղորդակից դարձնի սոցիալիստական կուլտուրային։

Ի տարբերությն կապիտալիստական աշխարհի, ուր կրթությունն ուներ դասակարգերի գավակների առանձնաշնորհնումն և հանդիսանում, ԽՍՀՄ-ում հանրակրթական դպրոցը լայնորեն մատչելի յէ խորհրդային բազմամիլիոն ազգաբնակչության զավակների համար։ Մեր խորհրդային դպրոցում իրադորձվում է ձրի, պարտադիր տարրական կրթությունը յերկու սեռի բոլոր յերեխաների համար։

Մեր խորհրդային դպրոցը դաստիարակությ է կոմունիստական հասարակության ազագա գիտակից կառուցողների կենսու-

րախ, առույյդ սերունդ։ Նա իր սովորողներին տալիս ե նաև լայն գեղարվեստական դաստիարակություն, վորպես «ամեն ինչ անելու ընդունակ, հանրակողմանիորեն զարգացած և հանրակողմանիորեն պատրաստված մարդկանց» (Լենին) պատրաստման ամրող սիստեմի անբաժանելի մասը։

Վերջապես, խորհրդային դպրոցը կոչված է յերեխաներին պատրաստվել կուլտուրական վարքի, հասարակական նախաձեռնության, կարգապահությունը գիտակցաբար պահպանելու և սոցիալիստական սեփականության հանդեպ հոգատար վերաբերմունք ունենալու անհրաժեշտ ունակություններ, աղնիվ վերաբերմունք դեպի հասարակական պարտականությունը և հարգանք սոցիալիստական համակեցության կանոնների նկատմամբ։

2. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ ԴՊՐՈՅԻ ԴԵԿՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կուսակցությունը, կառավարությունը և անձամբ ընկեր Ստալինը բացառիկ ուշադրություն են նվիրում դպրոցական կրթության և մեր յերեխաների դաստիարակության հարցերին։ Վերջին տարիներս դպրոցի մասին ընդունված պատմական վորոշումներն սպառիչ ցուցումներ են պարունակում աճող սերնդի ուսման և դաստիարակման բոլոր արմատական հարցերի վերաբերյալ։

Այդ վորոշումների մեջ բացառիկ հստակությամբ բնորոշված են խորհրդային դպրոցի հիմնական խնդիրները և ուսուցչի դերն այնողեք։ Վորոշումների մեջ միանդամայն կոնկրետ ցուցումներ են տրված ուսումնական ծրագրերի, դասավանդման մեթոդների, դասագրքերի, ուսումնական աշխատանքի կազմակերպման մասին և այլն։ Սահմանված է դպրոցի պարզորոշ կազմակերպական կառուցվածքը, մտցված է հաստատուն ուսումնական ուեժիմ, ստեղծված են ամուռ ուսումնական նյութական բազա և բոլոր անհրաժեշտ պայմանները սովորողների ուսուցման և դաստիարակության վորակը վճռաբար բարելավելու համար։

Ընթացիկ տարվա ապրիլ ամսին ընկեր Ստալինի նախաձեռնությամբ կուսակցության և կառավարության ընդունած վորոշումներով ուսուցիչը խորհրդային դպրոցում «դըպած և այնպիսի բարձրության վրա, ուր նա յերբեք չեր կանգնել և չի

կանգնում ու չի կարող կանդնել բուրժուական հասարակության մեջ» (Լենին):

Անձնական ցմահ կոչումներ սահմանելու ակտով կուսակցությունն ու կառավարությունը վիթխարի բարձրության վրա հանցին ուսուցչի հեղինակությունը: Այդ ակտը խորհրդային ուսուցիչներին շատ բանի յե պարտավորեցնում: Ուսուցչի պատվավոր կոչումը այն կրողներից պահանջում է բարձր կուսարա, անթերի մանկավարժական վարպետություն, խորհրդային դպրոցինդիքների հստակ ըմբռնում, քաղաքական մեծ պատրաստականություն և ակտիվ մասնակցություն յերկրի հասարակական կյանքին:

Սշխարհումս վեզ մի տեղ՝ ուսուցիչը շրջապատված չի այնպիսի հարգանքով, ինչպես սոցիալիզմի յերկրում: Միայն մեղանում ուսուցիչն իրոք ծովովրդական ուսուցիչ է հանդիսանում. նրան է պատկանում վճռական դերն ամբողջ դպրոցական գործն իրոք բարելավելու խնդրում. նա կոչված է դաստիարակելու աղատ և յերջանիկ խորհրդային յերեխաներին—կոմունիստական հասարակության ապագա դիտակից կառուցողների սերունդ:

Ստանալով կուսակցության և կառավարության այսքան լայն ոգնությունը, մեր խորհրդային դպրոցը վերջին ժամանակներս ընչ հաջողություններ ձեռք չի բերել: Յեվ այնուամենայնիվ մեր խորհրդային դպրոցն ընդհանուր առմամբ առայժմ հետ է մնում կյանքի պահանջներից և սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերից. Նա չի կարողացել գեռես վերջնականապես հաղթահարել իր «արմատական թերությունը» և առայժմ բարար ծավալի հանրակրթական դիտելիքներ չի առլիս սովորողներին: Շատ փաստեր ցույց են տալիս, վոր դպրոցների մեծ մասը չի կարողանում գեռես ոգտագործել մեզանում յեղած ամենահարուստ հնարավորությունները աճող սերնդի գաղափարական քաղաքական և կուստուրական դաստիարակության համար:

Խորհրդային ուսուցիչները, վորոնք մեծ մասամբ յերիտասարդներ են և սերտորեն կապված են մեր յերկրի աշխատավորության հետ, կարիք ունեն ժողովրդական կրթության որդանների իրական ոգնության: Սակայն դործնականում նրանք այդ ոգնությունը չեն ստանում:

Ժողովրդական կրթության որդանների անուշաղիք վերաբերմունքը ուսուցչի հանդեպ, դպրոցին ինչպես պետք է ոգնել չշանկանալը ամենայն ակնառությամբ յերեան յեկան այն բա-

նում, վոր լուսժողկոմատներն ուղղակի բերագնահատում եյին մանկավարժության նշանակությունը վորպես գիտության, արհամարհական վերաբերմունք եյին ցուցաբերաւ մանկավարժական կրթության և ուսուցիչների վորակի բարձրացման հարցերի հանդեպ:

Ժողովրդական կրթության որդանները մինչև այժմ տակավին չեն վերակառուցել իրենց աշխատանքը կուսակցության այն պահանջներին համապատասխան, վորոնք ձեւակերպվեցին XVII կուսամագումարում: Այդ որդանների աշխատանքում առաջվապես գերակշռում են ղեկավարության գրասենյակային-բյուրո-կրատական մեթոդները, առկա յեն ծանրաշարժությունը, դըպոցից կտրված լինելը և խորհրդային պետության ստեղծած լայն հնարավորությունները վողջ դպրոցական գործի վճռական բարեւավման համար լրիվ չափով ոգտագործել չկարողանալը:

Դպրոցների ղեկավարման գործում ժողովրդական կրթության որդանների մոտ զեռևս բացակայում է կոնկրետ մոտեցությը, թույլ են հաշվի առնվում ուսուցչի պահանջմունքները, «ընդհանրապես զիրեկաթիվների» հետեւում յերբեմն թագնվում է նոր ձեռով աշխատել չցանկանալը, այն բանը չհասկանալը, վորամենն տարի ավելի ու ավելի բարձր պահանջներ են ներկայացնում խորհրդային դպրոցին մեր յերկիրը, վորը կարիք ունի հանրակողմանի զարգացած և կրթված աշխատողների:

Քառու և ուժերի ու միջոցների փոշիացումը, անտարբերությունը դպրոցի պահանջմունքների նկատմամբ, յուրահատուկ «սովորությը» թերությունների նկատմամբ, բնութագրում են ժողովրդական կրթության շատ բաժինների աշխատանքի վոճր: Ժողովրդական կրթության որդանների աշխատանքում յեղած այդ բացասական կողմերը փոխադրվել եյին նաև դպրոցը:

Ավելին ժողովրդական կրթության մի քանի որդաններում, մանկավարժական ինստիտուտներում և տեխնիկումներում զործում եյին տրոցկիստական-ղինովյեվական վոճաղործ բանդայի հետնորդները:

Բելոռուսական լուսժողկոմատի ապարատում, նախկին ժողկում Զեռնուշեվիչի բացահայտ հովանալորությամբ, ջլատիչ աշխատանք եյին կատարում խորհրդային ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստներ Դունեցը և ուրիշներ:

Ախտ կեղատուված եյին ժողովրդական կրթության իվանովյի, Դնեպրովետրովկի և այլ մարդային բաժինների ապա-

րատները։ Յերկար ժամանակ և անպատճե կերպով գործում եր տրոցիստական հակածեղավոխական բանդան Գորկու, Կուրսկի, Կիրովսկի և այլ մանկավարժական ինստիտուտներում։ Այդ բոլոր հակածեղավոխական տարրերը, չնորհիվ լուսժողկոմաների քերանքացության, ահազին վնաս հասցըին ժողովրդական կրթության գործին։

Դպրոցի անբավարար վիճակի ամենադլխավոր պատճառն այն է, վոր ժողովրդական կրթության որդանները չեն ապահովել դպրոցի մասին կուսակցության և կառավարության ընդունած վորշումների բոլշևիկյան կենսագործումը։ Իրենց բազմաթիվ յելույթներում և փաստաթղթերում հայտարարելով դպրոցի մահացման՝ կուսակցության կողմէց ջախչախված հիմար, հակալենինյան «թեորիայի» դրսելորումների դեմ պայքարելու անհրաժեշտությունը, լուսժողկոմանների աշխատողները շատ հաճի գործնականում հանդիսանում ենին նրա կիրառողները։

Դպրոցի մահացման հիմար, հակադիտական, տղետ «թեորիան» իրենից ներկայացնում եր, ինչպես հայտնի յէ, «մանկավարժական հայացքների» յուրատեսակ ասորտիմենտ, հայացքներ, վորոնք իրենց արմատում թշնամի եյին դաստիարակության մարքսլենինյան ուսմունքին։

Դպրոցի մահացման «թեորիայի» ներկայացուցիչների «մանկավարժական» հայացքներն իրենց արմատները պարզում եյին մշնչն Ռուսոսոյի, Տոլստոյի, Վենտցելի և այսպես կոչված «ազատ դաստիարակության իդեայի» մյուս արտահայտիչների մանր-բուրժուական մանկավարժություննը։ Արեմուտքի և Ամերիկայի ժամանակակից մանր-բուրժուական «ռուղիկալացող» մանկավարժներից եյին փոխ առնում իրենց հայացքները դպրոցի մահացման «թեորիայի» ներկայացուցիչները։

Ոսւսուն իր դաստիարակչական սիստեմի հիմքն եր համարում հետեւյալը։ «Վոչ մի գիրք՝ աշխարհից բացի, վոչ մի ձեռնարկ՝ փաստերից բացի»… «Յես չեմ կրկնի, -դրում եր նա, -աշխատեցի՛ք, վոր յերիտասարդների բոլոր դասերն արտահայտվեն վոչ թե նառերով, այլ գործողություններով, նրանից չպետք է գրիեռում սովորեն այն, ինչ նրանից կարող են սովորել փորձից»…

«Վորևե առարկայի վրա հաջողությամբ ներգործելու համար, -նկատում ե լ.ն. Տոլստոյը, -պետք ե ուսումնասիրել այն, իսկ դաստիարակության մեջ այդ առարկան ազատ յերեխան ե»… «Մանկավարժության չափանիշը, -ասում ե Տոլստոյը, -

մեկ և միայն՝ ազատություն»… «Յերեխային սովորեցնել և դաստիարակել, -պնդում ե նա, -անկարելի և անիմաստ ե այն սյարդ պատմառով, վոր յերեխան ինձնից, յուրաքանչյուր չափահաս մարդուց ավելի մոտիկ ե կանգնած հարմոնիայի, նըշմարտության, գեղեցկության և բարիքի այն իդեալին, վորին յես իմ հպարտությունից դրդված ուզում եմ բարձրացնել նրան»… «Ամեն մի ուսուցման հիմքը, -դրում եր լ.ն. Տոլստոյը, -կարող ե լինել միայն այն, վոր սովորողներն ազատ լինեն ընտրելու թե ի՞նչ և ի՞նչպես սովորեցնել»։

Ե՛լ ավելի ցայտուն կերպով ե «ազատ» դաստիարակության իդեան արտահայտել կ.ն. Վենտցելը, վորի մանկավարժական հայացքներն «ազատ» դաստիարակության մասին կազմավորվել են այն չըջանում, յերբ մանր-բուրժուական ինդելիգենցիայի նշանակալի խավերը հեռացան 1905 թվի հեղափոխությունից։

Դաստիարակության կատարյալ սիստեմը, -Վենտցելի տեսակետով, -այնպիսի մի սիստեմ ե, վորտեղ «յերեխան և դաստիարակը կազմում են փոքրիկ ու ինտիմ մի հասարակություն, վորն այնքան ավելի կատարյալ, այնքան ավելի բարձր ե, վորքան ավելի յե իր ձևով մուսենում հավասար հիմունքներով կատարվող միացման տիպին։ Այդ յերեկու տարրերից վոչ մեկը չպետք ե յենթարկվի մյուսին -վո՞չ յերեխան դաստիարակին, վոչ ել դաստիարակը յերեխային»։

Զարդացնելով «ազատ» դաստիարակության իր իդեան, Վենտցելը յերկորդական նշանակություն եր տալիս դպրոցի հանրակրթական խնդիրներին։ Չպետք ե, -ասում եր նա, -չափազանցել դրադիտության և գրքերի դերը. դիմավորը յերեխային կյանքի, բնության, մարդկանց հետ ակտիվ շփման մեջ գնելն ե. գիրքը լոկ լրացում կհանդիսանա այն գիտելիքներին, վոր յերեխան կստանա կյանքի անմիջական ըմբռնման պրոցեսում։

Յերեխայի դաստիարակման պրոցեսում Վենտցելը շատ մեծ նշանակություն եր տալիս շրջապատող միջավայրին։ Այդ միջավայրը քննելով իդեալիստական տեսակետով, Վենտցելը դրում եր. «Սոցիալական կապերից, սոցիալական շփումից դուրս անեատը գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ»։

«Ազատ» դաստիարակության թեորիան ուսուական մանկավարժության մեջ իր ժամանակին մանր-բուրժուական ինտելիգենցիայի յուրատեսակ բողոքն եր դաստիարակության «պետական»

գողմատիկական, բանավոր (Словесный) սիստեմի դեմ, դպրոցի վրա ցարական կառավարության գործ զրած ձնչման դեմ, հատկապես 1908-1915 թ.թ. շրջանում: Յեվլիովին հասկանալիք յէ, վոր հին դպրոցի և նրա դաստիարակության հասցած սիստեմի, անդիք անելու, Փորմալիզմի, «պետական» ռեժիմի և մյուս բոլոր թերությունների քննադատությունն այն ժամանակ վորոշ իմաստով ռադիկալ եր, դեպի իր կողմը զրավելով շատերը նրանցից, ովքեր պայքարում եյին այդ ցարական դպրոցի դեմ: Կապիտալիզմի պայմաններում ճիշտ այդպես ռադիկալ և հանդիսանում դաստիարակության սիստեմի նաև այն քննադատությունը, վորը յելում և ժամանակակից մանր-բուրժուական մանկավարժներից (Դյուտ, Պարկէերս և ուրիշներ) կապիտալիստական յերկիրների սիստեմատիկական, բանավոր դպրոցի վերաբերմամբ:

Հարկավոր ե, սակայն, մատնանշել, վոր հին դպրոցի քննադատությունը, յելնելով մանր-բուրժուական մանկավարժներից, կիրառվում եր սխալ գիրքերից: Զիսուելով արդեն այն մասին, վոր յերեխայի «ազատ» դաստիարակության վերաբերյալ նրանց դասողությունների հիմքում գտնվում եր իդեալիստական կոնցեպցիա, նրանք գործնականում չեյին բաց անում և չեյին փորձում բաց անել դաստիարակության բուրժուական սիստեմի դասակարգային արմատները: Միանգամայն սխալ եր նաև «ռադիկալացող» մանր-բուրժուական մանկավարժների վորձը ամբողջովին ժխտելու դպրոցի և ուսուցչի դերը անող սերնդի դաստիարակման գործում:

Քննադատելով հին դպրոցի հիմնական թերությունները, դեն նետելով այն ամենն, ինչ հակասում է դաստիարակության մեր սկզբունքներին, մենք պետք ե գրա հետ միասին հին դպրոցից վերցնենք այն, ինչ լավ ե այնուղ, դաստիարակության նոր սիստեմ ստեղծելու համար: Վոչ թե ամբողջովին ժխտել անցյալի ժառանգությունը այլ այն քննադատորեն յուրացնել դաստիարակության սեփական, խորհրդային սիստեմ ստեղծելու համար—այդպիսին ե մեր գիրքը: Ընկեր լենինը կոմյերիտմիության III համառուսաստանյան համագումարում մատնանշել ե. «Թեսու ե կարողանալ տարբերել, թե ի՞նչն եր հին դպրոցում վատ և ի՞նչն եր ոգտակար մեզ համար, պետք ե կարողանալ նրանից ընտրել այն, ինչ անհրաժեշտ ե կունունիքի համար»:

Դպրոցի մահացման «թերիայի» ներկայացուցիչները, անքրնադատորեն ընդունելով Արևմուտքի և Ամերիկայի «ռադիկա-

լացող» մանր-բուրժուական մանկավարժների հայացքներն, ըստ եյության մոռանում եյին գլխավորը, այն, վոր բուրժուազիայի արքապետությունը տապալելուց և մեր յերկրում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելուց հետո, արմատապես փոխվել ե դաստիարակության ամբողջ սիստեմը, վիտավել են դպրոցի գերն ու խնդիրները և նրա զարգացման ուղիները: Փոխանակ ամրացնելու խորհրդային գպրոցը, վորպես կարևորագույն մի միջոց աճող սերնդի դաստիարակության սիստեմում, վոխանակ ուժեղացնելու ուսուցչի դերը և բարձրացնելու գպրոցի աշխատանքի վորակը, այդ «թերիայի» ներկայացուցիչները կանդնում եյին անցյալի մանկավարժական ժառանգության ամբողջովին ժխտելու ճանապարհի վրա, մեր խորհրդային գպրոցն ուղղակի խորտակելու և ուսուցչի դերը նսեմացնելու ճանապարհի վրա:

Իսկապես ասած, ի՞նչ եյին քարոզում Շուլգինը, կրուպենինան և նրանց «գինակիցները» գպրոցի վերաբերմամբ:

«Այն դպրոցից,—ասում եյին նրանք,—ուր 5-6 ժամ են անցկացնում, դեպի նոր, ինքնատիպ դպրոցն է շարժվում կյանքը: Խսկ դա կինոն ե, թերթը, գրադարանը, ուղիոն և աշխատանքը, շինարարությունը և պայքարը»:

Հակառակ լենինյան ուսմունքի և կուսակցության ծրագրի՝ դպրոցի վերաբերյալ ուղղակի ցուցումներին, Շուլգինը պնդում էր, թե՝ յերեխան դաստիարակություն և «վո՛չ դպրոցում, վո՛չ մանկատանը, վո՛չ ել ֆիմիական լաբորատորիայի սրվակում: Վո՛չ: Նրան մեծացնում է ֆաբրիկան, գործարանը, գյուղատնտեսականը, դաստիարակային պայքարը... Յեվ նրան դաստիարակում ե վոչ թե պատյան հագած, գործած քասակ ծածկած ուսուցիչը, նրան դաստիարակում են վող կարգերը»:

Շուլգինի այս խոսքերի մեջ կա խորհրդային դպրոցի և ուսուցչի խնդիրների բացահայտ անհամարգողություն, դպրոցի և ուսուցչի ուղղակի ժխտում, հետևաբար դաստիարակության մեր վողջ խորհրդային սիստեմի ամենակողիտ խեղաթյուրում:

Այս հակալենինյան հայացքները դպրոցի, յերեխաների դաստիարակության մասին իրենց ցայտուն արտահայտությունը զտան խորհրդային մանկավարժության խնդիրների և բովանդակության մեկնաբանման մեջ:

«Մանկավարժությունը,— զրում եր Շուլգինը,— ուսուցման որենիներն ուսումնական գիտությունից զարգանալով դաստիարակության մարդու մեկանական որենիները, մերողները, կազ-

մակերպումն ուսումնասիրող գիտություն։ Հատկապիս ուսուցման համար ստեղծված հաստատություններում ընթացող «մանկավարժական պրոցես» ուսումնասիրող գիտությունից նա կդառնա նոր մարդու ձևավորման տեսանկյունով վորզ սոցիալիստական միջավայրը կազմակերպող գիտություն։

Այսպիսով, Շուլդինի տեսակետով խորհրդային մանկավարժությունը պրոլետարիատի դիկտատուրայի եպոխայում ստեղծված հատուկ գիտություն չե աճող սերնդի դաստիարակման մասին։ Ամենաքին վո՞չ։ Այդպիսի գիտությունը, վորն ուսումնասիրում ե «դպրոցի մանկավարժական պրոցեսը», արհամարաբար դեն ե շպրտում Շուլդինը։ Նա կամենում ե ստեղծել «նոր մարդու ձևավորման տեսանկյունով վողջ սոցիալական միջավայրը կազմակերպող» իր հատուկ մանկավարժությունը։ Վճռական պողա ընդունելով, Շուլդինը հայտարարում է. «Մենք առաջկա պես պնդում ենք դպրոցական մանկավարժության մասին և չենք հասկանում այն, վոր նրա տեսակարար կշիռն արդեն այն չե, վոր դաստիարակության պրոցեսն ավելի լայն ու ավելի խորն ե, հետեւաբար մանկավարժության խնդիրներն ամենաքին չեն հանդում ինչ-վոր դպրոցական բանի»...։ «... դաստիարակում են վոչ միայն ուսուցիչներն ու քերերը, այլև կուսակցությունը, խորհուրդները, պրոֆմիությունները և դաստիարակում են վոչ թե դպրոցներում, այլ կյանքում ... Բայց յեթ այդ այդպիս ե, ապա պետք ե մտածել այն մասին, վոր այդ դաստիարակչական պրոցեսն ավելի արագ, ավելի պլանաշափ, ավելի լավ ընթանա, վոր նա ավելի լավ եֆեկտ տա, իսկ դրա համար հարկավոր ե մերոդիկայի մասին մտածել։ Դա պետք ե լինի մանկավարժությունը ...» Բայց վո՞չ դպրոցական, այլ այն նոր մանկավարժությունը, վոր մենք դեռ պիտի ստեղծենք, բայց այն պետք ե ստեղծել»...։ Այդպիս ե անում անցման եպոնական մանկավարժությունը։

Իսկ անցման եպոնական մանկավարժությունը Շուլդինի հասկացողությամբ հենց պրոլետարիատի դիկտատուրայի մանկավարժությունն ե, կուսակցության, խորհուրդների, պրոֆմիությունների մանկավարժությունը և այլն։ Յեվ քանի վոր դաստիարակում են կուսակցությունը, խորհուրդները, պրոֆմիությունները և դաստիարակում են վոչ թե դպրոցներում, այլ կյանքում, նշանակում ե պետք ե միայն բարելավել նրանց դաստիարակչական աշխատանքը։ Իսկ այդ աշխատանքի բարելավումը, դատում ե

Շուլդինը, դա հատուկ մանկավարժական գործ ե։ «Դա մերն ե, հատկապիս մերը»— հայտարարում ե Շուլդինը։

Պարզ չե՞, միթե, վոր «կուսակցության մանկավարժության» «խորհուրդների մանկավարժության», «պրոֆմիությունների մանկավարժության», «գործարանային միջավայրի մանկավարժության» և այլնի վերաբերյալ այդ շաղակրատության հետեւութագնված եր խորհրդային գպրոցը խորտակելու, խորհրդային ուսուցչի դերն ի չիք դարձնելու ուղղակի փորձը։

Շուլդինին կրնում եր Կրուպենինան։ Նա գրում եր. «Մտնկավարժության ուսումնասիրության առարկան պետք ե դառնա մարդու սոցիալական ձևալորման վողջ սոցիալական միջավայրը կազմակերպող» իր հատուկ մանկավարժությունը։ Վճռական պողա ընդունելով, Շուլդինը հայտարարում է. «Մենք առաջկապես պնդում ենք դպրոցական մանկավարժության մասին և չենք դպրոցական պահանջման մերում, այն նա ծավալվում ե տվյալ կոնկրետ սրատմական եպոնայի և տվյալ դասակարգային միջավայրի պայմաններում, այդ բնորոշող բոլոր գործոնների և այն որինաչափությունների հետագառարությունը, վորոնց նա յենքարկված ե»։

Այսպես, դպրոցի մահացման հակադիտական, տգետ «թեորիայի» ներկայացուցիչները գեղի ձախ դնալով, յեկան գեղի աջ, գեղի քաղաքականության մենշևիկյան միաբերումը մանկավարժության հետ։

Այսպես, դպրոցի մահացման հակադիտական տգետ թեորիայի ներկայացուցիչները փորձում եյին լիկվիդացիայի յենթարկել խորհրդային մանկավարժությունը և ուսուցչին, խորհրդային մանկավարժության բովանդակությունը շաղախել «շրջադատող միջավայրի միջոցով յերեխաններին դաստիարակելու» վերաբերյալ առարկայական, վերացական դատողությունների մեջ։

Մեր ասածներից դժվար չե նկատել, վոր նրանց ամբողջ մեթոդովիայի հիմքում զրված եր դաստիարակության կուսակցականության սկզբունքների լիակատար անտեսումը, քերդիայի և պրակտիկայի միասնության մաքսուլենինյան ուսմունքի խեղաքարությը, հրաժարումն կուսակցության դեկապար դաստիարակության գործում, խոնարհումը տարերայնության առաջ, իմբնակումն ապավիմելը, մենշևիզմի դիրքերը սայրաթելը։

Իսկ լուսժողկոմատները, և առաջին հերթին ՌՍՖՌ լուսժողկոմատը, վոչ միայն չեյին պայքարում մարքս-լենինյան ուսումնաբին թշնամի այդ հակադիտական հայացքների դեմ, այլև, ընդհակառակը, դպրոցի մահացման «թեորիան» դիտելով իրեւ խորհրդային մանկավարժության նվաճումների «վերջին խոսք»,

իրենց հեղինակությամբ ամրացնում ելին այդ հիմար, առեն
«թեորիայի» տարածումը յերկրում, տառացիորեն այն կիրառե-
լով դպրոցական աշխատանքի բոլոր բաժինների վերաբերմամբ:
Դպրոցական աշխատանքի ինչպիսի ճյուղ եւ վերցնելու լինենք, —
մինի դա խորհրդային դպրոցի խնդիրների և դպրոցում ուսուցչի
ունեցած դերի ընորոշումը, ուսումնական ծրագիրը, դասադրքե-
րըն ու դասավանդման մեթոդները, ուսումնական աշխատանքի
կազմակերպումը և դպրոցական ոեժիմի սահմանումը, դպրոցի
դաստիարակչական աշխատանքը և անհրաժեշտ ունակություն-
ների պատվաստումը յերեխաներին, կարգապահության ամրա-
ցումը դպրոցում և այլն, —ամենուրեք մենք տեսնում ե-
նինք այդ «թեորիայի» տիրապետող ազդեցությունը:

Դասավանդման «կոմպլեքսի» միջոցները կազմում են գիտությունների վլոչնչացնում ելին ուսումնական ծրագիրը և դաստիարակությունը, յերեխաներին դարձնում եւ հիմունքների ուսումնասիրությունը, յերեխաներին դարձնում եւ յին անդրագետ, իսկ ուսուցման և դաստիարակման ամբողջ գործը գործոցում դարձնում ելին ուստի հումքի հավաքում, ծանու- ծը դպրոցում գործում ելին այլն և այլն: «Պրոյեկտների մեթոդի» միջո- ցագրերի ցրում և այլն և այլն: «Ծանությունները մեթոդի» միջո- ցով կուսաժողկոմատները «մաշացնում ելին» դասարանները, ցով՝ կուսաժողկոմատները «մաշացնում էլեկտրական ձև, դասագրքերը, դասա- դասը՝ վլորպես ուսուցման հիմնական ձև, դասագրքերը, դասա- ցուցակները և այլն, մի խոսքով՝ դպրոցական ուսուցման վողջ սիստեմը: «Աշխատանքի սիստեմը դպրոցում, — գործում եր Կրու- պենինան, — յնքարկված ե ... ուսուցմանը, իսկ այն ամենն, ինչ նոր ե, դուրս ե ժայռում, իրեն տեղ ե նվաճում հակառակ սիստեմին»:

«Դասագիրքն անցնում է անցյալի դիրքը», — դատում է յեղագործի մահացման «տեսաբանները»։ Անցյալի դիրքին են գնում, նրանց տեսակետով, նաև դպրոցականների գրության, մաթեմատիկայի և այլ հանրակրթական առարկաների ունակությունները։ «Այդ ունակությունները, — դատում է Շուլցինը, — դպրոցականների վերջին ապաստարանն են... Ունակությունների համար դպրոցի կարիք չի լինի»։

մարդաբոցի կարիք չլի լիւն»:
Իսկ ուսուցիչը: Ուսուցիչն ել կմահանա, — հայտարարում
էլին «ձախերը»: Ուսուցիչը «պատյանի մարդ» ե, «հիմարի թա-
ռակ», դրա համար ել նրան չի կարելի վստահել դաստիարա-
կությանը գոպոցում:

Համեկ(բ)կ Կենտրոնական Կոմիտեն հինգ տարվ ուղարկ
ռազ, 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումով մերկացնելով դըպ-

բոցի մահացման ոպորտունիստական «թեորիան», նշեց, վոր այդ «թեորիան» վոչ մի առնչություն չունի դաստիարակության մարքս-լենինյան ուսմունքի հետ, վոր այդ «թեորիան» և նրա գործնական կիրառումը «փաստորեն տանում ելին դեպի դպրոցի խորտակումը»:

Համկ(բ)կ կենտրոնական կոմիտեն 1931 թվի սեպտեմբերի 5-ի իր փորչումով վերջ դրեց այդ հիմար, հակադիտական, տղետ «թերթայի» տարածմանը յերկրում։ Այն ժամանակ եւ Համկ(բ)կ կենտրոնական կոմիտեն պարտավորեցրեց դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատներին «անմիջապես կազմակերպել ծրագրերի գիտական-մարքսիտական մշակումը, նըրանց մեջ ապահովելով սխատեմադրված գիտելիքների նշույլուրվագծված շրջանակ (մայրենի լեզու, մարեմատիկա, Փիզիկա, ֆիմիա, աշխարհագրուր-յուն, պատմություն)» ինչպես նաև «վճռական պայքար ծավալել քերեամիտ մերողական պրոյեկտորականության դեմ, նախապես գործնականում չստուգված մերողները մասսայական մասշտաբով տարածելու դեմ»։

Մի տարի հետո (1932 թվի ոկտոբերի 25-ին) ՀամԿ(բ)կ կենտրոնական կոմիտեն, ի պարզացումն սեպտեմբերյան վորոշման, վորոշումը ընդունեց «Տարրական և միջնակարգ դպրոցի ռեսումական ծրագրելը ու ուժիմի մասին»:

Այս վորոշման մեջ Համեկ(բ)կ կենարոնական Կոմիտեն առաջարկում եր լուսժողկոմատներին վերանայել ուսումնական ծրագըրերը, սահմանել հաստատում ուսումնական ուժիմ և վերացնել պարապմունքների այսպիս կոչված «Լաբորատոր-բրիդադաշին» մեթոդը, վորը յեկել եր փոխարինելու «Արոյեկտոների մեթոդին» և մի շարք դպրոցներում ունիվերսալ եր գարձել:

ՀամԿ(բ)կ կենտրոնական կոմիտեն նշեց, վոր «տարրական և միջնակարգ պարզում ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը պիտի և հանդիսանա դասը՝ սովորողների տվյալ խմբի հետ՝ պարապմութենք վորոշակի դասացուցակով և սովորողների հաստատուն կազմով»: «Դասառուն պարտավոր և սիստեմատիկ կերպով, հետևողականորեն շարադրել իր դասավանդած դիսցիպլինը, յերեխաններին ամեն կերպ սովորեցնելով աշխատելու դասագրքի և գրքի վրա, զանազան տեսակի ինֆորմացույն գրավոր աշխատանքներ կատարելու և կարինեում, լարութառիայում աշխատելու»:

1933 թվի փետրվարի 13-ի վորոշումով Համկ(բ)կ կենտրո-

նական կոմիտեն առաջարկեց լուսժողկոմատներին վերջ տառ այսպես կոչված «ցագուցրիվ դասագրքին» (դասագրքերը մինչեւ այդ հրապարակվում եյին կես տարվա, քառորդ տարվա համար, ըստ սեղոնների, առանձին թերթերի վրա և այլն): Բնդմին ապահովելով դպրոցները կայուն դասադրքերով:

ԽՍՀՄ ժողովագիրքի և Համկ(բ)կ ԿԿ-ի 1934 թվի մայիս-յան վորոշումներով սահմանվեց դպրոցի հատուկ կազմակերպական կառուցվածք և վերացվեց այն խառնաշփությունը, վորը դոյություն ուներ մինչև այդ (գործարանային յոթնամյակներ, տամանամյակներ, գյուղյերիտ դպրոցներ, աստիճաններ, կոնցենտրանտներ և այլն): Այն ժամանակ ել վերացվեցին խեղաթյուրումները պատմության և աշխարհագրության դասավանդման բնագավառում:

Դպրոցի մասին հետագայում ընդունած իրենց վորոշումների, Հատկապես 1935 թվի սեպտեմբերի 3-ի վորոշման մեջ կուսակցությունը և կառավարությունը բազմից նախազգուշացրին լուսժողովաններին, վոր դպրոցի մահացման «թերթիան» տակալին մինչև վերջը չի վերացված և ընդանառություն և կատարում ժողովրդական կրթության աշխատղների նշանակալի մի մասի մեջ: Այդ մասնավորապես դրսերգում եր այն բանում, վոր ժողովրդական կրթության որդանները թերապնահստում եյին ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման և դպրոցի ամբացման հարցերը, նրանք բավարար չափով չեյին դրազլում դպրոցի «պրոդայիկ մանրունքներով» և փոխանակ վոչնչացնելու ուսումնական աշխատանքի նորմալ ընթացքը խանդարելու ամեն տեսակ փորձերը, իրենք եյին կանոնում այդ ճանապարհի վրա, կազմալուծում եյին մտցնում դպրոցի աշխատանքում, ամեն տարի փոխում եյին ուսումնական պլանները, ծրագրերը, դասադրքերը և այլն:

Ուսումնական պլանների, ծրագրերի և դասադրքերի ամենամյա փոխությունն այն պատճառով եր տեղի ունենում, վոր լուսժողովանների աշխատանները չեյին վերաբերվում Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեյի բոլոր նախազգուշացումներին և մոռանում եյին Լենինի ու Ստալինի ցուցումներն այն վտանգի մասին, վոր ունի բոլշևիկի համար անհոգ վերաբերմունքը ներկի թերթիան և թերթետիկ աշխատանքը: «Մանկավարժական դիտության և պրակտիկայի զեկավարման հանդեպ լուսժողովանների ունեցած արհամարհանքով միայն կարելի յե բացատրել այն փաստը, վոր կուսակցության կողմէց դատապարտված դպրոցի մահացման հակադիտական և տղետ «թերթիան» շարունակում եր մինչև վերջներս ընդունվել լուսժողովաններում և նրա աղեպուները թերուս մանկաբանների ձևով տարածվում եյին ավելի ու ավելի լայն մասշտաբներով» (Համկ(բ)կ ԿԿ-ի 1936 թվի հուլիսի 4-ի «Լուսժողովանների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին» վորոշումից):

Կարիք չկա առելու, վոր այս ամենից տուժում եյին առաջն հերթին դպրոցը և աճող սերնդի ուսման ու դաստիարակման ամբողջ դորձը: Հանրահայտ ե, թե դպրոցական աշխատանքներն ինչ-

քան սուր կերպով եյին զգում ուսումնական պլանների, ծրագրերի և դասադրքերի ամեն տարվա վորփոխությունները:

Նոր վաստերը ցույց են տալիս, վոր լուսժողովանները բոլոր անհրաժեշտ յեղակացությունները չհանեցին դպրոցի մասին կուսակցության և կառավարության վորոշումներից, ընդհակառակը, չարունակեցին դպրոցում տարածել աշխատանքի ամեն տեսակ հակադիտական մեթոդներ, վորոնք աղաղակող հակասության մեջ եյին գանվում դաստիարակության վողջ խորհրդային սիստեմի հետ: Առանձնապես ցայտուն կերպով այդ գրսերով այսպիս ցաջանապես կոչված «մանկաբանական» խեղաթյուրումների մեջ: Պահանջվեց Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեյի նոր վճռական միջամտությունը՝ դպրաբեցնելու և վերացնելու համար ամենակողիս խեղաթյուրումները դպրոցի զեկավարման վործում:

Իսկ ինչո՞վ կարելի յե բացատրել, վոր չնայած կուսակցության ու կառավարության բազմից արած նախազգուշացումներին, լուսժողովանները մինչև այժմ չեն կարողացել հաղթահարել դպրոցի մահացման հակալենինյան «թերթիայի» աղղեցությունը, ընդհակառակն, նորից ամենակողիս խեղաթյուրումներ են թույլ տվել դպրոցի զեկավարման վործում:

Այդ բացատրվում ե զվարապես նրանով, վոր լուսժողովանների աշխատանները թեթևամտորեն եյին վերաբերվում Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեյի բոլոր նախազգուշացումներին և մոռանում եյին Լենինի ու Ստալինի ցուցումներն այն վտանգի մասին, վոր ունի բոլշևիկի համար անհոգ վերաբերմունքը ներկի թերթիան և թերթետիկ աշխատանքը: «Մանկավարժական դիտության և պրակտիկայի զեկավարման հանդեպ լուսժողովանների ունեցած արհամարհանքով միայն կարելի յե բացատրել այն փաստը, վոր կուսակցության կողմէց դատապարտված դպրոցի մահացման հակադիտական և տղետ «թերթիան» շարունակում եր մինչև վերջներս ընդունվել լուսժողովաններում և նրա աղեպուները թերուս մանկաբանների ձևով տարածվում եյին ավելի ու ավելի լայն մասշտաբներով» (Համկ(բ)կ ԿԿ-ի 1936 թվի հուլիսի 4-ի «Լուսժողովանների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին» վորոշումից):

Մանկաբանական խեղաթյուրումները դպրոցի զեկավարման գործում առանձնապես ցայտուն կերպով զրսերվեցին, ինչպես ասված և Համկ(բ)կ ԿԿ-ի 1936 թ. հուլիսի 4-ի վորոշման մեջ, «այն բանում, վոր դպրոցներում մասսայարար տարածվում եյին

այսպես կոչված «մանկաբանները» և նրանց եյին վստահում դպրոցի ղեկավարման ու սովորողների դաստիարակման կարևորագույն փունկցիաները»:

Հուսմովատներն իրենց կարգադրություններով, վորոնք այժմ դատապարտված են կուսակցության կողմից, մանկաբան-ներին ելին վստահում դասարանների կոմսլեկտավորման և դըպ-րոցական ռեժիմի կազմակերպման պարտականությունները, վող ուսումնական պլոցեսին ուղղություն տալը «Գպրոցի և մանկա-վարժի մանկաբանացման տեսակետից», դպրոցականների անա-ռաջադիմության պատճառների վորոշելը, քաղաքական հայացք-ների վերահսկողությունը և այլն:

Դպրոցներում մանկավարժական կազմին զսողընթաց հասուն՝
«մասնագետների»—մանկաբանների այլպիսի մասսայական տա-
րածումը, մանկաբաններ, վորոնք ընդունին ունեցին «իրենց զե-
կավար կենտրոնները զանազան մանկաբանական կարինեանների»,
մարզային լաբորատորիանների և գիտա-հետազոտական ինստի-
տուտների ձևով», —Հանգում եր այն բանին, վոր դպրոցի ամ-
բողջ ուսումնական ու դաստիարակչական աշխատանքը մասնատ-
վում եր մանկավարժների և մանկաբանների միջև, իսկ վերջին
հաշվով նսեմացվում ելին ուսուցչի գերն ու պատասխանատվու-
թյունը դպրոցի ուսումնական և դաստիարակչական աշխատան-
քի համար:

Ի՞նչ ել ասեն այժմ լուսժողկոմատների աշխատողները, բայց
միանգամայն ակնհայտ ե, վոր միայն նրանց լիակատար հավա-
նությամբ սրանից մի քանի տարի առաջ դպրոցում այնպիսի
դրություն եր ստեղծվել, յերբ ուսուցիչը դրավվում եր վոչ թէ
յերեխաների ուսուցումով և գաստիարակությամբ, այլ՝ ամբողջ
յերկրի եկզումիկայի, ձեռնարկության արդիքինապլանի, կոլանտե-
սության և նման այլ բաների ուսումնասիրությամբ: Դրա հե-
տևանքով կոնկրետ աշակերտն իր հետաքրքրություններով ու ա-
ռանձնահատկություններով ուսուցչի «ձեռքից դուրս եր ընկ-
նում», նրան «հավաքում եյին» մանկաբանները և հայտարարում
յերեխայի ուսումնասիրության ու դաստիարակության իրենց մո-
նուպնիան: Այդ անհեթեթ դրությունն արդարացվում եր ամեն
տեսակ «գլխական» փաստարկներով: Մանկաբանները—դպրոցի
մահացման «թեորիայի» այլ աղեկատները—ուսուցիչն ասում
եյին, — ու գործը չե ուսումնասիրել քո աշակերտներին, ու գոր-
ծը չե պայքարել առանձին դպրոցականների անառաջադիմության

դեմ, քործը չե ճիշտ ուժիմ զլուս բերել դպրոցում, քո գործը չե ուղղել և դաստիարակել այն յերեխաներին, վորոնք չեն աեղավորվում դպրոցական ուժիմի ջրջանակների մեջ: Այս ամենը մանկաբանի գործն է: Այսպես, լուսժողկոմատների լիակատար հավանությամբ, ուսուցչի և աշակերտի միջև խախտված եր անհավանական կապը, նրանց միջև բարձրացել եր մանկաբանը, իսկ միջական կապը, ուսուցչի դերը յերեխաների ուսուցման և դաստիարակման կառուրագույն գործում իշխի եր գարձված:

Համկ(ր)կ կենտրոնական կոմիտեն ամենայն վճռականությամբ դատապարտեց մանկաբանական խեղաթյուրումները լուսաժամկոմաների սիստեմում։ Համկ(ր)կ կենտրոնական կոմիտեն 1936 թվի հուլիսի 4-ի իր վորոշման մեջ նշեց, վոր այլ խեղաթյուրումները կարող են տեղի ունենալ միմիայն այն տատանող, վոր «լուսժողովաները մինչև այժմ հեռու յեն կանգնած դարձի դեկավարման և խորհրդային մասնակալարժական գիտության զարգացման արմատական ու կենսական խնդիրներից»։

Համեկ(բ)կ կենտրոնական կոմիտեյի վորոշումն ընդդժում
մանկալարժության՝ վորպես դիտության՝ վիթխարի գերը, ինչ-
պես նաև այն կարևորագույն նշանակությունը, վորպիսին ունի
աճող սերնդի ուսուցման և լենինյան դաստիարակության հա-
մար մանկալարժական վարպետության տիրապետումն ուսուցչու-
թյան կողմէից :

Այսինքն դպրոցի մահացման հակագիտական, տղետ «թեորիա-
յի» և մանկաբանական խեղաթյուրումների բացասական ազդե-
ցությունը շատ խիստ անդրադարձավ նաև ուսուցիչների պատ-
րաստման և մանկավարժության՝ վորապես գիտության՝ կարևո-
րագույն պրոբլեմների մշակման ամբողջ գործի վրա:

Լուսժողկոմատները վոչ միայն հովանավորում ու ծածկում
ելին մանկաբանների ամենալինասակար աշխատանքը դպրոցում :
Նրանք խելք արին նույնիսկ այդ կեղծ-գիտությունը՝ մանկաբա-
նությունը հանել զլիսավորող մանկավարժական դիտության առ-
տիճանի : Նրանք ուժեղ թափով «մանկաբանացնում ելին» ուսու-
ցիչների ամբողջ պատրաստումը, մանկաբանության «տեսաբան-
ների» անկոնարու ոգտագործման համար ամբիոններ տրամադրե-
լով մանկավարժական ուսումնական հիմնարկներում :

Մանկավարժությունը վորպես զիտություն կարող է հաջո-
ղությամբ զարգանալ միայն այն դեպքում, յերբ նա կանդնելով
մարքութենինյան հիմքի վրա, զինվելով դպրոցի մասին կուսակ-

ցության ու կառավարության ընդունած վորոշումներով, հանրակողմանիրեն և ուշի ուշով ուսումնասիրի մանկավարժական պրոցեսն ու լավագույն ուսուցիչների աշխատանքը, քննադատաբար յուրացնի անցյալի մանկավարժական ժառանգությունը և ուշադրությամբ հետեւ ժամանակակից արտասահմանյան մանկավարժությանը: Այս հիմնական պայմանը հարկ յեղածին պես չի կատարվել:

Համկ(բ)Կ ԿԿ-ի 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումից հետո անցած հինգ տարում, մի վորոշում, վորի մեջ առանձնապես շեշտված եր դպրոցի զործնական փորձն ուսումնասիրելու և ընդհանրացնելու անհրաժեշտությունը, այդ բնագավառում շատ քիչ բան է արված: Լուսժողկոմատները մինչև այժմ ել հարկ յեղած աշխատանքը չեն ծավալել դպրոցի փորձն ընդհանրացնելու ուղղությամբ, չնայած նրան, վոր խորհրդային դպրոցն արդեն գործնական մեծ փորձ է կուտակել:

Խորհրդային մանկավարժության կարևորագույն հարցերը, ինչպես, որինակ, դիտելիքների և նրանց ամրացման պրոբլեմը, կամքի և խարակտերի դաստիարակումը, հիշողության զարգացումը, դասի կազմակերպումը, դասավանդման մեթոդները, սովորողների դաստիարակությունը և շատ ուրիշ հարցեր, — համառորեն պահանջում են իրենց մշակումն ու լուծումը: Սակայն այդ ուղղությամբ համապատասխան աշխատանք չի տարիում: Յեկ ի՞նչպես կարող են արժեքավոր աշխատանքներ ստեղծվել այդ հարցերի շուրջը, յերբ շատ «տեսաբաններ» խուլ պատճենով կտրվել են դպրոցից, կապված չեն նրա հետ, չեն ուսումնասիրում, նույնիսկ չեն փորձում ընդհանրացնել և դիտականորեն իմաստալորել խորհրդային դպրոցի լավագույն մանկավարժների աշխատանքի լավ նմուշները:

Մանկավարժությունը վորպես դիտություն վերջին տարիներս վոչ միայն առաջ չչարժեց, այլև, վաստարեն զրկված լինելով հիմնականից, այսինքն՝ կենդանի, կոնկրետ յերեխայից և կտրված լինելով մանկավարժական պրակտիկայից, դարձակտվություն, անտարկայական, սխեմատիկ ու վերացական:

Մանկավարժության վերաբերյալ այն վոչ շատ աշխատությունները, վորոնք լույս են տեսել վերջին տարիներս, պարունակում են սկզբունքային մեծ սխաներ, վորոնք հետևանք են այն բանի, վոր թեօրիան զգալի չափով կտրված և յեղել պրակտիկայից: Թերեւս չի պայմանական վորոշում ուղղությունը լույս է տեսական վերաբերյան աշխատանքները, այս աշխատանքները, վայց վոչ մի կոնկրետ դիտելիք և ունակություն չեր ստանում յերեխաների ուսուցման ու դաստիարակման բնագավառում:

Մի կողմից այնքան արհամարհված լինի, վորքան մանկավարժությունը:

Բացառիկ ծանր դրության մեջ ե դտնվում ներկայումս այդ դիտության գասավանդումը մանկավարժական ուսումնական հիմնարկներում: Այս կարևորագույն դիտության դասավանդումից դուրս եր նետված այն ամենն, ինչ վերաբերում ե ուսուցման և դաստիարակության որյեկտին, այսինքն իրեն՝ յերեխային:

Այն անհեթեթ զրությունը, յերբ ապագա մանկավարժները յերեխաների ուսուցման և դաստիարակության հարցերն ուսումնասիրում ելին՝ առանց՝ իրենց տեսադաշտում ունենալու յերեխային, լուսժողկոմատների աջակցությունն եր գտնում մինչև ամենավերջին ժամանակները: Յեկ լիովին հասկանալի յե, վոր մանկավարժության այդպիսի ամլացված կուրս ուսանողներին չեր տալիս և չեր ել կարող տալ վորեւ խելացի ու զգտակար բան:

Մանկավարժության վորպես դիտության դասավանդման գործում յեղած խելաթյուրումների ու մեծ արատների մասին խոսում են շատ փաստեր: Մինչև այժմ մանկավարժության «պրոֆեսորները» վոչ մի կերպ համաձայնության չեն դալի, թե ի՞նչ ե մանկավարժությունը վորպես դիտություն և ի՞նչ կերպ պետք ե այն դասավանդել ուսանողներին: Այսպես, պրոֆ. Բլոնսկին «Педалогическое образование» ժուրնալում նշել ե մանկավարժության կուրսի մոտավորապես այսպիսի թեմաներ: «Արվեստի դաստիարակչական արժեքը», կամ «Գիործի տեղը դիտական կըրթության մեջ» և այլն: Միանդամայն ակնհայտ ե, վոր այսպիսի ծրագրային «պրոֆեսոնալիզմը» մանկավարժական դպրոցը քաշում ելին դեպի հետ, դեպի այն ժամանակները, յերբ ուսանողը սովորում եր ամեն ուղած բան, բայց վոչ մի կոնկրետ դիտելիք և ունակություն չեր ստանում յերեխաների ուսուցման ու դաստիարակման բնագավառում:

Ուսուցչի մանկավարժական պատրաստման սխմեմում շատ կարենը տեղ ե գրակում մանկավարժության պատմության կուրսը: Դժբախտաբար, այդ կուրսը նույնպես մոռացված դրության մեջ եր գտնվում: Մի ժամանակ նա նույնիսկ հանված եր մանկավարժական բուհերի ուսումնական պլաններից: Իսկ յերբ այդ կուրսը վերականգնվեց, նրա ավանդումը հանդեց մերկապարանց սոցիոլոգիզացիայի և բուրժուական մանկավարժների դաստիարակային եյության շատ վատ վատ «մերկացման»:

Այս կուրսի դասավանդումը կաղմակերպելու գործում ման-

կալարժական ուսումնական հիմնարկները լուսժողկոմատներից
վոչ մի ոգնություն չելին ստանում : Անցյալի հարուստ մանկա-
վարժական ժառանգությունը մեր մանկավարժության կողմից չէր
ոգտագործվում : Անցյալի մանկավարժական ժառանգության լա-
վագույն ներկայացուցիչների աշխատությունները շատ տարինե-
րի ընթացքում լուսժողկոմատների կողմից նույնիսկ չելին վերա-
հրատարակվում :

Ծայլր աստիճանին աղքասու և ընդհանուր առմամբ արատավոր
ե մանկավարժության պատմության շուրջը յեղած դրականու-
թյունը: Մեզինսկու, Պինկեվիչի և Սվադկովսկու ամենից ավելի՝
տարածված կուրսերն ու քրիստոնատիաները պարունակում են
սկզբունքային շատ սխալներ և տառապում են արտակարգ սխի-
մատիզմով:

Այդ նույն ինստիտուտում անցյալ ուսումնական տարում
կարդացվում եր առանձնահատուկ մի կուրս «Տեխնիկումներում
մեթոդիկա դասավանդելու մեթոդիկան»։ Ահավասիկ այս կուրսի
բաժինները. «Հարց տալու մեթոդիկան», «Հարց տալը շարադրման
պրոցեսում», «Հարց տալը վորոշ բաժնի ավարտված մասի վերա-
բերյալ», «Հարց տալը նոր նյութի շարադրումից առաջ», «կըրկ-
նության տեսակները», «Ընդհանուր կարծիք ստեղծելը» (?) , «քայ-
չթողներ չկատարման վոչ մի դեպք» :

Հուստողի կողմանը իրենց կարկ յեղած վերահսկու-
ղությունը չեն ունեցել դասավանդման դրվածքի նկատմամբ ման-
կավարժական ուսումնական հիմնարկներում։ Հասկանալի յէ,
վոր մանկավարժական կրթության գործն այդ կերպ դնելու դեպ-
քում անհնար եր դպրոցն ապահովել պատրաստված կադրերով՝
վորոնք կատարելապես տիրապետելին մանկավարժական վարպե-
տությանը։ Միայն բոլոր խեղաթյուրումները վճռականորեն հաշ-
թահարելու և մանկավարժական կրթության գործի դեկավարու-
թյունն արմատապես բարելավելու գեպքում հնարանիոր կլինի-

մանկավարժական դիտությունը գուրս բերել այն մոռացված դրությունից, վորի մեջ գտնվում է նա լուսնողիումատների դիտությամբ և ուղղակի աջակցությամբ:

Համկ(բ)կ կենտրոնական կոմիտեն 1936 թվի հուլիսի 4-ի Երևանու շրջանական մեջ կատեղորիկ կերպով առաջարկեց լուսժողկոմատ-
ներին անհապաղ «ամբողջապես վերականգնել մանկավարժու-
թյան և մանկավարժների իրավունքները»: Թե ի՞նչպես կկարո-
ղանան լուսժողկոմատները կատարել Համկ(բ)կ կենտրոնական
կոմիտեի այս ցուցումը, դրանից ե կախված այժմ խորհրդային
գործոցն ամրացնելու և մանկավարժական կրթությունն իր մո-
ռագված դրությունից դուրս բերելու դրդը:

Համկ(ր)կ կենտրոնական կոմիտեն 1936 թվի հուլիսի 4-ի
վրայական մեջ դրա հետ մեկտեղ մատնանշեց, վոր «յերեխու-
ների վերաբերյալ մարքսիստական գիտություն ստեղծել հնարա-
վոր և միայն... այսպես կոչված մանկաբնության հակագիտա-
կան սկզբունքները հաղթահարելու և նրա իդեոլոգիաներին ու պրակ-
տիկներին ամենախիստ ֆինանսության յենթարկելու հողի վրա»:

3. ՄԱՆԿԱԳՈՒՅԹՅԱՆ ԿԵՂՄ-ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Մանկաբանության ծագումն ընկնում է անցյալ դարի յերկուրդ կեսում։ 1882 թվին Գերմանիայում լույս տեսավ Փիլիպ Պողոս Պրեյերի գիրքը «Մանկան հողին» անունով։ Պրեյերը յերկար ժամանակ զբաղվում էր փոքր տարիքի մանուկների ուսումնակրությամբ։ Նրա աշխատությունները բուրժուական գիտնական-ների մեջ մեծ հետաքրքրություն առաջացրին մանուկների ուսումնասիրության նկատմամաբ։ Մեծ ուշադրություն ելին նվիրում մանուկների ուսումնասիրությանը գերմանացի այնպիսի գիտականներ, ինչպես Լայլ, Մերմանը, Գրոսը, Բյուլերը, Շտերնը և ուրիշներ։

Ֆըսնսիայում մանուկների ուսումնասիրությամբ զբաղվում ելին այնպիսի գիտնականներ, ինչպես Տենը, Պերեն, Կոմպեյրեն.

կԵյրան, Բինեն, Անրին, Սիմոնը և ուրիշներ: Անդիսայում՝ Ռու-
ժանեսը, Դրումանդը, Զեմբերլենը, Սելլին և ուրիշներ:

Մանուկների գիտությունը «մանկաբանություն» կոչելու առաջին փորձն արվում է 1893 թվին, յերբ ամերիկացի Հոգեբան Ստենլի Հոլի աշակերտներից մեկը՝ Ուկար Խրիստենը հնարեց (չորեքշաբթի առավոտյան, ինչպես նաև պատմում եր համշտակությամբ) «պեղոլոգիա» (մանկաբանություն) բառը:

Հարկավոր է նկատի ունենալ, վոր մանկաբանությունը բռնը-
ժուական գիտնականները ստեղծեցին բացառապես դաստիարակային
շահերից յեխելով՝ բուրժուական գիտնականները, ստեղծելով այդ
«գիտությունը», ձգուած ելին ապացուցել, վոր բուրժուազիայի
մանուկների մտավոր ընդունակություններն ավելի բարձր են
բանվորների յերեխաների մտավոր ընդունակություններից:

Պետք է նկատել արյատեղ, վոր իրենց «ուժոտական» յեզրակացություններին զուգընթաց նրանք անում են հետեւյալ շատ ուսանելի յեզրափակումը. «յուրաքանչյուրին ցույց տալով նրա խկանան տեղը, մենք կավելացնենք բոլորի տնտեսական բարեկեցուրյանը, և դա կլինի, իհարկե, ամենից ավելի պարզ, բնական և ռացիոնալ միջոցներից մեկը լուծելու, առևվագի մասամբ, մի քանի տաևալի սոցիալական հարցեր, վորոնք այնքան մտքեր են անհանգուացնում և սպառնում ժամանակակից հասարակուրյան ապագային»:

Բուրժուական գիտնականների փորձերը՝ «գիտականորեն» ապացուցելու բուրժուագիտի յերեխանների կարծեցյալ հասուն ոժավագածությունը և շահագործող դասակարգերի գոյության հասունությունը, առանձնագետ ցայտուն կերպով գրաւորում

Էն այսպես կոչված ռասայական թեորիաների մեջ։ Տիրող դասակարգերի տնտեսական, քաղաքական և կուրոռուրական առանձնաշնորհյալ զբությունը բուրժուական հասարակության մեջ ռասայական թեորիաների ներկայացուցիչները բացատրում են այլ դասակարգերի իրակ թե բնական, բիոլոգիական հատկություններով։

Զարմանալի չե, վոր այդ ուստայական թեորիաները ներկայութեանոր էն կիրառվում են Փաշխոտական մանկավարժության մեջ: Գերմանական Փաշխոտները հատուկ հրամանագրով (1930 թ. նոյեմբերի 13-ին) դպրոցներում մտցրին ժառանգականության, ուստայական առողջապահության և «ընտանեկանության» ուսումնականության պարագաների պարագմունքներ:

Այդ նույն գասակարգային նպատակներին որ ժամանակ
ինչպես մատնանշեցինք վերևում, նաև բուրժուական մանկարա-
նությունը, վորի արքատներն ուղղակի կատ ունեն ռասայական
թեորիաների հետ :

«Ժամանակից գիտությունը, — դրում եր բուրժուական ող-
ցիոլոգ, Լայպցիցի համալսարանի պրոֆեսոր Կարլ Լամպրեհմուը, —
«կաևկած չի բողոքում այն բանում, վոր մեկ անհատի զարգացու-
մը թե՛ հոգեսկես և թե՛ Փիզիկայի ընդհանուր գծերով նման են
ցեղի զարգացմանը։ Արանից հետևում է, վոր ցեղի զարգացումը

հասկանալու համար անհրաժեշտ է ոգնության կանչել միակ անհատի զարգացման վերաբերյալ զիտությունները և ընդհակառակն : Առանձնապես հետաքրքիր է յերեխայի նոգեկան զարգացումը : Դա շատ բանում գուգահեռ է ընթանում ժողովուրդների նախապատմական զարգացման եպիխանների հետ» :

Ամերիկացի Հոգեբան Ստենլի Հոլլը գրում եր . «Մանկան վերաբերյալ գիտությունը վոչ մի կլասիֆիկացիայի չի հարմարվում և վորոշ իմաստով իր նմանը չունի, լինելով մասսամբ հոգեբանություն, մասսամբ մարդաբանություն, մասսամբ եւ բժշկականություն և առողջապահություն : Յուրաքանչյուր աստիճանի վրա նա սերտորեն հպվում է կենդանիների բնագդների ուսումնափրությանը և նախնադարյան ժողովուրդների սովորություններին ու հայցքներին :

Այնուհետև Ստենլի Հոլլը պնդում է «...Առանձին յերեխան իր զարգացման ստադիաներում հակիրք կերպով կրկնում և ցեղի պատմությունը» :

Ե՛լ ավելի վորոշակի յև արտահայտվել Ստենլի Հոլլը հետեւյալ դրութիւն մեջ . «Ցեղը և յերեխան միմյանց բանալին են հանդիսանում» :

Մանկաբանություն կոչվող բուրժուական գիտությունն արտասահմանից վոխաղթրվեց նաև նախահեղափոխական Ռուսաստանը, յերբ առաջին անգամ 1904 թվին Պետերբուրգում Մանկաբանական դասընթացներ բացվեցին պրոֆ . Նեչայեվի նախաձեռնությունքը : Նախահեղափոխական Ռուսաստանում մանկաբանության առանձնապես կրակու պրոպագանդիստ եր հանդիսանում պրոֆ . Նեչայեվի ամենամռակի աշակերտներից մեկը՝ պրոֆ . Ռումյանցելը :

Իր «Մանկաբանություն» վերնագրով պոպուլյար բրոշուրում, վորը հրատարակվեց 1910 թվին, պրոֆ . Ռումյանցելը՝ մանկաբանությունը «իրեն խնդիր է առաջադրում հավաքել, սիստեմադրել և ուսումնասիրել այն ամենը, ինչ վերաբերում է յերեխաների կյանքին զանազան տարիքներում, սըկած ծնունդից մինչև դպրոցը : Նրա նախառական եւ յերեխաներին ամեն տեսակետից ուսումնասիրել՝ նրանց բնակորության լիակատար և խորը նախաչողություն ձեռք բերելու համար» : Այս բնորոշումից յերեւմ է մանկաբանությունը վորպես մանկան վերաբերյալ գիտությունների յուրատեսակ «հանրագիտաբան» համկանալու փորձը :

Պրոֆ. Ռումյանցելի սկսած՝ մանկաբանության հիմնավորումը վորպես մանուկների վերաբերյալ հատուկ գիտություն, հետազայում, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությանը հաջորդող շրջանում, ընդարձակեցին և խորացրին մեր խորհրդային մանկաբաններ՝ պրոֆեսորներ Բլոնսկին, Բասովը, Վիգոտսկին, Զալկինդը, Մոլոժավին և ուրիշներ :

Խորհրդային մանկաբանության մեջ տեղ գտան յերեք հիմնական ուղղություններ . 1) «Հոգեբանական» ուղղություն, վորը ներկայացնում եյին գլխավորապես պլոփ . Նեչայեվը, Ն.Ա. Ռիբնեկովը, մասսամբ Բասովը և ուրիշները . 2) Բիոլոգիզատորական ուղղություն, վորը ներկայացնում եյին պլոփ . Բլոնսկին, Արյամովը, Արկենը և ուրիշներ և 3) սոցիալոգիզատորական ուղղություն, վորի ներկայացուցիչները հանդես յեկան Զալկինդը, Մոլոժավին և ուրիշներ :

Հոգեբանական ուղղությունը շարունակում եր հիմնականում պաշտպանել իր նախկին դիրքերը, վորոնք կազմավորվել եյին իդեալիստական հոգեբանության ազգեցության տակ :

Բիոլոգիզատորական ուղղությունը, վորի ցայտուն ներկայացուցիչն եր հանդիսանում պլոփ . Բլոնսկին, իշնում եր այն բանից, թե յերեխայի զարգացման և վարքի մեջ հիմնական մունքն են հանդիսանում բիոլոգիական որինաչափությունները :

Բիոլոգիզատորական ուղղության ներկայացուցիչները՝ մանկաբանության մեջ պնդում եյին, թե յերեխան իր զարգացման ընթացքում կրկնում է մարդկության ամրող պատմությունը մինչև մեր որերը :

Յերեխայի զարգացումը, մանկաբանների այդ խմբի տեսակետով, ներսից ծավալով մի պրոցես է, նա կանխորոշված և ժառանգական գործոններով : Այսպիսով, այդ տեսակետը հայսպես կոչված բիոլոգիստիկական որենքի վրա :

Վերեկում մատնանշված յերկու ուղղությունների ընթացքաբարը» հանդես յեկամ մի ուղղություն, վորն իրեն կոչում էր սոցիալ բիոլոգիական ուղղություն և յուրացրել եր «ուղղականություն» մարքսիստական մանկաբանության վորակումը : Այս ուղղությունն ամենամեծ աշակեցության հանդիպեց ՌՍՖՌ Հ կուսադողկոմատում :

Այս յերեք ուղղություններին միացան շատ ուրիշներ, վորոնք իրաբից տարբերվում եյին լոկ իրենց գործածած տարբեր տերմինուղղիայով :

Անհարժեշտ է, սակայն, մատնանշել, վոր ներկայումս մերկացված կեղծ-գիտության՝ մանկաբանության բոլոր բաղմաթիվ ուղղությունները մեկ ընդհանուր բան ունենին՝ Նրանք անհնադատորեն խօրհրդային մանկավարժության մեջ եյին փոխադրում բուրժուական մանկաբանության սկզբունքները։ Ժամանակակից մանկաբանության տեսական կոնցեպցիան ամբողջապես բուրժուական է, հակամարքսիստական, կոպտորեն վուլգար, կեղծ-գիտական, մեխանիստական։ Պրոֆ. Զալլենդը «Համապատասխանություն» թերթում տպագրած հոգվածում, Համ. Կ(ր)կ կա-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումից հետո հանդեռ դաշտով իր սիստեմերի խոստովանությամբ, դրում եր. «Իրական փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, վոր մենք խայտառակ գերաւթյան մեջ եյինք բուրժուական ուսակցիոն քերիաների ձեռքին։ Յերեխան մեր սեփական «ուսմունքների» մեջ շախմատաբար եր, մերք ներին, մերք պրտաքին, «անհաղթահարելի» «ներգրածությունների», «ստիլուացիայի», «գրգորչերի», «ուժերի» պասսիվ որյեկտ։ Մերք յերեխայի վրա ննշում եյին նակատագրական բիոլոգիական և այլ ուժերը «ներսից» (Բլուսկու կոպիտ բիոգենետիզմն ու կոնստիտուցիոնալիզմը, շտերնականությունը Վիգոնտսկու մոտ), մերք ել նրա վրա ննշեան նակատագրականորեն ննշում եյին անհաղթահարելի ուժերը «դրսից» միջավայրի «նակատագրական» դերն իմ մեկնարանությամբ, վորայիսին յերեխային վերածում եր ուժիշխների մի քանի, բարդ, բայց պասիվ կերպով հակազդող մենենայի։ Բանից դուրս յեկայ, վոր յերեխան իր ակտիվ հետարակությունների բնագավառում նգմիւլ, կապվել եր իմ «նակատագրական» միջավայրով...»

Այսուհետեւ նա հայտարարում է, թե, չնայած մանկաբանության մեջ յեղած զանազան ուղղությունների արտաքին տարբերություններին, նրանց եյտթյունը մեկ է:

«Խորհրդային այսպես կոչված մանկաբանության ներսում առանձին հոսանքների միջև կային սուր գիտուստաներ, սակայն իրականության մեջ մեր տարբերությունները լոկ արտաքին ենին, իսկ գլխավոր յելակետային դրույթները՝ ընդհանուր։ Հաճախ նույնիսկ արտաքին տարբերություններն եյին ջնջում։ Ֆրեյնույնի և Հիտլերով տարբելը բնորոշ եր ինձ և Վիգոնտսկու համար, դով և Հիտլերով տարբելը բնորոշ եր ինձ և Վիգոնտսկու համար։ Յեթե աղղեցությունն ուժեղ եր նաև Բլուսկու մոտ։ Յեթե

Բլուսկին և Վիգոնտսկին շահերնականներ եյին, —իսկ յես փորձում եյի սպայքարել շահերնականության դեմ, — ապա իմ աղղերիզմն ոբեկտիվորեն քաջում եր ավելի նուրբ ուղիներով։»

Խորհրդային մանկաբանների ղրած բաղմաթիվ Հողվածները, դրքերը և գասագրքերը, վորպես կանոն, լեցուն ևն մարքս-լենինյան ուսմունքի վկայակոչումներով, Մարքսի, Ենդելսի, Լենինի և Ստալինի յերկերից բերված ցիտատներով։ Սակայն գործնականում մարքսիզմի այլ վկայակոչումները լոկ արտաքին ծածկույթ եյին հանդիսանում ամենակեղծ դիտության՝ մանկաբանության բուրժուական, հակադիտական բովանդակության համար։

Համ. Կ(ր)կ կենտրոնական կոմիտեն 1936 թ. հուլիսի 4-ի իր վորոշման մեջ մատնանշում ե., վոր այլ կեղծ գիտությունը «հիմնվում է կեղծ-գիտական, հակամարքսիստական դրույթների վրա։ Այդպիսի դրույթների բվին ե պատկանում, նախ և առաջ, ժամանակակից մանկաբանության գլխավոր «որենիք»—յերեխանների բախտը բիոլոգիական և սոցիալական գործոններով, ժառանգականության և ինչ վոր անփակու միջավայրի ազգեցությամբ լինելու «որենիք»։

Խորհրդային մանկաբանները դտնվում եյին ամբողջապես մարդու վերաբերյալ բուրժուական բիոլոգիական ուսմունքների աղղեցության տակ։ Այդ մասին պերճախոս կերպով վկայում են ժամանակակից մանկաբանության ամենից ավելի աղղեցիկ ներկայացուցիչների դրեթե բոլոր գրքերն ու Հողվածները։

Պրոֆ. Բլուսկին պնդում է, վոր «մանկաբանությունն ուսումնասիրում ե մանկական տարիի տարրեր ստադիաների։ Փուլերի և եպոխաների սիմպոսիոնալեխները» («Պեծուցուա», 1925 թ. հրատ., եջ 8—9)։

Դատելով յերեխայի զարգացման որենքների մասին, պրոֆ. Բլուսկին 1929 թվին «Մանկավարժական հանրագիտարանի», «Ճախ» պրոֆեկտորականության այլ «գանձարանի» եջերում դըրսում եր. «Տարիքային բնութագրությունը հիմնական և հանդիսանում. մենք բոլորս անց ենք կենում տարիքների միջուկ վորոշակի որինաչափ հաջորդականությամբ ... տարիքային սիմպոսիոնալեխները կերպարանափոխում են ժառանգականության և կյանքի պայմանների համեմատ» («Պեծուցուա» տ. I ստ. 154)։

Յելնելով մարդու զարգացման վերաբերյալ այդ բիոլոգիան կոնցեպցիայից և հայացքներից, պրոֆ. Բլոնսկին այն ժամանակ փորձում եր յերեխայի զարգացման «որենքը» ձեւակերպել հետեւյալ կերպ. «...Յերեխայի վիճակը, — գրում եր նա, — վորոշվում ե նրա տարիեռով, (նրա կյանքի ժամանակով), ժառանգականությամբ և կյանքի պայմաններով: Դրանք այն յերեք գործոններն են, վորոնց արգասիքն և հանդիսանում յերեխայի զարգացումը: Յերեխայի զարգացման ընդհանուր որենքը հայտնի յե բիոգենետիկ որենք անունով» (նույն տեղում):

Յերեխաների բախտը բիոլոգիական և սոցիալական գործոններով ճակատագրորեն պայմանավորված լինելու միտքը անց է կենում պրոֆ. Բլոնսկու բոլոր դատողությունների միջով:

«Յերեխայի զարգացումը, — պնդում է Բլոնսկին, — յերկու գործոնների — ժառանգականության և կյանքի պայմանների փոխազդեցության արդյունք և հանդիսանում» (նույն տեղում):

Իսկ ի՞նչպես, Բլոնսկու «դիրեկտիվների» համաձայն, պետք է ուսումնասիրել յերեխային:

«Յերեխայի ժառանգականությունն ուսումնասիրելիս, — ասում է Բլոնսկին, — անհրաժեշտ և նախ և առաջ նյութ հավաքել նրա նախնիքների վերաբերյալ (գենելոգիական նյութ):

Յերեխայի ժառանգականության մասին նյութեր հավաքելիս պրոֆ. Բլոնսկին համառորեն հանձնարարում է Հատուկ ուշադրություն դարձնել նորմայից շեղվող բացառական կարդի ցուցանիշների վրա: Իսկ դրա համար, ասում է Բլոնսկին, առանձնապես անհրաժեշտ է տեղեկություններ հավաքել սիֆիլիսով, ալբունիլիզով և այլ հիվանդություններով հիվանդացած լինելու մասին:

Մեկ խոսքով, հարկավոր է յերեխայի ժառանգականության մեջ գտնել բոլոր անհրաժեշտ ապացույցները նրան «ամսորմալ», «մտավորապես հետամնաց» և «դիֆեկտավոր» յերեխայի կատեգորիայում դասելու համար:

Նույնպիսի դիրքավորում տրվում է նաև յերեխայի կյանքի պայմանների մասին նյութեր հավաքելիս: Բնդ վորում այսուղ «առաջին տեղն է դրված այն ընտանիքի կյանքը, ուր գտնվում է յերեխան»:

Մանկաբանը, պարզելով ընտանեկան միջավայրը, պետք է դանի յերեխայի մտավոր հետամնացությունը պայմանավորող բացառական գործոնների առավելագույնը:

1929 թվին հրամարակված իր «Դժվար դաստիարակելի դըպ-բոցականները» վերնագրով գրքում պրոֆ. Բլոնսկին գրում եր. «Յերեխաներին հետազոտելիս մենք նախ և առաջ հետաքրքրվում ենք նրանց ժառանգականությամբ» (եջ 5):

Իսկ ի՞նչպիսի ժառանգականությամբ ե պրոֆ. Բլոնսկին մանկաբաններին հանձնարարում հետաքրքրվել: Նա գրում է այնուհետեւ. «... յերեխան ծնողներից ժառանգում և կյանքի այն պայմանները, վորոնցից ծնողները խելազարվում են, հարրում կամ սրտապատա են լինում, իսկ յերեխաներն ընկնում են դըպ-բացական կուեկտիվի վերջին մարդկանց շարքը»:

Դեռ ե նկատել, վոր պրոֆ. Բլոնսկին այստեղ նկատի ունի խորհրդային յերեխաններին, ինչքանով վոր նա իրեն խնդիր է առաջարկում լուսաբանել «դժվար դաստիարակելի դպրոցականների» պրոբլեմը խորհրդային դպրոցի պայմանների համեմատ: Այլ կերպ ի՞նչպես կարելի յե անվանել Բլոնսկու արտահայտած դրույթը, յեթե վոչ զրաբարություն մեր խորհրդային իրականության հասցեյին:

Մանկաբանները և առաջին հերթին պրոֆ. Բլոնսկին առանձնապես մեծ խառնաչփություն մտցրին սովորողների դպրոցական անառաջադիմության հարցերի, մասնավորապես այդ անառաջադիմության պատճառների լուսաբանման մեջ:

Դատելով անառաջադիմ աշակերտների մտավոր զարգացման մասին, պրոֆ. Բլոնսկին իր «Դժվար դաստիարակելի դպրոցականները» գրքում գրում եր. «Կարելի յե մեծահասակ լինել տնանազրով և փոքրահասակ՝ խելքով, և, ընդհակառակ, կարելի յե մեծահասակ լինել խելքով ու փոքրահասակ անձնագրով: Անձնագրային և մտավոր տարիքները կարող են չհամընկնել» (եջ 19):

Հետաքրքրելի և պրոֆ. Բլոնսկու մոտ ուսման ասպարիզում հաջողություններ ունեցող աշակերտի բնութագրությունը: Իր նույն գրքի 18-րդ եջում նա գրում է. «Դպրոցը յերեխայի կյանքի մի մասն է: Իր կյանքի այդ — դպրոցական — մասում առաջադիմելու համար աշակերտը պետք է կարողանա հարմարվել դպրոցին և, մասնավորապես, ուսուցչին: Դրա համար բավական չե գիտելիք ունենալ: Դրա համար հարկավոր են մի շարք հարմարանքներ: Յերեք դրանք չկան, աշակերտը չի առաջադիմի: Առաջադիմ աշակերտն այն յերեխան է, վորը մի շարք հաջող

հարմարանքներ է ստեղծում դպրոցի ու պարոցական կյանքի նը-
կատմամբ, մասնավորապես՝ ուսուցչի նկատմամբ»:

Պրոֆ. Բլոնսկու այս դրույթի մեջ առանց քաշվելու խեղա-
թյուրվում է դպրոցի եյությունը՝ մորպես յերեխաների ուսուց-
ման և դաստիարակման կարևորագույն միջոցի, ուսուցչի դերը՝
վորպես կոմունիստական դաստիարակության կիրառողի, իրեն՝
դաստիարակության եյությունը։ Դաստիարակությունը պրոֆ.
Բլոնսկու ընությագրության մեջ հանդես է գալիս իբրև հարմար-
վելու բիոլոգիական մի պրոցես, իսկ դպրոցը և ուսուցիչը՝ վոր-
պես հարմարվելու գործոններ։ Բուրժուական, հակագիտական,
հակալենինյան կոնցեպցիան է յերեխան գալիս պրոֆ. Բլոնսկու
դատողությունների մեջ։

Դրա համար եւ լիովին հասկանալի յե պրոֆ. Բլոնսկու այն
միտքը, թե դպրոցն ըստ եյության չի կարող վորոշել յերեխայի
զարգացումը և նպաստել նրան։ Յերեխան, Բլոնսկու տեսակե-
տով, դպրոց է գալիս վորոշակի առհավատչյաներով և ընդունա-
կություններով։ Դպրոցը չի կարող նրան դաստիարակել և վե-
րադաստիարակել։ Նրա վրա ճակատագրորեն ճնշում են բիոլո-
գիական ժառանգականությունն ու անփոփոխ սոցիալական մի-
ջավայրի ազդեցությունը։

Իր «Դժվար դաստիարակելի գոլոցականները» գրքում պրոֆ.
Բլոնսկին ուղղակի պնդում է. «... Անհաջողությունը ծագում է
վոչ թե դպրոցական պարապմունքների ընթացքում, այլ նա ար-
դեն գոյություն ունի այդ պարապմունքների առաջին իսկ որվա-
նից։ Կան յերեխաներ, — ասում ենա, — վորոնի այսպես առած
յերկրորդ տարեցիներ, նույնիսկ յերրորդ տարեցիներ են հանդի-
սանում դեռ նախան դպրոցը Այսպիսով, դպրոցական ան-
հաջողությունն արդեն տրվում է դպրոցին իբրև գիրազանցական
արտադպրոցական պատմառներով պայմանավորված ինչ-վոր բան»
(եջ 26)։

Վերջապես, ասես իբրև յեղրամակիչ ակորդ այս բոլոր դա-
տողությունների, պրոֆ. Բլոնսկին տալիս է հետևյալ խորիմաստ
խոսքերը. «Ենթան տամալելագրույն չափով կախված ե կյանքի
պայմաններից ... Մեր աշխատակցութիւն ընկած է կանովան մերտ
կապ և զսել յերեխայի մտավոր գարգացման և ընտանիքի բյու-
ջեցի, ինչպես նաև տապակած մսի այն բանակության միջև, վոր-
ստանում է յերեխան շարարական» (?!) Յեկա այնուհետեւ. «Մեզ
մանկավարժներին մնում է լոկ ուրախանակ դրա համար և վիք-

խարի հույսեր դնել մսի վրա... դրանով մենի կհաղեց նրա
(աշակերտի, — ի. և.) մտավոր անդարդացությունը» (եջ 42)։

Սոցիոլոգիատրական ուղղությունը, վորը ներկայացնում
է պրոֆ. Զալկինդի խումբը, խակապես ասած յելնում եր նույն
հիմնական դրույթներից, ինչ բիոլոգիատրական ուղղությու-
նը։ Տարբերությունը միայն նրանումն է, վոր պրոֆ. Զալկինդը
գտնում եր, թէ մանկական անհատականության ձևակորման և
գարգացման մեջ վիռական նշանակություն ունի վոչ միայն բիո-
լոգիական գործոնը, այլև այսպես կոչված անփոփոխ սոցիալա-
կան «միջավայրը»։

«...Մարդու զարգացման, անման եպախայում, — ասում ե
նա, — միջավայրն ամենից ավելի հզոր, վնասական գործոն է,
վոր ստեղծում է զարգացման գլխավոր դիրքավորմենքը, վո-
րոշում մարդու եետագա կեցության բալոր հիմնական հեռա-
նկարները» («Պրոֆ. Յալկինդ. — «Պեծոլոգիա և ՀՀՀ», ոչ. 1929 թ.
շ. 6)։

Պրոֆ. Զալկինդն այսուհետև հայտարարում է, թէ՝ ման-
կարանությունը պետք է ... պարզորչ, ամերկմիտ պատախան
տա՝ մանկավարժական տեսակետից պիտանի՞ յե արդյոք (?)
նոր, սոցիալիստական միջավայրը նոր, մասսայական մարդու
ստեղծման համար» (նույն տեղում)։

Իսկ ի՞նչ անել, յեթե մանկարաններն ասեն, վոր այդ սոցիա-
լիստական միջավայրը «մանկավարժական տեսակետից» պիտանի
չե նոր մարդու ստեղծման համար։ Բավական է հարցն այս կերպ
չե նոր մարդու ստեղծման համան շաղակրատության անմտությունն
ու վնասակարությունը և յերեխանների բախտը «անոփոփոխ միջո-
ւայրի» ազդեցությամբ ճակատագրորեն պայմանավորված լինե-
լու թեորիան զարգացնող մանկարանական «գիտություն» ստեղ-
ծելու փորձերը։

Զալկինդի խումբը, յերեխայի ձևավորման և զարգացման
գործում վճռական նշանակություն տալով այսպես կոչված ան-
գովիտին «սոցիալական միջավայրի» ազդեցությանը, լրիմ չափով
համերաշնուրում եր պրոֆ. Բլոնսկու այն պնդման հետ, թէ բիո-
լոգիական գործոնները վճռական ազդեցություն ունեն յերեխա-
նների բախտի վրա։

Սոցիոլոգիատրական ուղղության ներկայացուցիչներից մե-
ջը՝ պրոֆ. Մոլոքավին այս առթիվ դրում եր. «միջավայրը,
վորպես յերեխայի վրա ներդործող դրդուիչների սիստեմ, մենք

վերցնում ենք իր ամենից ավելի հիմնական, մշտական ու կայուն մոմենտներով և վերլուծում յերեխայի զարդացման և աճածան հիմնական գծերին համապատասխան, ընդ վորում հաջի յինք առնում վոչ միայն այն միջավայրը, վորը շրջապատում է յերեխային ներկայումս ինչպես մանկական հիմնաթիվից դուրս, այնպես ել մանկական հիմնարկում, այլև յերեխայի անցյալ միջավայրը, վորը գենետիկորեն վորոշում ե նրա առկա սոցիալ-բիոլոգիական փոնդը» («Основные проблемы педагогики в ССР», — тезисы к педагогическому съезду, стр. 23):

Շատ կարևոր ե նկատել, վոր հավասարակշռության բուժուական թերիան սպասավորում եր նաև մանկաբանությանը: Տեսնենք, թե ի՞նչ եր գրում պրոֆ. Մոլոժավին. «Անող մանկական որգանիզմի ... ամեն մի ակտ նրա և շրջապատի միջավայրի հավասարակշռության պրոցես ե ... Որգանիզմի ինչպիսի գործողություն ել վերցնելու լինենք, — ասում ե Մոլոժավին, — տարրական թե բարդ, անմիջական դիտողությանը մատչելի թե արտաքին ծածկույթների տակ պահպան, նրա բնույթը նույնն ե — խախտված հավասարակշռության վերականգնումը միջավայրի հետ և նրա պայմաններին հարմարվելը» («Педология и воспитание», — Հոդվածների ժողովածու պրոֆ. Զալկինդի խոժ-բարությամբ, 1928 թ. հրատ., եջ 121):

Հենց այդտեղ ել պրոֆ. Մոլոժավին ձեւակերպում եր ժամանակակից մանկաբանության գլխավոր «որենքը» — յերեխաների բախուց բիոլոգիական և սոցիալական գործոններով ձականագործ-բեն պայմանավորված լինելու «որենքը»:

«... Յուրաքանչյուր որգանիզմը, — ասում ե նա, — իր վարքի համար ունի վորոշակի, առավել կամ նվազ կայուն տիպ, մարդու համար այդ տիպը սոցիալական և պայմանավորված» (եջ 128):

Յեկ այնուհետև. «Այն գործոնները, վորոնցով վորոշվում ե յերեխայի վարքը, սոցիալ-բիոլոգիական գործոններն են, վորոնք մանմիջաբար կապում են յերեխայի կենսագործությունը մեկ կողմից՝ միջավայրի հիմնական կենսական ալրոցներին և, մյուս կողմից, նրա առկա բիոլոգիական փոնդին» (եջ 131):

Այսպիսով, սոցիոլոգիզատորական ուղղության կողմնակիցների բոլոր գատողությունների հիմքում, ճիշտ այնպես, ինչպես Բլոնսկու խմբի մոտ, դրված ե նույն բուժուական, հակառակնենյան, կեղծ-դիտական կոնցեպցիան: Սոցիալական հարաբե-

րություններին Փաստալիստական հատկություններ տալով, նրանց անփոփոխ բիոլոգիական որենքը հատկություններ վերագրելով, պրոֆ. Զալկինդը և նրա ամբողջ խումբը անխուսափելության ժխտմանը: Այդ հանդում ելին գլորոցի և մանկավարժության ժխտմանը: Այդ շատ ցայտուն կերպով և արտահայտել պրոֆ. Զալկինդն իր հետեւյալ գրույթի մեջ. «Զկա և չի կարող լինել, — պնդում եր Զալկինդը, — առանձին հոգեբանական մանկավարժություն և Զալկինդը, — առանձին փիզիոլոգիական մանկավարժություն ... կա միայն մեկ սոցիալ-բիոլոգիական, պիխոն-ֆիզիոլոգիական ուսմունք յերեխայի մասին ... վորը տախս ե այսպես կոչված մանկաբանական նյութը: Մանկավարժը, վորն իրեն թե աշխատում ե միայն պախիկայի վրա, և թժիկը, վորն աշխատում ե իրը թե միայն «Փիզիկայի» վրա, փասորին վոչնչով չեն տարբերվում միմյանցից»... «Ինչ բանով վոր նրանք յերկուսն ել միատեսակ գրադաւած են որգանական գումարկաների հասարակական մասով, ինչ-բանով վոր նրանք փոխարինում, ուղղություն են տալիս որգանիզմի հասարակական դիրքավորմանը, այնքանով դա միատեսակ չափով նրանց դարձնում ե հասարակական դաստիարակներ, «մանկավարժներ», «պախլուտերապեվտներ», կամ, ավելի նիշու, սոցիալարժներ (հասարակական դաստիարակներ): Ժամանակական դժշկականության կեսից վոչ պակաս մասը և վողդ ժամանակակից «մանկավարժության» յոր ուրերքը մասը վոչ այլ ինչ են, յերեւ վոչ սոցիալարժություն» 1930 թ. հրատ., եջ («Основные вопросы педагогики», 152—153):

Մանկաբանների և «դպրոցի մահացման» նախկին տեսաբանների հայացքների աղջակցությունն այստեղ հանդես ե զալիս ակնհայտ կերպով: Բավկական ե այս գրույթը համեմատել այն բանի հետ, ինչ Շուլցինն եր ասում, դրանում համոզվելու համար: Նույն խոնարհումը տարերայնության առաջ, բուժուական մանկաբանության սկզբունքների անքննադատ փոխադրումը խոր-հըրդային դպրոցի պայմաններում, ուսուցչի և դպրոցի դերի վարդային դպրոցի պայմաններում, աճող սերնդի դաստիարակման գործում: Մանկաբար անտեսումը աճող սերնդի դաստիարակման գործում: Պատահական չե, վոր պրոֆ. Զալկինդն իր իսկ առաջադրած այն հարցին, թե «Ի՞նչպես յերեխան հանել և ստեղծել համապատասխանություն սաների իսկական սոցիալական կարիքների և իրեն՝ մանկավարժի սոցիալական դիրքավորման միջև» — պատասխանում եր. «Բարեբախտաբար պատմությունն այդ անում ե առանց մեզ»:

Ամենավիճակար «ձախ» արհամարհանքը մանկավարժության նկատմամբ և դպրոցի ու ուսուցչի ժխտումը կարմիր թելի պես անց են կենում մանկաբանների բոլոր գատողությունների միջով։ Դպրոցը և ուսուցիչը, մանկաբանների տեսակետով, յերեխային սոցիալական միջավայրին հարմարեցնելու գործոններ են միայն։

Հետաքրքիր են պրոֆ. Վիգոսուկու հայացքները (ի դեպ առած, սրա հայացքները յերեխայի մասին իրենցից ներկայացնում են բուրժուական դիտականների ամենասարբեր ազգեցությունների եկեղեկտիկ մի խառնուրդ) մանկական խարակտերի զարդացման մասին, հայացքներ, վոր նա զարդացրել ե բուրժուական դիտական Աղքեղ Աղեղից փոխ առած այսպես կոչված կոմպենսացիայի ուսմունքում։

Աղեղն ապացուցում եր, թե այն որդանների թերարժեքությունը, վորոնց գործողությունը դժվարացել կամ խախտվել ե բնածին գեֆեկտների հետևանքով, կարող ե հանգել ուժդին զարդացման, գերկոմախնացիայի։ Սեփական թերարժեքության դպացմունքը, վորը ծագում ե որդանների գեֆեկտավորության հետևանքով, յերեխայի համար նրա պսիխիկայի զարդացման ժշտական խթան ե՝ հանդիսանում։

Կոմպենսացիայի պրոցեսների շարժիչ ուժն ե հանդիսանում, ըստ Աղեղի, վոչ այլ ինչ, յեթե վոչ իշխելու կամքը, վոր դըրքած ե յուրաքանչյուր մարդու մեջ վորպես սկզբնական հողեկան ձգուում։

«Մարդու հոգեկան կյանքը, — ասում ե Աղեղը, — ձգուում ե, ինչպես գործող անձը լավ բանատեղի գրած դրամայում, իր Վ արարվածին»։

Այսուղի մենք ունենք անհատի զարդացման ամբողջապես իդեալիստական և լինդիփիդուալիստական մեկնաբանություն։

Մեր մանկաբանները, և առաջին հերթին պրոֆ. Վիգոսուկին, փոխ առնելով այս դրույթները, անում եյին միայն մեկ վերապահություն, թե կոմպենսացիայի հիմնական շարժիչ ուժն ե հանդիսանում վոչ թե մարդու մեջ բնությունից դրված իշխելու նախասկզբնական ձգուումը, այլ այն դժվարությունները, վորոնք ծագում են յերեխայի մոտ նրա և սոցիալական միջավայրի փոխադրեցության պրոցեսում։

Պրոֆ. Վիգոսուկին «Մանկական խարակտերի դինամիկայի հարցի շուրջը» վերնագրով հողմածում զրում եր. Խարակտերը դիմամիկան հասկանալ նշանակում ե այն քարգմանել սոցիալ-

կան միջավայրում անհատի ունեցած հիմնական նպատակադրումների լեզվի» («Բեօլոգիա և Յօնիթական գողացների ժողովածու Զալկինդի խմբագրությամբ», 1928 թ. Հրատ., էջ 102)։

Յեղ այնուհետև. «Խարակտերի գարգացման տրամարանությունն ըստ ըստ են եղության նույն ե, ինչ ամեն մի զարգացման տրամարանությունը. Այն ամենն, ինչ զարգանում է, զարգանում է անհրաժեշտությունից... Հրաշք կիմեր, յերե խարակտերը չը զարգանար անհրաժեշտության ննշման ներքո, վորը նրան աւիպում ու մղում է զարգանալու» (նույն տեղում, էջ 103)։

Իսկ ի՞նչպիսի անհրաժեշտության մեջ են դրված յերեխայի խարակտերի զարգացման շարժիչ ուժերը. Պրոֆ. Վիգոսուկին, վորպես յելակտային դիրք ընդունելով Ա. Աղեղի ուսմունքն անհատական հողերանության մասին, ասում ե, վոր այդ շարժիչ ուժերը դրված են «այն անհրաժեշտության մեջ, վորն ամբողջ մարդկային կյանքի հիմնական ու վորոշիչ անհրաժեշտությունն ե հանդիսանում, այն ե՝ պատմական սոցիալական միջավայրում ապրելու անհրաժեշտության մեջ... Սոցիալական ամբողջի ներսում վորոշակի կետ գրավելով միայն, հասարակական հյուսվածքում իր տեղը գտնելով միայն, սոցիալական կյանքի տրամարանության հանդեպ վորոշակի դիրքում կանգնելով միայն կարող ե զարգանալ և ապրել մարդը» (էջ 103)։

Զարգացնելով այս դրույթները, պրոֆ. Վիգոսուկին ասում է. «Սոցիալական պայմանները, վորոնց մեջ պիտի ե անի յերեխան, կազմում են յերեխայի անհրաժեշտության այն ամբողջ քնազալառը, վորից յելնում են նրա զարգացման ստեղծարար ուժերը. յերեխային դեպի զարգացումը մղող խոչընդուների գրայությունն իր արմատներն ունի սոցիալական միջավայրի պայմանների մեջ»... (էջ 109—110)։

Վիգոսուկու անսակետով դուրս ե զալիս, վոր յերեխայի զարգացումը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ անհատի հարմարումը շրջապատող միջավայրին, ավելի ճիշտ՝ պայքար սոցիալական միջավայրում լավագույն տեղը ձեռք բերելու համար։

Վիգոսուկու թերիայում քողարկված ձևով յերեան ե զալիս հին, ջախջախված բուրժուական ուսմունքը հասարակության մասին՝ վորպես մարդկանց վորոշ ամբողջության մեխանիկական միացման, մարդկանց, վորոնք իրար դեմ մղում են բնության մեջ զոյսություն ունեցող պայքարին (զոյսության պայքարին) նմանվող մի պայքար։ Նա այնուհետև չեցուում ե, վոր այդ պրո-

ցեսը ժամանակադրութեն պարունակում և յերեք մոժենտ, վոր կարելի յէ այս կերպ պատկերացնել.

«1) յերեխայի անհարմարվածությունը սոցիալ-կուլտուրական միջավայրի նկատմամբ ուժեղ խոչընդուներ և ստեղծում նրա աճման ճանապարհին (զարգացման սոցիալական պայմանակորվածության սկզբունք).

2) այդ խոչընդուները վորպես խթան են ծառայում կոմպենսատորական զարգացման համար, դառնում են նրա նպատակեմը և ուղղություն են տալիս ամբողջ պրոցեսին (ապադայի հեռանկարի սկզբունք).

3) խոչընդուների առկայությունը բարձրացնում ու կատարելագործվելու յէ ստիպում Փունկիսները և հանգում են նրանց հաղթահարմանն ու, ասել ե, հարմարվածությունը (կոմպենսացիայի սկզբունք) ...

Անհարմարվածությունից ծնունդ ե առնում հարմարվածությունը» (եջ 110):

Իր գատողությունները պրոֆ. Վիգոտսկին ավարտում ե հետևյալ դրույթով. «Յերեխան իր բնույթով միշտ թերարժեք ելինում չափահանների հասարակության մեջ. նրա դիրքը սկզբից իսկ առիթ և տալիս, վորպեսզի նրա մեջ զարդանա թուլության, անվատահության և դժվարին դրության զգացմունքը: Յերեխան ժնվում և յերկար տարիներ մնում ե ինքնուրույն դոյլությանը ընհարմարված և մանկության այդ անհարմարվածության, դժվարության մեջ և գտնվում նրա զարգացման արմատը... Յերեխայի զարգացումն ու ձևավորումը աղջիալապես ուղղություն ստացած մի պրօցես ե» (եջ 114—115):

Յերեխաների, նրանց զարգացման և դաստիարակման ամբողջ պրոցեսի վրա ներգործելու լավագույն միջոցը մանկաբանները համարում եյին վոչ թե դպրոցն իր բոլոր հնարավորություններով ու միջոցներով, այլ բացառապես ներգործությունը սոցիալական միջավայրի միջոցով:

Վոճի Մ. Ս. Բերնշտեյն 1928 թվին լույս ընծայեց «Մանկաբանությունը գիտություն ե յերեխաների մասին» անունով մի բրոշյուր, վորին, ի դեպ ասած, հավանություն տվեց Պետական գիտական խորհուրդը:

Այս բրոշյուրում հեղինակը կատերորիկ կերպով հայտարարում եր. «Յերեխայի զարգացման և վարքի համար վնասական նշանակություն ունի սոցիալական միջավայրը ... Տարբեր սո-

ցիալական միջավայրը տարբեր կերպ ե ձևավորում այնուեղ ապրող յերեխաներին: Ուստի, յեթե քո մանկավարժական աշխատանքում առիթ ունենաս գեմ առ զեմ գալու տարբեր դասակարգային խմբավորումների յերեխաների հետ, ապա հիշե՛ր, վոր յուրաքանչյուր խմբին, յուրաքանչյուր յերեխային պետք ե մոտենալ տարբեր ձևով, յուրատեսակ» (Մ. Ս. Բերնշտեյն—Պեծոլոգիա—պայտ օ ձեռք) հրատ. «Մոլոգա գվարդիա» 1928 թ. եջ 20 և 32):

Բեռնշտեյնը տալիս եր, իհարկե, և՝ համապատասխան ցուցումներ, թե ի՞նչպես պետք ե ուսումնասիրել յերեխային և վորոշել ուսուցման ու դաստիարակման դործում գեղի նա ունենալիք մոտեցումը: Իր բրոշյուրում նա սովորեցնում էր. «Յերեխում ես ինչպիս պետքն ե հասկանալ և նաև չել յերեխային, ամենայն ուշադրությամբ ուսումնասիրիի նրա սոցիալ-դասակարգային միջավայրը: Հենց այնուեղ ե գտնվում յերեխային և նրա անման ու զարգացման տեսնեցները հասկանալու բանալին» (եջ 32):

Մանկավարժական աշխատանքի արդյունքները Բեռնշտեյնի կարծիքով չեն կախված գորոցի և ուսուցչի աշխատանքի վորակից. նրանք այնքան ավելի հաջող կլինին, վորքան կիենվեն սոցիալական միջավայրի առաջելի կամ նվազ դիմացկուն հիմունքների վրա ... Յերեխաների վրա իրանք ներգործելու ուղին նրանց սոցիալական միջավայրի միջոցով ներգործելն ե» (եջ 33):

Վոչ թե դպրոցը, վոչ թե մանկավարժն են դաստիարակում յերեխային, այլ բացառապես շրջապատող միջավայրը (?): Այդ նույն բանը, իսկապես ասած, պնդում եյին նաև «դպրոցի մահացման» տեսաբանները: Ինքնահոսին ապավինել, տարերայնության առաջ խոնարհվել — ահա մանկաբանների բոլոր դատողությունների արմատը: Մանկաբանների և դպրոցի մահացման հակալենինյան «թեորիայի» նախկին սյուների բոլոր դիրքավորումների լիակատար գաղափարական ազգակցությունն առկա յե այսուեղ: Ահա թե ինչու Համեկ(թ)կ կենարոնական կոմիտեն իր 1936 թվի հուլիսի 4-ի վորոշման մեջ առանձնապես մատնանշեց, վոր «կուսակցության կողմից դատապարտված դպրոցի մահացման հակագիտական ու տգետ թեորիան շարունակում եր մինչև վերջին ժամանակներս ընդունվել լուսժողկոմատներում, և նրա առեպտաները թերուս մանկաբանների ձևով տարածվում եյին ալեւի ու ավելի լայն մասշտաբներով»:

Մանկաբանների «գիտական աշխատություններում» պարունակվում եր ամենավնասակար զրապարտություն խորհրդային իրականության և մեր սքանչելի յերեխաների հասցեյին։ Մանկաբաններն ապացուցում եյին, թե՝ խորհրդային պայմաններում «թերարժեք» յերեխաների թիվն անշեղորեն ավելանում է։ Ա. Ա. Նեվոկին իր «Մանկավարժների գժվար դաստիարակելի յերեխանները նախագլուղցական հիմնարկներում» վերնագրով թեզիների մեջ, վոր նա գրել եր համառուսաստանյան մանկաբանական համագումարի առթիվ 1928 թվին, ասում եր. «Այժմեյականության սպեցիֆիկ պայմանները, անտարակույս, պարունակում են միշտք մոմենտներ, վորոնք բարձրացնում են մանկավարժորեն գժվար դաստիարակելի յերեխաների թիվը» ... («Основные проблемы педагогики в СССР», հոստ. 1928թ. թ. եջ 87—88):

Իսկ վորո՞նք են, Ա. Նեվսկու կարծիքով, այն մոմենտները, վորոնք բարձրացնում են մանկավարժութեն դժվար դաստիարակելի յերեխաների թիվը:

Բանից դուրս ե գալիս, «այդ մոմենտների թվին են պատկանում, — կարդում ենք Նեվսկու մոտ, —

ա) սոցիալական միջավայրի ծանր պայմանները..

բ) ներկայի մասսայական նախաղպրոցականի բիո-տիպի սպեցիֆիկ անառօնահատկությունները՝ (յերեխայի սաղմնավորման և կյանքի վեպ տարիների անբարենպաստ պայմանները. ժառանգական դժվարին ծանրաբեռնումները չպիտահաս ազգաբնակչության մասսայական թոքախտի ու սիֆիլիսի հետևանքով)» (նույն տեղում):

Պարզ չէ՞, վոր ավելի վատ և ավելի կեղտություն զբարտություն խորհրդային իրականության ու մեր սքանչելի մահուկների հասցեյին դժվար և մտածել:

Фаиманнаկակից մանկաբանության ներկայացուցիչներն իրենց «գիտությունը» հայտարարում ենին ունիվերսալ, առաջատար գիտություն մանկան վերաբերյալ մյուս բոլոր գիտությունների՝ մանկավարժության, Փիդիոլոգիայի, անսատոմիայի, նեվրոպատո-լոգիայի նկատմամբ և այլն։ Մանկաբանությունը, — պնդում ենին նրանք, — իրենից ներկայացնում ե «գիտական սինթեզն այն ամենի, ինչ կազմում է յուրաքանչյուր իր հասողակ կողմից ման-կան ուսումնասիրող առանձին գիտական դիսցիլինների եյա-կան արդյունքները»։ (Проф. Басов—«Общие основные педоло-гии», հրատ. 1928 թ. եղ 17):

Այդ հայցքը մանկաբանության մասին՝ վրապես «գիտությունների գիտության», լիովին ընդունվում եր լուսժողկոմատների կողմէց։ Մանկան վերաբերյալ կարևորագույն գիտությունը՝ «մանկաբանությունը հայտարարված եր «եմպիրիկ» և «գիտականակերպ դիսցիպլին», իսկ տակավին չկազմավորված, տարրութերվող, իր առարկան ու մերողը չփորշած և հակամարքավայրական վճառակար տեսնեցներով լեցուն այսպես կոչված մանկաբանությունը հայտարարված եր ուսիմներսալ գիտությունն, վոր կոչված ե ուղղություն տալու ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բոլոր կողմերին, այդ բայում մանկավարժությանը և մանկավարժներին» (Համկ(μ)կ Կե-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումից)։

Ինչպին հասկանալի յեւ, վոր ժամանակակից մանկաբանությունն ունիվերսալ, առաջատար գիտություն լինել վոչ մի կերպ չեր կարող։ Ավելին՝ մանկաբանությունը վորպես մյուս գիտությունների ինչ-վոր «գիտական սինթեզ» դիտելու փորձն աղաղակող հակասության մեջ եւ գտնվում գիտական սոցիալիզմի հիմնադիրների ըոլոր ցուցումների հետ։ Բավական եւ բերել ֆ. Ենդելսի հետեւյալ ցուցումը՝ գրանում համոզվելու համար։ «Անտի-Դյուրիֆնդ»—ում Ֆ. Ենդելսը դրում էր. «Յերբ յուրաքանչյուր առանձին գիտության նկատմամբ կիրառվում եւ իրերի ու չյուր առանձին գիտության նկատմամբ կիրառվում եւ իրերի ու գիտելիքների ընդհանուր սիստեմում իր տեղը պարզելու պահանջը, նրանց այդ ընդհանուր կապի վերաբերյալ վորևէ հանուկ գիտություն ավելորդ եւ դառնում» (Փ. Էնգելս—«Անտի-Դյուրինգ» իзд. Սոցէկցիզ, 1931 թ. ստր. 19);

Ուստի չպետք է զարմանալ, վոր մանկաբանություն կեղծ-պիտության ներկայացուցիչները, զգալով իրենց դրության անող-նականությունն ու կեղծությունը, չեյին կարող նույնիսկ բնո-րոշել իրենց «պիտության» առարկան ու մեթոդը։ Հանրահայտ ե, վոր մանկաբան — «պրոֆեսորների» մոտ մանկաբանության նույնքան բնորոշումներ կան, ինչքան պրոֆեսորներ գոյություն ունեն։ Այսպես, ըստ Վիկոտսկու «մանկաբանությունը ԽՍՀՄ-ում հանդիսանում է նոր, սոցիալիստական մարդու զարգացման վերաբերյալ գիտություն», ըստ Բատովի «մանկաբանությունը գիտական սինթեզն է այն ամենի, ինչ կազմում է յուրաքանչյու-րըն իր հատուկ կողմից զարգացող մարդուն ուսումնասիրող ա-ռանձին գիտական դիսցիպլիների ելական արդյունքները», ըստ Կորնելյովի «մանկաբանությունը մանկական հոգեբանությունն

Ե»։ Ըստ Զալկինդի մանկարանությունը «յերեխայի սոցիալական գարգացման տարիքային որինաչափությունների վերաբերյալ գիտությունն է», իսկ մի այլ տեղում նույն Զալկինդը գրում է, թե՝ «մանկարանությունն այն գիտությունն է, վորք հետազոտում և որինաչափությունները յուրաքանչյուր տարիքի յուրահատկության գարգացման մեջ, բաց և անում յուրաքանչյուր տարիքի վորակական առանձնահատկությունները»։

Մանկարանության կեղծ-դիտության անկայունության լուսադույն բնութագրությունը տվել է նրա ամենից ավելի ցայտուն ներկայացուցիչներից մեկը՝ պրոֆ. Բլոնսկին, վորն այդ «դիտության» տեսական գրությունը բնութագրել է հետևյալ կերպ. «Մանկարանության ներկայի վողարմելի գրությամբ մանկարանությունը հայտարարել իրեն ամրակուռ կերպով ուսհմանված ճշմարտությունների ժողովածու՝ շառատանությանը մտեցող և մանկարանական պրակտիկայի համար վնասակար մի փորձ կլինի»։

Այն ժամանակ ել պրոֆ. Բլոնսկին գրում եր. «պետք է ասել նշմարտությունը, — իմաստ ել մանկարանության կուրսերը փասորքն ներկայացնում են գիտության ամենաբարձրագագան նյութերից կազմված վիճիգրետ, զանազան գիտություններից վերցված բոլոր այն սեղեկությունների հավաքածու, վորոնք վերաբերում են յերեխային։ Բայց մի՞քե նման վիճնգրեդը հատուկ, ինքնուրույն գիտություն է: Իհարկե, վոչ...»։

Իսկ մենք մեր կողմից այդ կեղծ-դիտությունը բնութագրելու համար կրերենք կոմենսկու մի իմաստուն դիտողությունը սեփական արմատ չունեցող ծառի մասին: Դեռևս յերեք հարյուր տարի սրանից առաջ իմաստուն ծերունի կոմենսկին հետևյալն եր ասում այն կտրված ծառի մասին, վոր դյուզացիները բերում են անային հանդեսին. «Թեև նա խայտաճամուկ կերպով զարդարված ե նրա վրա կախված կանաչով, ծաղիկներով, պտուղներով, նույնիսկ դրասանդներով և պսակներով, բայց քանի վոր այդ զարդարանքները չեն ծագում երա սեփական արմատից, այլ կախվում են դրսից, ուստի նա չի կարող վո՛չ բազմանալ, վոչ ել յերկար ժամանակ գոյություն ունենալ»։

Մանկարանությունը սեփական արմատ չուներ և իրեն գիտություն յերկար ժամանակ գոյություն ունենալ չեր կարող:

Պրոֆեկտորների մեծ ակադեմիայում, — ինչպես պատմում են շանավոր Սվիֆտը, — միստեր Լեմյուել Գուլիվերը հնարավո-

րություն ուներ ծանոթանալու գիտնական պրոֆեկտորների հետ, ըստոնք զազդյահների և հատուկ պարագաների ողնությամբ հետազոտում եյին մարդու մտահայեցողական գիտելիքները։ Նրանց նախագծերը սքանչելի եյին։ «Ավելի վսմ իդեա դեռևս յերեք յերեք չեր ծագել վոչ վո՞ի գլխում»…… նկարում է Սվիֆտը։

Մենք կարող ենք ասել — հանձարեղ գյուտերը չեն կորչի։ Մեծ ակադեմիայի պրոֆեկտորների աշխատանքը զուր չկորավ։ Մեծ արժանակոր ժառանգները յեղան մեր ժամանակակիցներանց արժանակոր ժառանգները յեղան մեր ժամանակակիցները։ Նրանք խանդավառությամբ րը — «գիտական» մանկարանները։ Նրանք խանդավառությամբ մերովիկան և այն գարգացրին և խորացրին լազուտյանների մերովիկան և այն գարծապետացրին անող սերնդի «մտահայեցողական գիտելիքներն» ու տարիքային առանձնահատկություններն ուսումնասիրելու համար։

Մանկարանության կեղծ-դիտությունը տարածվում էր հազարամոր տիրածունեցող գրքերով, աչքի ընկնող տեղ եր գրագում մեր զարոցներում, մանկականիկումներում, մանկինստիտուտներում։

Համեկ(ը)կ կենարոնական կոմիտեյի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումը մերկացրեց լուսողկոմաների կողմից տարիներ վորոշումը մեր զարոցում տարածվող ժամանակակից մանկարաշարության կեղծ-դիտականությունն ու ուսակցիոն բնույթը։ Այդ վորոշումն ամենավիթխարի սկզբունքային նշանակություն ունի մեր զարոցի առողջացման և ամրագնդման համար։ Նա ճանապարհ է մաքրում յերեխաների դաստիարակության իմական գիտության՝ մանկավարժության առաջ, ուսուցչին զինում և յերեխաների դպրոցական դաստիարակության խնդիրների ստամույնան ըմբռնումով։

4. ՄԱՆԿԱՐԱՆԵՐԻ «ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ» ԴՊՐՈՑՈՒՄ

Համեկ(ը)կ կենարոնական կոմիտեն 1936 թվի հուլիսի 4-ի վորոշման մեջ մերկացնելով մանկարանություն կեղծ դիտության սեակցիոն բնույթը, դրա հետ մեկտեղ տվեց նաև մանկարաների վողջ զարոցական գործունեյության բացառիկ խիստ քըն-նաղատությունը։ Վորոշման մեջ մատնանշվում է, վոր «մանկարանների պրակտիկան, մանկավարժից և դպրոցական պարագմանեներից ամբողջապես կտրված լինելով, հանգում եր

հիմնականում այն բանին, վոր կեղծ-գիտական փորձեր եյին ար-
փում և դպրոցականների ու նրանց ծնողների մեջ անց եյին
կացվում անքիվ բանակությամբ հետազոտություններ ամիմասա-
ու վեսակար հարցարերթիկների, տեսների և այլ ձևերով,
վորոնի վագուց դատապարտված են կուսակցության կողմից» (Համկ(բ)Կ ԿԿ-ի 1936 թ. հուլիսի 4-ի վորոշումից) :

Այդպիսի հետազոտություններ առանձնապես լայնորեն եյին
կիրառվում այն դպրոցականների վերաբերմամբ, վորոնք դըպ-
րոցում հետ եյին մնում առանձին ուսումնական առարկաներից,
կամ չեյին տեղակորպում դպրոցական ուժիմի շրջանակների
մեջ: Հետազոտելով այդպիսի դպրոցականներին և նրանց ծնող-
ներին, մանկաբանները ձգտում եյին ժամանակակից մանկա-
բանության իրք թե «գիտական», «քիոտցիալական» տեսակե-
տից ապացուցել աշակերտի առաջադիմության կամ նրա վար-
ժի առանձին դեֆեկտների ժառանգական և սոցիալական պայ-
մանավարիածությունը, գտնել բացասական ազդեցությունների և
իրեն՝ դպրոցականի, նրա ընտանիքի, ազգականների, նախնինե-
րի, հասարակական միջավայրի ախտաբանական խեղաքյուրում-
ների մասինումը և դրանով իսկ առիք գտնել դպրոցականներին
հեռացնելու նորմալ դպրոցական կրեկտիվից» (Համկ(բ)Կ ԿԿ-ի
1936 թ. հուլիսի 4-ի վորոշումից) :

Ալելին. մանկաբաններն ստեղծել եյին դպրոցականների
մտավոր զարգացման և ոժովածության հետազոտումների մի
ամբողջ սիստեմ, վորը մեխանիկորեն խորհրդային դպրոցն եր
փոխադրվել բուրժուական դասակարգային մանկաբանությունից:
Դպրոցականներին հետազոտելիս կիրառվում եր բուրժուական
գիտականներից փոխ առնված հատուկ «մեթոդիկա»:

Այդ «մեթոդիկայի» հեղինակները, Փրամնիսական գիտական-
ներ Ալֆրեդ Բինեն և դոքտոր Սիմոնը, այն մշակել եյին գեռնա-
ներկա դարի սկզբին: Բինեն ասում եր, թե խելքը տարիքի
Փունկցիան և, նա ընածին անփոփոխ եյություն ե: Յելնելով այդ
թեորիայից, Բինեն հորինեց յուրատեսակ սանդղակ-հարցա-
րան յերեխայի մտավոր զարգացումը բնորոշելու համար, բաղ-
կացած յուրաքանչյուր տարիքի համար հենց հարցից (տեստից):
Այդ «տեստերը» Բինեն ընորոշում եր իրք «հոգեբանական
կարճ ստուգումներ» (Ա. Բոնը և Տ. Սիմոն—«Методы измерения
умственной одоренности»):

Այս «մեթոդիկան» խորհրդային դպրոցում արմատացնելու

տեսակետից առանձնապես շատ աշխատեց պրոֆ. Բլոնսկին, վորը
նույնիսկ հրատարակեց Բինեյի ոեցեպտներով յերեխաների «մտա-
վոր ոժովածությունը» հետազոտելու մեթոդիկայի հատուկ
կուրս: 1934 թվին հրատարակած իր «Մանկաբանություն» դա-
սագրքում պրոֆ. Բլոնսկին ասում է. «Այժմ ամենամասիմալ
ժողովրդականություն են վայելում ամենուրեք Բինեյի կազմած
տեստերը»:

Պրոֆ. Բլոնսկին բուրժուական մանկաբանության թերու-
թյունն եւ համարում այն, վոր «նախկին ժամանակներում ման-
կական տարիքի հետազոտողները սովորաբար սահմանափակվում
եյին շատ փոքր քանակությամբ յերեխաների ուսումնասիրու-
թյամբ ... Բայց ժամանակակից մանկաբանությունը, — ասում
ենա, — արդեն իսկ չի սահմանափակվում ուսումնասիրված յե-
րեխաների այդպիսի չնչին բանակով. նա անցնում եւ մանկական
մասաների ուսումնասիրությանը»:

Մանկաբան-պրակտիկները, հետևելով իրենց ուսուցիչների՝
մանկաբանության պրոֆեսորների խորհուրդներին, շատ լայնու-
րեն եյին կիրառում հիշյալ «մեթոդիկա» դպրոցականներին հե-
տազոտելիս: Յերեխաներին տալով հաճախ ամենանահեթեթ
բնույթի անկետային հարցեր, մանկաբանները, այն դեպքում,
յեթե յերեխան չեր պատասխանում այս կամ այն հարցին, սո-
վորաբար հանում եյին այն գատողությունը, թե յերեխան ան-
ընդունակ ե սովորելու սոլորական դպրոցում, և գնում եյին
մտավոր հետամնացության կամ, ինչպես նրանք եյին «գիտա-
կանորեն» արտահայտվում, «ոլիգոֆրենիայի» դիագնոզը:

Մանկաբաններն առանձնապես լայնորեն եյին ծավալում ի-
րենց «գործունեյությունը» դպրոցների կոմպլեկտավորման ժա-
մանակ: Միանդամայն առողջ յերեխաներին հետ վանելով դըպ-
րոցից, նրանք նրանց կացնում եյին «մտավորապես հետամնաց»,
«սոցիալապես լըլած» (?!), «հոգեպես նելրոտիկ» և այլ պիտակ-
ներ:

Այդ արվում եր սովորաբար այսպես: — Բուրժուական ման-
կաբաններից փոխ եյին առնվում զանազան սխեմաներ «տարիքա-
յին մտավոր զարգացումը» պարզելու համար, հետո յերեխային
ստիպում եյին պատասխանել հիմար հարցերի և լուծել անհե-
թեթ, յերբեմն նույնիսկ չափահաս մարզու համար դժվար հա-
նելուկներ:

Նայած նրան, թե ի՞նչպես եր յերեխան պատասխանում հար-

ցԵրին, լուծում հանելուկները, սահմանվում եր նրա «մտավոր տարիքը»: Այդ ձևակերպում եր բոլոր ցուցանիշների համարժեքը հանելու ճանապարհով՝ «Հարյուրերորդական և հաղարերորդական ժամի ճշտությամբ» (?!) :

Շատ բնորոշ ե հետեւյալ որինակը: Դպրոցներից մեկում մանկաբանը տեսություն էր կիրառում խորամանկաբար մասերի կտրատված խորամաբղիկի ձևով (ի գեալ ասած, այս տեսությանորեն կիրառվում եր նաև ուրիշ գպրոցներում): Այն յերեխան, վորն այդ խորանարդիկը հավաքում էր մեկ բովելի ընթացքում, ստանում եր 8 «մտավոր տարիք» և կարող եր դպրոց ընդունվել: Իսկ յեթե ամելի յերկար ժամանակում եր հավաքում, տարիքը համապատասխանորեն իջեցվում եր: Յեզ ահա յերը վորոշեցին այդ «Հնարքը» ստուգել իրեն՝ մանկաբանի վրա, բանից դուրս յեկավ, վոր նրա «մտավոր տարիքը» հավասար եր ընդամենը 2½-ի:

Շատ հաճախ 7—8 տարեկան յերեխաներին տեստերի հեղինակներն այսպիսի հարցեր ելին առաջարկում: «Ի՞նչ տարրերություն ճանձի և թիթեռի միջև» կամ «Ի՞նչ տարրերություն քարի և հավկիթի միջև»: Տեստերի հեղինակների հրահանդի համաձայն յերեխան մանկաբանից դրական գնահատական կստանար, յեթե այսպես պատասխաներ՝ «Քարն ալելի կարծը ե, քան հավկիթը»: Իսկ յեթե դրական պատասխան չտար, նրա բախտը վճռված եր, — նրան տրվում եր «մտավորապես հետամնաց» դիագնոզը:

Կիրառվող տեստերի վողջ անհեթեթության մասին կարելի յե դատել թեկուղ նրանից, վոր յերեխաներին, մանկաբանի հետ յերկու ժամ հոգնեցնող զրույց ունենալուց հետո, դալիս ելին, որինակ, այսպիսի կաղուկացական հարցեր, «Ո՞վ ե քայլում նստած», «Ի՞նչ կանես, յեթե հրդեհ ծաղի» և այլն:

Յեթե յերեխան այսպես չպատասխանի, ինչպես ցանկալի յե մանկաբանին, որինակ՝ վոր «նստած քայլում են հեծանվորդները» կամ վոր «Հրդեհի գեպքում պետք ե ջուր լցնել», — ապա յերեխային կպցնում ելին «մտավորապես հետամնաց» պիտակը:

Թե ի՞նչպիսի անհեթեթության ելին հասնում մանկաբանները դաստիառների կոմպլեկտավորման հարցերի առթիվ իրենց տված խորհուրդներում և յեղբակացություններում, այդ կարելի յե տեսնել հետեւյալ որինակից: — Յեղբակացություն տալով առաջին դասարանի մասին, մանկաբանը Զերժինսկու ուայոնի դպրոցներից մեկում (Մոսկվա) տառացիորեն դրեց հետեւյալը. «Պատարանը սե-

ռական ընտրության սկզբունքով ճիշտ ե կոմպլեկտավորությած, սոցիալական կազմով՝ նույնպես ճիշտ»: Էնդ վորում մանկաբանը «պարզեց», վոր գասարանում ցածր ինդելեկտի տեր սովորողներն առնվազն 11 տոկոս են կազմում:

Հետազոտության վերոհիշյալ սիստեմը լայնորեն կիրառվում էր. վոչ միայն դպրոցների կոմպլեկտավորման ժամանակ, այլև մյուս բոլոր գեպքերում—դպրոցականների անառաջադիմության պատճառները պարզելիս, դպրոցականներին հաջորդ գասարանը փոխադրելու հարցերը վճռելիս, դպրոցականների կողմից կարգապահությունը խախտելու փաստերը պարզելիս և այն, ևայլն:

Հարցաթերթիկները և տեստերը, վոր լայնորեն կիրառում եյին մանկաբանները դպրոցականներին և նրանց ծնողներին «հետազոտելիս», վաղորոք արդեն վորոշում եյին մանկաբանի մոտեցումը գեպի յերեխան: Հարցաթերթիկներում և տեստերում յեղած հարցերը մանկաբանին ստիպում եյին դպրոցականի անառաջադիմության կամ նրա վատ վարքի գլխավոր պատճառը փնտուել վոչ թե դպրոցի վատ աշխատանքում, այլ բացառապես ժառանգական և սոցիալական գործոնների բացասական ազդեցության մեջ:

Դպրոցականներին հետազոտելիս, ինչպես և դպրոցները կոմպլեկտավորելիս, մանկաբանները գործադրում եյին ամենահներթ հարցերը:

Թոստով քարաքի դպրոցների մեկում մանկաբանը, «կասկածի» տակ առնելով աշակերտ Ծ. Ֆորային, նրան «մտավորապես հետամնաց», «թերարժեք» յերեխանների շարքն դասելու յեղանակներ փնտուելով, համառորեն տալիս եր հետեւյալ հարցերը. «Ի՞նչո՞վ կներկեյիր կտուրը», «Ի՞նչո՞վ կներկեյիր կոշիկը» և այլն: Մի այլ գեպքում յերեխային առաջարկում եյին շրջանակ կտրել ուրվագծի համաձայն, բայց միայն ձախ կամ միայն աջ ձեռքով: Իսկ յերբ հարցըին, թե «ինչի՞ համար ե կիրառվում այդ հականական փորձը», տեղական ականավոր մանկաբաններից մեկը հայտարարեց, «Նրա համար, վորպեսզի վորոշենք յերեխայի հաստատակամությունն ու հարմարվածությունը գժվարությունների հաղթահարման գործում» (?!) :

Տրվում եյին նաև այսպիսի կազուիստական հարցեր. «Ցեղակաթուղային խորտակումների ժամանակ ամենից ավելի տուժում ե վերջին վագոնը. ուստի ավելի լավ չե՞ վերջին վագոնն արձակել և թողնել կայարանում»:

Գիտականության այդպիսի հավակնությամբ եյին վորոշվում նաև «յերեխաների թույլ զարդացման» պատճառները։ Դրա համար գոյություն ուներ «յերեխայի ուսումնասիրության հատուկ քարտ»։ Նա պարունակում էր 50 շատ բարդ հարց։ Այդ «քարտի» համաձայն տեղեկություններ եյին հավաքվում վոչ միայն յերեխայի, այլև նրա հոր, մոր, ազգականների, տատերի, նախատատերի, մորաքույրների և այլոց մասին։ Դրա հիման վրա կազմվում եյին ժառանգական հատկությունների վոխանցման աղյուսակներ։

Ենք ահա նման «փորձերի» և այս ամբողջ անհեթեթության հիման վրա մանկաբանները վորոշում եյին յերեխաների մտավոր զարդացումն ու ոժավածությունը, սահմանում եյին «մտավոր պասպորտ», կազմում եյին «մանկաբանական պասպորտներ»։ Վորպիսին հանդում եր վերջ ի վերջո այն բանին, վոր ավելի ու ավելի մեծ թվով յերեխաներ դաշում եյին մտավորապես հետամեցների, դեֆեկտավորների և «դժվար դաստիարակելիների» շարքը, հետազյում նրանց հեռացնելով նորմալ դպրոցից ուղարկում «հատուկ» դպրոցներն ու դասարանները։

Մրանից հետո ել հարկ չկա զարմանալ, վոր ահագին քանակությամբ նորմալ զարդացած ինտելեկտի տեր, բայց ինչ-ինչ պատճառներով վոչ առաջաղեմ սովորողներ մեխանիկորեն դասվում եյին մտավորապես հետամեց, դեֆեկտավոր և «դժվար դաստիարակելի» յերեխաների կատեգորիայում։

«Հատուկ» դպրոցները տարված յերեխաների «մանկաբանական» բնութագրությունները լեցուն են ամենատարբեր պատճառաբնություններով։ Շատ հաճախ հանդիպում են այսպիսի յեղրակացություններ։ Համառում ե, իրեն վատ և պահում դասերի ժամանակ, փախչում ե գասերից, ուշանում ե կամակորություն և անում, պահանջում ե, վոր մայրը նախաճաշին տա իր ուղածը և վոչ թե մոր ուղածը, վատ ե հիշում վոտանավորները, չգիտի բազմապատկության աղյուսակը, ախորժակ չունի. ցրված և ուշադրությունը և այլն, և այլն։

Լուսժողկոմաները, և առաջին հերթին ՌՍՖԽՆ լուսժողկոմատը, վոչ միայն չեյին պայքարում դպրոցների աշխատանքում յեղած այս խեղաթյուրումների դեմ, այլև ընդհակառակն իրենք եյին ստիպում դպրոցներին և ժողովրդական կրթության որդաններին կիրառել յերեխաների մասսայական «մանկաբանական»

ընտրություն և առանձնացնում «դժվար դաստիարակելիների», «դեֆեկտավորների» և այլ հատուկ դպրոցներում։

Ահա, որինակ, ՌՍՖԽՆ լուսժողկոմատի 1934 թվի մայիսի 20-ի կարգադրությունը բոլոր յերկրային և մարզային ժողկրթաժիններին։ Այդ «դիբեկտիվն» առաջարկում ե՝ «Սոցիալապես և մանկավարժորեն յերեխայի վրա թողնված յերեխաների կատեգորիաները պետք ե առանձնացնել ընդհանուր դպրոցներին կից հատուկ դասարաններում։ Սոցիալապես և մանկավարժորեն խորապես յերեխայի վրա թողնված յերեխաների համար պետք ե կազմել դպրոցներ՝ նրանց կից ինտենսաներով»։

Ինդ վորում պետք ե ամենայն ուժգնությամբ ընդգծել, վոր հնարելով «դժվար դաստիարակելի», «սոցիալապես և մանկավարժորեն յերեխայի վրա թողնված յերեխաներ» անմիտ տերմինները, ՌՍՖԽՆ լուսժողկոմատի զեկավարները նույնիսկ չեյին փորձում մտածել, թե յերեխաներից ովքեր պետք ե դասվեն այդ կատեգորիաներում և ի՞նչպես պետք ե տարվի աշխատանքը նրանց հետ։

Միայն սրանով կարելի յե բացատրել այն փաստը, վոր մանկաբանները «դժվար դաստիարակելի» յերեխաների շարքն եյին դասում շատ հաճախ նաև առանձնապես չնորհալի յերեխաներին, իսկ պրոՓ. Բլոնսկին «գիտականորեն» հիմնավորվում եր այդ անհեթեթ պրակտիկան։ Բլոնսկու կարծիքով այդպիսի յերեխաներ չեն կարող սովորել սովորական դպրոցում, քանի վոր «ուրաքրոցը, —նրա պնդումով, —համահարբում և յերեխաներին, նրանց բոլորին դարձնելով առավել կամ նվազ չափով միջակներ։ Առանձնապես համահարբում և նա բանվորների յերեխաներին, ընդ վորում նրանցից ամենազարգացածներին» (Բլոնսկի — «Տրցուակոլոնիկ», 1929 թ. հրատ., եջ 62)։

Այստեղից պրոՓ. Բլոնսկին անում եր այն յեղակացությունը, թե բարձր զարդացած ինտելեկտի տեր աշխակերտներն ամենից քիչ են շահում դպրոցից։ «Նրանց վերաբերմաք, —տասում ե պրոՓ. Բլոնսկին, —դպրոցի աշխատանքն ամենից քիչ ե արտադրողական, նա նույնիսկ արգելակում և նրանց մտավոր զարգացման տեմպը, այն ավելի յե դանդաղեցնում» (նույն տեղում, եջ 62—63)։

Ներկայումս ՀամԿ(բ)կ կե-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշման հիման վրա անց ե կացվում «դժվար դաստիարակելի» յերեխաների համար լուսժողկոմատների ստեղծած բոլոր դպրոց-

ների վերանայում, այն հաշվով, վոր յերեխաների հիմնական մասսան փոխադրվի նորմալ դպրոցները: Այս աշխատանքի առաջնական արգեն ցույց են տալիս, թե ի՞նչպիսի վիթ-խարի վնաս են հասցրել մանկաբանները մեր դպրոցին և աճող սերնդի ուսուցման ու դաստիարակման ամբողջ գործին:

Թե ինչի՞ յեր հանգել մանկաբանների «գործունեյությունը», այդ կարելի յէ տեսնել Ստալինգրադ քաղաքի դպրոցների որինակից:

Ստալինգրադ քաղաքում յերկու հատուկ դպրոցներում և առանձին ոժանդակ դասարաններում սովորում եյին 975 յերեխան—սովորողների ընդհանուր թվի յերկու տոկոսը: Դրանից բացի, մոտավոր հաշվով նորմալ դասարաններում տալիս ե մինչև 3000 յերեխա, վորոնք տեղեկանք ունեն մտավոր հետամշացության մասին: Այդ տեղեկանքներն առատորեն տալիս եյին դպրոցների մանկաբանները և Քաղաքահանի պրոֆիլոսուլտացիայի բժշկուհի Մուլինան:

Ընկ. Մուլինան տեղեկանք տալով, աշակերտի հետամշացությունը վորոշում եր այսպիսի «ճշուությամբ», որինակ՝ «հետամշացություն՝ 2 տարի, 7 ամիս, 10 որ»: Աշակերտները, «մտավորապես հետամշացի» պիտակ ստանալով, բարոյալքվում եյին, սկսում եյին վատ սովորել, խուլիզանություն անել: «Յեսիելադար եմ—տեղեկանք ունեմ: Ինձ ամեն ինչ կարելի յե», — հայտարարում եյին նրանք 53-րդ դպրոցի դիրեկտորին:

Ոժանդակ դպրոցներն ու դասարանները շատ ուսուցիչների համար մի միջոց եյին աղատվելու այն աշակերտներից, վորոնց հետ գժվար եր աշխատել: Մտավոր հետամշացության վերաբերյալ տեղեկանքներով քողարկվում եր առանձին ուսուցիչների անդրակիրճ աշխատանքը: 26-րդ դպրոցի 4-րդ դասարանի 38 աշակերտներից 11-ը «մտավորապես հետամշացի» բնութագիր եյին ստացել: Ստալինգրադ քաղաքի հենց միայն Զերժինսկի ռայոնում պլանով նախատեսվում եր նոր տարում բաց անել 16 ոժանդակ» դասարան:

Յերկրորդ ոժանդակ դպրոցի աշակերտների կազմի Քաղժողկրթամբնի կատարած վերանայումը ցույց տվեց, վոր 39 աշակերտ յենթակա յեն փոխադրվելու նորմալ դպրոցները, 57՝ հասակն անցկացրածների դասարանները, 43 աշակերտ՝ զեռահասների դպրոցները և միայն 12 հոգի մնում են ոժանդակ դպրոցում: Իշխանովյի մարդում անցյալ տարի մանկաբանները բաց թո-

ղին մոտ 6 հազար յերեխա: Կազմակերպված եր 14 ոժանդակ դպրոց, ուր հավաքված եյին մանկաբանների ջոկած 2272 աշակերտներ: Կուրյել-պոլսկի ոժանդակ դպրոցը ստուգելիս պարզվեց, վոր այնաեղ բոլոր յերեխանները նորմալ դարդացած են:

Մոսկվա քաղաքում անցյալ ուսումնական տարին վերջացնելուց առաջ Քաղժողկրթ: բաժինը վորոշեց ստուգել «մտավորապես հետամշաց» յերեխանների դպրոցների կազմը: Քաղժողկրթ: բաժնի հանձնաժողովը, ծանոթանալով դեֆեկտավորների դպրոցների աշակերտության մի մասի հետ միայն, պարզեց, վոր նրանցից 800 յերեխա պետք ե սովորեն սովորական դպրոցներում: Սարատով քաղաքում, չնորհիլ մանկաբանների լայն «գործունեյության», մոտ 700 աշակերտ «մտավորապես հետամշաց» եյին համարվել և դուրս չարտվել սովորական դպրոցներից այսպես կոչված «ոժանդակ դպրոցներն» ուղարկվելու համար:

Իսկ յերբ մանկաբաննական տքնաշանության «գործերի» ստուգում անցկացվեց 3-րդ «ոժանդակ դպրոցի» որինակի հիման վրա, ապա պարզվեց, վոր սովորական դպրոցներից դուրս չպրոտված «ոժանդակ դպրոցի» աշակերտներն ունեն 95% առաջադիմություն ուսուաց լեզվից, 96%՝ թվաբանությունից: Բնդհանուր առաջադիմությունը դպրոցում հավասար ե 93 տոկոսի՝ հիմնական առարկաններից, 99,1 տոկոս՝ մնացած առարկաններից: 197 աշակերտների միայն 4-ը կարդապահությունից վատ գնահատական ունեն: Ամբողջապես գերազանցիկները դպրոցում 23 հոգի յեն:

Կրոնշտադտ քաղաքում (Լենինգրադի մարդ) «ոժանդակ դպրոց» հավաքվել եյին 395 աշակերտ, այսինքն կրոնշտադտ քաղաքի աշակերտների ընդհանուր թվի 7%-ից ավելին: Դրանից բացի, մի շարք այլ դպրոցներում կային «մտավորապես հետամշացների դասարաններ»: Միայն վեց դպրոցի (1, 4, 6, 7, 8, 10) հաշվետությունների տվյալներով այնտեղ իբր թե տակավին կան «մտավորապես հետամշաց» 104 աշակերտ, «թույլ դարձացումով»՝ 86, «դանդաղաշարժ ընդունակություններով»՝ (?!)՝ 30 աշակերտ: Վերջապես, ույժողկրթամբնի թղթապանակներում կան 150-ից ավելի այնպիսի աշակերտների «գործեր», վորոնց մանկաբանները նշել են դպրոցներից փոխադրելու այսպես կոչված «ոժանդակ դպրոցները»:

Յեզ յեթե անցյալ ուսումնական տարին կրոնշտադտի գործուներում ավեց առատ յերկրորդ տարեցիներ (725 աշակերտ) և բոցներում ավեց առատ յերկրորդ տարեցիներ (725 աշակերտ) և

յերբողի տարեցիներ (100 աշակերտ), ապա դրա պատճառը մանկաբանների պրակտիկ-գիտական գործունեցությունն է, վորը վարագույր ծառայեց դպրոցի վատ աշխատանքի համար:

Շատ դպրոցների գիրքեկտորներ և վարիչներ իրենց հաշվետվությունների մեջ ուղղակի հայտարարում ենին, թե դասարանը չփոխելու պատճառները գտնվում են յերեխաների թույլ զարգացման և շրջապատող «միջավայրի» վատ աղղեցության մեջ։ Կրոնչտագլու քաղաքի 6-րդ դպրոցի նախկին վարիչը, «բացատրելով» դասարանը չփոխելու պատճառները, գրում եր. «Իմ դպրոցում մտավորապես հետամնացները 27 հոգի յեն, մանկավարժորեն յերեսի վրա թողնվածները՝ 44 հոգի, գործալիքները՝ 6 հոգի»։

Պարզ չե՞մ միթե, վոր դասարանը չփոխելու նման «բացատրությունը» վոչ այլ ինչ է, յեթե վոչ առաջադեմ դպրոցական-ների վերաբերյալ «մանակաբանական» իմաստակությունների կրկնությունը:

Թե ի՞նչպիսի անհեթեթ յեղակացությունների ելին հաս-
նում իրենք մանկաբանները դասարանը չփոխելու պատճառները
պարզելիս, այդ կարելի յե տեսնել հետևյալ որինակից: — Մոսկ-
վայի մանկաբանական լաբորատորիան տպագրության եր պատ-
րաստում «գիտական» մի աշխատություն «Յերկրորդ տարեցիների
հետազոտության արդյունքները» անունով: Այդ «աշխատության»
մեջ յերկրորդ տարեցիները կլասիֆիկացիայի յեն յենթարկված
ըստ բոլոր, վորպիսին կարելի յե յերեսակայել, վիճակագրական
խմբերի, մասնավորաբար՝ ըստ ծնողների զրազմունքների տեսա-
կի: Այդտեղ յերեխանները բաժանված են հետևյալ խմբերի. վո-
րակյալ և վոչ վորակյալ բանվորների յերեխաններ, բարձր և ցածր
վորակավորման տեր ծառայողների յերեխաններ, և վերջապես,
«այլք» բաժինը, ուր մտնում են գործազուրկները (?!), թոշակա-
ռունները, տնայնագործները և ալքոհոլիկները» (??!!): Այս կա-
տեգորիայի յերեխանները «գիտնական մանկաբանների» հաշվով
կազմում են 1-ին դասարանում՝ 4,4%, 2-րդ դասարանում՝
3,2% և այլն:

Կրոնչտաղտ քաղաքում ընկ . Զելենկովը (4-րդ դպրոց) , առաջով աշակերտների բնութագիրը յերկրորդ տարեցիությունը «բացարելու» առնչությամբ , զրում եր . «Թույլ զարդացում՝ 81 հոդի , մտավորապես հետամնաց՝ 7 հոդի , մանկավարժորեն յերեսի վրա թողնված՝ 8 հոդի , անփոյթ վերաբերմունք ուսման

Հանդեպ՝ 45 հոգի»: Իսկ ընկ. Իսակովը (1-ին դպրոց) մանկաբանների տերմիններին ավելացնում եր նաև իրը — «դանդաղաշարժ» ընդունակությունները»՝ 30 հոգի:

Մանկաբանական քրմության «զոհերը» շատ հաճախ դառնում եյին շատ ընդունակ և միանդամայն նորմալ աշակերտներ։ Վորոնեժ քաղաքում պսիխոհեվրոտիկների № 49 դպրոցն եյին ուղարկվել 3 տղա — Կոստյա Ս., Վիտյա Մ. և Վիլեն Կա., վորոնչ հետազոտում միանդամայն նորմալ և առողջ յերեխաներ դուրս բեկան։ Ահա թե այդ մասին ի՞նչ ե գրփում Վորոնեժի «Կոմունա» թերթում 1936 թվի Հուլիսի 9-ին։

12 տարեկան Ս. Կոստյայի մասին Վորոնեժի մանկաբաններին շատ բան ե հայտնի: Նրանք գիտեն, վոր Կոստյան ծնողների և փոքր յեղարոր հետ ապրում ե մաքուր ու լուսավոր սենյակում, վոր նա միշտ կուշտ ե, մաքուր լվացված, կոկիկ հազնված: Նրա հասակը, քաշը, ֆիզիքական զարգացումը միանգամայն նորմալ են և ամենափոքրիկ իսկ անհանգստության տեղիք չեն տալիս:

Վորպես մարդամոտ ու բարի յերեխան նա յեկալ 23-րդ դպր-ը ըստ: Յերբեմն միայն դասամիջոցը չեր հերթքում ընկերների հետ կուշտ ու կուռ խոսելու, խաղալու և չարություն անելու համար... նախ կոստյային «հակում ելին», հետո սկսեցին «հետազոտել»:

Վերջապես, քաղաքային մանկաբանական կարինետ կոչված կեղծ-գիտական հիմնարկում յեզրակացություն կազմեցին։ Կոստյան ուներ «շարժողական անհանգստություն և խորը մանկավարժական լինակ»։

Մ . Վիկտորի հայրն ու մայրը, մոռյեղբայրներն ու հորյեղբայրները նորմալ մարդիկ են նույնիսկ «գիտնական» մանկաբանների խանդավառությամբ : Յեվ ահա հանգիստ մի պառավ տարը, վորը 70 տարվա կյանք և անցկացրել, «կասկածելի» յեղություններից հետո մանկաբանները վերջնականապես վորոշեցին, վոր Վիկտորի տատն աննորմալ չափով լրակյաց և, հանգիստ, հանդարտ, ապատիկ և «կյանքը նրան չի գրավում» : Յեվ այդ հանդարտ, հանգիստ տատը բավական յեղավ Վիկտորին մանկաբանական մշակման վերջնելու համար :

Յեթէ յոթանասունամյա տատի մոռ ուզում են առանձին կրակոտություն ու աշխուժություն գտնել, ապա փոքրիկ Վիկտորին ունի այսպիսի հիմնական ախտեր. «Քնավորությամբ շար-

ժուն ե, ուրախ, դյուրաբորբռք, բայց վոչ շատ ... Յերբ նրան ասում են վաս վարքի մասին, աշխատում ե անմեղ տղա թվալ, խոսակցության մեջ յերեան ե հանում դպրոցական գիտելիքների ու կիսափորձի բավականաչափ պաշար»:

Այդ դպրոցն ընկավ նաև կա. Վիլենը, թեև նա, մանկաբանների ասելով, լավ ե սովորում, միջակից բարձր զարդացած ե, նկարչական ընդունակություններ ե ցուցաբերում: Բայց կա. Վիլենը հետաքրքրվում ե ճանապարհորդություններով ու դրա համար ընկնում ե պսիխո-նեվրոտիկների դպրոցը:

Իսկ ահա թե ինչ է գրում Սմոլենսկի քաղաքի 6-րդ վոչ-լրիվ միջնակարգ դպրոցի դիրեկտոր ընկ. Կլեցկինը:

«Այն դպրոցը, վորտեղ՝ յես այժմ աշխատում եմ վորպես դիրեկտոր, առաջ կոչվում եր «Յերկար որվա դպրոց»: Սմոլենսկում մեր դպրոցը վաս համբավ ուներ: Յուրաքանչյուր ուսումնական հիմնարկից այստեղ եյին ուղարկում «դժվար դաստիարակելի» յերեխաններին:

Ահա և հիմա, ուսումնական տարվա վերջում, դիմումներ սկսեցին տեղալ Սմոլենսկի շատ դպրոցներից...

Համարվեց 285 «դործ» մանկավարժական և մանկաբանական հարցաթերթիկներով:

Եես կարդացի այդ տողած թղթապանակները և հանդիպեցի այսպիսի մարդարիտների. «Բանվորի վորդի: Վորք: Փոխադրել «Յերկար որվա դպրոցը»; Զարմացա. ինչի համար են կազմալուծիչների դպրոցն ուղարկում մի տղայի, վորի միակ «մեղքն» այն ե, վոր վորք ե:

Ահա իմ առջեն ե մանկաբանական վորոնումների հիման վրա կազմված մանկաբանական-մանկավարժական հարցաթերթիկը... 3-րդ միջնակարգ դպրոցի դասարանային ղեկավար Բոլինան գրում ե. «ընդհանուր առաջադիմությունը լավ ե և միջակ: Զարդացման ընդհանուր մակարդակը լավ ե: Խոսքին լավ ե տիրապետում: Ուսումնական նյութը յուրացնում ե խելացի կերպով: Ուսման ժամանակ իրեն վայելուչ ե պահում: Տրամադրությունը մուայլ ե, սիրում ե քնքույշ վերաբերմունքը»: Այդպիսին ե բարեհաջող կերպով 5-րդ դասարան փոխադրված աշակերտներից մեկը, իսկ դրա կողքին մանկաբանի յեղբակացությունը, վոր արլած ե «զիտական հետազոտությունների» հիման վրա. «Ուզարկել Յերկար որվա դպրոցը»:

Նույն 3-րդ դպրոցի 4-րդ «ը» դասարանում սովորում ե Ս.

Կ. Ն: Նա բանվորի վորդի յե: Մանկաբանական-մանկավարժական բնութագրության մեջ նրա մասին ասված ե հետևյալը. «Իր զարդացման մակարդակով հետ չի մնում դասարանից: Լեզուն աղքատ ե: Խոսակցությունը՝ վոչ ճիշտ: Ընդունակ ե մաթեմատիկայից, սիրում ե պատմությունը և աշխարհագրությունը: Այս տարի սիրեց ընթերցանությունը, — խիստ շատ ե կարդում: Պիոներական ժողովները հաճախում ե և ակտիվ մասնակցություն ունենում»:

Կարդալով այս բնութագրությունը, կարելի յեր միայն ուշրախանալ այդ տղայի համար: Բայց, ավա՞ղ, մանկաբանական լաբորատորիայի խմասուները յերեխային մի մանրակրկիտ հետազոտության ել են յենթարկում և վորոշում՝ «Յերկար որվա դպրոցը»:

Ահա 3-րդ միջնակարգ դպրոցի աշակերտ Գ. Ս. Ն: Ռւղղվելու համար նրան մեղ մոտ են ուղարկում: Նրան կշամքում են հետեւյալում. «Սոցիալապես յերեսի վրա յե թողնված, նրա իդեալն ե հանդիսանում անապաստաների. կյանքը, կրոնը չեսիրում (?!), թշնամանք չկա ուրիշ ազգությունների նկատմամբ» (?!):

Մյուս դպրոցներից կազմալուծիչներին իմ դպրոցը փոխադրելու վերաբերյալ դիմումների թիվն ավելանում եր: Այդ թիվը հասավ 340-ի: Այն ժամանակ յես վորոշեցի ինքս ձեռնամուխ լինել դպրոցի կոմպլեկտավորման գործին: Ծրջադաշտեցի բոլոր դպրոցները, ծանոթացա կազմալուծիչների բոլոր թեկնածուների հետ և վորոշեցի, վոր կվերցնեմ միայն 63 հոգու: Քաղմողկրթամանի վարիչ ընկ. Ռեյնգուլդը բարկացավ.

«Ինչպես ուղղում ես, Կլեցկին, բայց վերցրու 150:

— Բայց վո՞րտեղից վերցնեմ 150 խական կազմալուզիչ, — առարկեցի յես: — Այլքան չկա Սմոլենսկում:

— Վերցրո՞ւ, վորտեղից ուղղում ես, բայց 150-ից պակաս չկա: — պատասխանից ինձ Ռեյնգուլդը»:

Այս թղթակցության համար կոմենտարիաներն ավելորդ են: Փաստերն իրենք են խոսում իրենց մասին: Նրանք ցույց են տալիս, վոր ժողովրդական կրթության որդանները վոչ միայն չեն պայքարել «մանկաբանական» խեղաթյուրումների վեմ պարուացներին մանկաբանական հաղորդականության աջակողությանը: Նմանապես մանկաբանների «գործունեյության» աջակողությանը իրենք պահպանում են դպրոցների դիրեկտորները: Ավելին. շատ դպրոցների դե-

բեկտորները և ուսուցիչները, անբարեխիղմ վերաբերմունք ունենալով դեպի իրենց պարտականությունները, մանկաբանների «գործունեյությունը» գիտում եյին իրք յուրատեսակ մի շիրմա ծածկելու համար դպրոցի աշխատանքում յեղած թերությունները յերեխանների ուսուցման և դաստիարակման ուղղությամբ։ Պերմ քաղաքում անցյալ ուսումնական տարվա վերջում Քաղաքային ժողկրթաժինը Բուխարեվյան դպրոցի դիրեկտորին ուղարկեց մանուկների գիտության տեղական «քրմի»՝ մանկաբանի մոտ, վորպեսզի վերջինս հիշյալ դպրոցը զնա վորոշելու յերեխանների մտավոր հետամնացությունը, վորպիսիք, դիրեկտորի հայտարարության համաձայն «խիստ շատ են բոլոր դասարաններում»։ Այն զարմացական հարցին, թե վորոնք են՝ «մտավորապես հետամնաց» յերեխանների թիվն ուսումնական տարվա վերջում անսպասելիորեն ավելանալու պատճառները, դիրեկտորը հանդիսատ պատասխանեց. «Մեզ հարկավոր ել չեայդ յերեխաններին ընդմիշտ ուղարկել «մտավորապես հետամնացների» դպրոցը, այլ հարկավոր ե միայն վորոշել «մտավորապես հետամնացների» թիվը, վորպեսզի նրանք չպակասեցնեն առաջադիմության ընդհանուր տոկոսը»։

Աշակերտների հանդես դպրոցի դիրեկտորների այսպիսի ծաղրական, բացահայտութեն հանցագործ վերաբերմունքի, այդ աշակերտների զգալի մի մասին «մտավորապես հետամնաց» յերեխաններ պատկերացնելու փորձերի մեջ շատ ցայտուն կերպով դրսեվորվում է իր դպրոցի ուսումնական աշխատանքի թերությունները կոծկելու և դպրոցականների անառաջադիմության ամբողջ մեղքը յերեխանների վրա գցելու գիտակցական ձգումը։

Այսպես կոչված մտավորապես հետամնաց յերեխանների դպրոցն ուղարկելու համար աշակերտների մասսայական ընտրություն կատարելուն զուգընթաց Պերմ քաղաքում աղաղակող խայտառակություններ տեղի ունեցան։ Յերեխաններին ջոկում եյին ամենատարբեր դրդապատճառներից յելնելով, անկախ նըրանց զարգացման մակարդակից և ընդունակություններից։ Յերեմն ջոկում եյին նաև շատ ընդունակ աշակերտների, վորոնք լավ առաջադեմ եյին, բայց մեկ պատճառարանություն թերելով՝ «ժամանակավորապես»։

Դպրոցների դիրեկտորները և ուսուցիչները փոխանակ պարքարելու «մանկաբանական խեղաթյուրումների» գեմ, իրենք եյին հաճախ մանկաբանների «իդեանների» կիրառողները հանդիսա-

նում։ Դրա ցայտուն որինակն են հանդիսանում Ենգելս քաղաքից (Պովլովյեյի գերմանացիների իՍլիչ) հաղորդված փաստերը։ Դպրոցների դիրեկտորների և վարիչների խորհրդակցությունը Ենգելս քաղաքում դիրեկտոր Պոլոսիննիկը առանձին դասարանների աշակերտների անառաջադիմությունը փորձում եր բացատրել նրանով, վոր այդ աշակերտները դպրոց եյին յեկել բանվորական ռայոնից։ Իսկ տարրական դպրոցների ուսուցիչների կոնֆերանսում 5-րդ դպրոցի ուսուցչուհի Պանչենկոն հայտարարեց. «զասարանը վատ ե, աշակերտներն ուսման մեջ առաջադեմ չեն այն պատճառով, վոր նրանք բեռնակիր բանվորների յերեխաններ են»։

Ել ավելի ցայտուն փաստ տեղի ունեցավ Մինսկ քաղաքում։ 42-րդ դպրոցը ստուգելիս պարզվեց, վոր առաջին դասարանի 46 աշակերտներից յերկրորդ դասարան եյին փոխադրվել միայն 3 հոգի։ Այդ դասարանի ուսուցչուհի Դյատլենկոն, վորը դպրոցում աշխատում ե 20 տարուց ավելի, այն հարցին, թե վո՞րոնք են այդպիսի ցածր առաջադիմության պատճառները, հայտարարեց, թե այդ դասարանի համարյա բոլոր աշակերտները մանկաբանական հետազոտության համաձայն դասվել եյին մտավորապես հետամնաց յերեխանների կատեկորիստում։ Ընդվորում այդ հանցագործ «մանկաբանական» հետազոտությունն անց եր կացվել իրեն՝ ուսուցչուհի Դյատլենկոյի նախաձեռնությամբ, վորը, յեզրակացություն ունենալով այն մասին, վոր յերեխաններն իրեւ թե «մտավորապես հետամնաց» են, վոչ մի աշխատանք չեր տարել դասարանում։ Ավելին. նա նույնիսկ ձգտել եր, վոր իրեն բարձր աշխատավարձ տրվի մտավորապես հետամնաց յերեխանների հետ աշխատելու համար։ Դրանից բացի, ուսուցչուհի Դյատլենկոն նույնիսկ այստեղ եր հասել, վոր առաջարկել եր իր աշակերտների ծնողներին, իրեն լրացուցիչ կերպով վճարել, — այն ժամանակ միայն կոուզորեցնի յերեխաններին։ Նրա աշակերտների մի քանի ծնողներ ստիպված եյին յեղել նրան հատուկ գարձ վրձարել։ Յեվ միայն ժողովրդական կրթության որդանների ուշացած միջամտությունը դադարեցրել եր ուսուցչուհի Դյատլենկոյի այդ հանցավոր զործողությունները։

Շատ հետաքրքիր ե այդ դպրոցում կատարված «մանկաբանական հետազոտության» հաշվետվությունը։ Այդ հաշվետվությունը կոչվում ե՝ «Մանկաբանական հետազոտություն 42-րդ

դպրոցի առաջին անգամետ դասարանում»: Ահա թե ի՞նչ ենք կարգում այդ հաշվետվության մեջ.

«1) Ռողա — 8 տարեկան, մատավորապես հետամնաց, ծանրաբեռնված ժառանգականություն, տատը հոգեկան հիվանդ ե, հայրը՝ զղային.

2) Ժենյա — 8 տարեկան, 5 ամսական, — թույլ կողմնորոշում, զղացգություններ ե ունեցել 8 ամսական ժամանակ, կես տարեկան յեղած ժամանակ ընկել ե վառարանից, յերկու ե կես տարեկան յեղած ժամանակ ընկել ե ջրով լեցված տակառը:

3) Ռեմա — 8 տարեկան, թույլ կողմնորոշում, փոքր ժամանակ զլուխը ջարգվել ե, հարկավոր ե մի տարուց հետո ստուդել, թե պե՞տք ե արդյոք դպրոց հաճախի.

1) Ջանյա — 8 տարեկան, կարճահասակ, հաճախել ե հրեյական մանկապարտեղը, տալիս ե մեկ տարվա և վեց ամսվա հետամնացություն, ձախլիկ ե.

5) Խանա — 8 տարեկան, ընդհանուր զարգացումը թույլ ե, վոտքը զարս ե ընկած ի ծնե.

6) Լիզա — 8 տարեկան, հայրը ծերունի յե, շատ ե չփացնում լիզային:

7) Լյուրոցիլյա — 8 տարեկան, ծույլ ե, մորից լքված, մեքանի անդամ ընկել ե, ամուսինը թողել ե (?!):

8) Վլադիմիր — 8 տարեկան, ինտելեկտը նորմալ ե, ամբողջ թերը անդարդացած ե, ամբողջ ձեռքը մի քիչ կարճ ե աջից, ձախից ե:

Այս դասարանի մնացած բոլոր յերեխաներն այս վոգով բնութագիր ունեն: Յեվ Հենց այսպիսի բնութագրերի հիման վրա 46 աշակերտից միայն 3-ը փոխադրվել ելին 2-րդ դասարան, 16 հոգի նշված եր ուղարկել ուժանդակ դպրոց, 1 հոգի պսիխո-նեվրոտիկների դպրոց, իսկ մնացածներն թողնվել ելին նույն դասարանում:

Մենք բարեխիղձ կերպով արտագրեցինք այս բոլոր բնութագրերը «մանկաբանական» հաշվետվությունից, վորպեսի ցույց տանք, թե ինչպիսի անհեթեթության ելին հասնում իրենց աշխատանքում մանկաբանները, նրանց հետ մեկտեղ նաև ուսուցիչները:

Նման որինակներ կարելի յե բերել անթիվ քանակությամբ: Նբանք բոլորն ապացուցում են մի բան, այն ե՝ մանկաբանների ամենավիճակար, ուղղակի հանցագործ դործունեյությունը

դպրոցում: Միայն Համկ(թ)կ կենարոնական կոմիտեյի վճռական միջամտությունը վերջ դրեց դպրոցում տեղի ունեցող այդ խեղթյուրումներին:

«Մանկաբանական» խեղաթյուրումները թափանցել ելին կոչ միայն լուսժողկոմատների սիստեմը: Այդ խեղաթյուրումները շատ ուժեղ արմատներ ունեն նաև յերեխայի պահանջմունքների աղասարկման հետ առնչություն ունեցող մյուս կադմակերպություններում: Մանկական խաղալիքի հարցի շուրջը Համեկօթել թյուններում: Մանկական խաղալիքի սուրջը հարցին, թե ինչու կերպով հարավիրած խորհրդակցությանը այն հարցին, թե ինչու արտասահմանյան նմուշներով ավտոմոբիլային «մեքենաներ» չեն արտադրվում, թե Սֆինք Տեղարդողկոմատի խաղալիքների սեղարտադրությունը լինի թյուրի կլասավոր ինժեները Մ. Դ. Ռոգատկինը հայտաբարեց: տորի գլխավոր ինժեները մեր յերեխաներն այդպիսի «մեքենաներ» կհամարեն: «Միթե մեր յերեխաներն այդպիսի «մեքենաներ» կհամարեն: Կմերիկացիները շատ ավելի խելամիտ և կուլտուրական են: Չե՞ Վմերիկացիները համարական մինչև ուսույական թեսների, վորոնց արմատները հասնում են մինչև ուսույական թեսներին:

Պարզ չե՞ միթե, վոր նման գատողություններ վոչ այլ ինչ յեթե վոչ արձագանքները «մանկաբանական» խեղաթյուրումների, վորոնց արմատները հասնում են մինչև ուսույական թեսներին:

Միմիայն ժամանակակից մանկաբանության թեորիայի ուղղակատիկայի և նրա արմատների ամենավճռական ու հետեղապահական մերկացումը կապահովի բոլոր «մանկաբանական» խեղաթյուրումների և այն վիթխարի վնասի հաղթահարումը, վոր թեսների և ներ խորհրդային դպրոցին մանկաբանության կեղծ գիտությունը և նրա կրողները՝ մանկաբանները:

Համկ(թ)կ կենարոնական կոմիտեն կատեգորիկ կերպով առաջարկեց լուսժողկոմատներին անհապաղ լիկվիդացիայի յենուագրել մանկաբանների ողակը դպրոցում, ցանկացող պրակտիկ մանկաբաններին փոխադրելով ուսուցչական աշխատանքի:

5. ՄԵՐ ԽՆԴԻ ԲՆԵՐԸ

Համկ(թ)կ կե-կ 1936 թվի հունիսի 4-ի վորոշումը պարունակում ե լուսժողկոմատների սիստեմում յեղած մանկաբանական դպրությունների սպառիչ քննադատությունը. նա ջախախիչ խեղաթյուրումների

Հարված և հասցնում մանկաբանություն կեղծ-դիտությանը և նրա կրողներին՝ այսպես կոչված մանկաբաններին:

Համկ(բ)կ ԿԿ-ի վորոշումը մատնանշում ե, վոր մանկաբանական խեղաթյուրումները լուսաժողկոմատների սիստեմում կարող ելին տեղի ունենալ միայն այն պատճառով, վոր լուսաժողկոմատներն արհամարհական վերաբերմունք ելին ցուցաբերում մանկավարժական դիտության և պրակտիկայի դեկալարման հանդեպ, վորի հետևանքով գլորոցի մահացման հակագիտական, տղետ թերիան, վորը կուսակցության կողմից դատապարտվել ե տակավին հինգ տարի առաջ, շարունակում եր մինչև վերջին ժամանակներս ընդունվել լուսաժողկոմատներում և նրանց տեղական որգաններում:

Լիովին համեստալի յե, վոր այդ վորոշումը պատմական նշանակություն ունի մեր խորհրդային գլորոցի հետագա ամրացման և ուսուցչի վորդ ուսումնա-դասախտիարակչական աշխատանքի վորակի վճռական բարձրացման դործում:

Իսկ ի՞նչպիսի կոնկրետ խնդիրներ ե դնում Համկ(բ)կ ԿԿ-ը 1936 թ. հուլիսի 4-ի վորոշումով ժողովրդական կրթության որդանների, մեր գլորոցի և ուսուցչության առաջ:

Առաջին կարեռազարյան խնդիրը — դա ամենակարճ ժամանակամիջոցում լուսաժողկոմատների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումները լիկիդացիայի յենթարկելն ե, մանկաբանների «դիտական» աշխատությունների սպառիչ, ծավալուն քննադատություն տալը, մանկավարժական ուսումնական հիմնարկներում մանկաբանություն կեղծ-դիտության դասավանդումնանապաղ վերացնելը, մանկաբանության վերաբերյալ գրականությունը՝ վորպես վնասակար դրականություն՝ մեջտեղից վերացնելը, գլորոցում մանկաբանների ողակը լիկիդացիայի յենթարկելը և գլորոցում յեղած մանկաբանական խեղաթյուրումներն ու մեր խորհրդային գլորոցին և յերեխաններին նրանց պատճառած վնասը հաղթահարելը:

Համկ(բ)կ ԿԿ-ը պահանջում ե վոչ թե ձեւականորեն կատարել այս խնդիրները, այլ այն, վոր գլորոցի յուրաքանչյուր աշխատող, և առաջին հերթին ուսուցիչը, կիրառի միանդամայն կոնկրետ և իրական միջոցներ իր բնագավառում մանկաբանական խեղաթյուրումների բոլոր հետևանքները վերացնելու ուղղությամբ:

Մանկաբանական խեղաթյուրումները խորհրդային գլորոցում,

ինչպես արդեն նշվեց վերեւում, ուժեղ չափով յերեան ելին գալիք դասարանների կոմպլեկտավորման, դպրոցականների ուսումնասիրության, առանձին աշակերտների անառաջադիմության պատճառները պարզելու, դպրոցականներին դասարանից-դասարան փոխադրելու, աշակերտների մեջ դաստիարակչական աշխատանք կատարելու, դպրոցականների կարգապահության, հատկապես դպրոցական ռեժիմի մեջ չտեղափորվող դպրոցականների կարգապահության հետ կապված հարցերը պարզելու, ժամանականական խեղաթյուրումները լիկիդացիայի յենթարկելու անհրաժեշտությունը պահանջում ե այժմ արմատապես վերանայել սահմանված պրակտիկան այս բոլոր հարցերը վճռելու դործում, ինչպես նաև պարտավորեցնում ե բոլոր ուսուցչներին, դպրոցների ուսումնական մասի վարիչներին և դիրեկտորներին վերին աստիճանի պատասխանատու և ուշադիր մոտեցնում ունենալ դեպի իրենց վրա դրված խընդիրների լուծումը:

Շատ կարեոր նշանակություն ունի այժմ այն աշխատանքը, վոր կատարվում և Համկ(բ)կ ԿԿ-ի դիրեկտիվների համաձայն այսպես կոչված «ոժանդակ գլորոցների» աշակերտների կազմը վերանայելու ուղղությամբ:

Այդ վերանայման առաջին արդյունքներն ցույց են տալիս, թե ի՞նչպիսի վիթխարի վնաս և պատճառել մեր խորհրդային յերեխաններին և գլորոցին մանկաբանների «գործունեյությունը»:

Այս աշխատանքը կատարելիս անհրաժեշտ է ապահովել ուշադիր ու նրբազդաց մոտեցնումը այսպես կոչված «ոժանդակ դըպրոցի» յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, այդ գլորոցականների ճնշող մեծամասնությունը վերադարձնել նորմալ գլորոցները և համապատասխան բարենպաստ պայմաններ ստեղծել ուսումնը շարունակելու համար:

Փաստերն ազդանշում են, վոր մի քանի գլորոցական աշխատողներ նորմալ պայմաններ չեն ապահովում ոժանդակ դըպրոցներից վերադարձվող աշակերտների համար: Այնինչ նրբազդաց վերաբերմունքով և նրանց մասին ամենորյա հոգացողությամբ, ուսման դործում մեծագույն ոգնություն ցույց տալով անկանած կարելի յե չատ կարծ ժամանակամիջոցում բոլոր յերեխաններին հաղորդակից գարձնել նորմալ գլորոցի մանկական կողեկտիվի հետ:

Առանձին ուսուցչներ այժմ այն մտավախությունն են հայ-

նում, թե ոժանդակ դպրոցներից յերեխաների այլակիսի զդալի մի խմբի վերագրածը նորմալ դպրոցները հանկարծ հետ քաշի մանկական կոլեկտիվին և պակասացնի նորմալ դպրոցի առաջադիմությունը:

Միանդամայն ակնհայտ ե, վոր այս մտավախությունները բացարձակապես վոչ մի առողջ հող չունեն իրենց տակ, ուստի և պետք ե վնասականորեն մերժվեն: Ոժանդակ դպրոցներից նորմալ դպրոցները վերագրածող յերեխաները մեծ մասամբ հեշտությամբ են հավասարվում ամբողջ մանկական կոլեկտիվի հետ և կկարողանան շուտով տիրապետել ուսումնական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութին:

Տեղերից ստացված տեղեկություններն ասում են, վոր ժողովական կրթության որդամները տակավին չեն ապահովում այդ աշխատանքի կոնկրետ, ովերատիվ զեկավարությունը: Այս թերությանը անհրաժեշտ ե վճռականորեն վերջ տալ և ապահովել չամկ(բ)կ կերպով կատարումն ամենակարճ ժամանակամիջոցում:

Յերկրորդ կարևորագույն խնդիրն ե՝ անհապաղ վերականգնել խորհրդային մանկավարժության իրավունքները, մոռացված դրությունից դուրս բերել մանկավարժական կրթության դործը յերկրում, արմատապես վերակառուցել և պատշաճ բարձրության վրա գնել ուսուցչական կազմերի պատրաստումը, ընդհուպ դրազիւլ դաստիարակության խորհրդային սիստեմի կարևորագույն պրոբլեմների մշակումով, ծավալել և արմատապես բարելավել գիտա-հետազոտական մանկավարժական աշխատանքը, հատկապես դպրոցական աշխատողների բազմամարդ բանակի բաղմակողմանի, հարուստ փորձն ընդհանրացնելու ուղղությամբ, վերջապես, հարկ յեղածին պես դրազիւլ խորհրդային դպրոցականով, նրա զարգացման, վարքի ուսումնասիրությամբ, և այլն:

Խորհրդային մանկավարժության իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը պահանջում է ժողովրդական կրթության որդաններից, և առաջին յերթին լուսժողկոմատներից, որական մեծ աշխատանք:

Անցյալ տարիներում շատ բան ե արվել խորհրդային մանկավարժությունը վերացնելու և ուսուցչի գերը նսեմացնելու համար: Այժմ, դպրոցի զեկավարման գործում յեղած «ճախ» խեղաթյուրումների հետազա մերկացման հիման վրա, համառ աշխատանք կա կատարելու մանուկների վերաբերյալ իսկական

մարքսիստական դիտության վերականգնման, ինչպես և խորհրդային մանկավարժի դերի բարձրացման և ամրացման բնադապում:

Իսկ ի՞նչպիսի կոնկրետ խնդիրներ են ծառացած մեր առջև: Այնից առաջ անհրաժեշտ ե այժմ իսկ նշել մանկավարժական կրթության հստակ սփառեմ, հստատապես սահմանել, թե վո՞ր դիտությունները պետք ե դասավանդել մեր մանկավարժական դիտությունները պետք և դասավանդել մանկավարժական դասավանդելում, վերջնականապես վորոշել ուսուցման ժամկետները, ուսանողների՝ այդ ապագա ուսուցիչների կողմից մանկավարժական ունակություններ ձեռք բերելու կարգը կողն: Միանդամայն ակնհայտ ե, վոր, վերականգնելով մանկավարժությունը վորպես գիտություն, բարեկավելով նրա դասավանդումը մեր մանկավարժական ուսումնական հիմնարկներում, հարկավոր ե նաև վճռել մանկավարժական ուսումնական հիմնարկների ուսումնական պլանների մեջ այնպիսի դիսցիպլիններ մտցնելու հարցը, վորոնք սահմանակից են մանկավարժությանը, լրացնում են այն և ոգնում են նրան յերեխային լավ ճանաչելու այդ յերեխայի հանդեպ մանկավարժական ճիշտ մոտեցում վորոշելու համար ապագա ուսուցիչներին իրոք զինելու իմաստով: Մանկավարժության հետ աշխամոտիկ առնչություն ունեցող գիտություններն են հանդիսանում այնպիսի գիտությունները, ինչպես անատոմիան, Փիզիոլոգիան և հոգեբանությունը: Լուսժողումատները պետք ե այժմ այնպես կազմակերպեն ուսուցիչների պատրաստումը, վոր ուսանողները—ապագա ուսուցիչները—բավարար գիտելիքներով զինվեն այդ գիտությունների բնադապավարագուր պատկերացում ունենան զանազան տարիքի յերեսում և պարզ պատկերացում այստեղ նրանումն ե կայանում, վոր համերի պսիխո-Փիզիքական առանձնահատկությունների մասին:

Եթե մեծ տարակույներ չեն հարուցում անատոմիայի և ֆիզիոլոգիայի գիտելիքներով ուսուցիչներին զինելու անհրաժեշտ գիտելիքների գատկավես յերեխայի վերաբերմաք, ապա տության հարցը, հատկապես յերեխայի վերաբերմաք, ամենաներին անմշակ ե այն հարցը, թե ի՞նչպես պետք ե լինի մեր խորհրդային մանկավարժական դպրոցում հոգեբանության կուրսուրհրդային մանկավարժական դպրոցում շահանումն ե կայանում, վոր հոսք: Հնարակոր վտանգն այստեղ նրանումն ե կայանում, վոր հոսքը: Գիտական դիտության ներկայացուցիչները, մանկարանություն կեղծ-գիտության և նրա կրողների՝ մանկաբանների մերկացումից լիկվիդացիայից հետո, կարող են մեծ ցանկություն ցուցելու վերեխայի ուսումնասիրության նկատմամբ իրենց մոցաբերել յերեխայի ուսումնասիրությամբ: Յերեխայի ուսումնասիրությամբ հայտարարելու ուղղությամբ:

բության այլպիսի մոնոպոլիա մենք չենք կարող թույլ տալ վո՛չ հոգեբանության ներկայացուցիչների կողմից, վոչ ել յերեխաներին ուսումնասիրող մյուս գիտությունների (անատոմիայի, Փի-զիոլոգիայի և այլն) ներկայացուցիչների կողմից։ Հոգեբանության մի քանի պրոֆեսորներ հեռու չեն այժմ հանդես դար մանկավարժական ուսումնական հիմնարկներում մանկաբանության փոխարքն այնպիսի առանձին կուրսեր, ինչպես «մանկան հոգեբանություն», «մանկավարժական հոգեբանություն», «դպրոցական հոգեբանություն» ևայլն, ևայլն դասավանդելու «պրոֆեկտունը»։ Մեր կարծիքով, այժմ վոչ մի անհրաժեշտություն չկազբաղվելու ինչ-վոր «նոր», հատուկ կուրսերի մշակումով, վորոնք փոխարինեն մանուկների վերաբերյալ նախկին «ունիվերսալ» գիտությանը՝ մանկաբանությանը։ Հարկավոր ե առաջին հերթին ողտագործել անցյալի այն հարստագույն մանկավարժական ժառանգությունը, վորը մինչեւ այժմ անտեսվում եր լուսժողկոմատների որգանների կողմից։ Այնինչ անցյալի այդ մանկավարժական ժառանգությունը խիստ շատ կոզնի մեր խորհրդային ուսուցչին՝ նրան մանկավարժական վարպետությամբ զինելու գործում։ Ինքնին հասկանալի յե, վոր ապագա ուսուցիչներին անատոմիայի, ֆիզիոլոգիայի և հոգեբանության բնագավառի գիտելիքներով զինելիս, մանկական անհատականության, նրա զարգացման և դաստիարակման առանձնահատկությունները պետք ե գտնվեն ուշադրության կենտրոնում։ Իսկ մանկական հոգեբանության, մանկավարժական հոգեբանության, դպրոցական հոգեբանության և այլ նոր, ինչ-վոր «հատուկ» կուրսեր ստեղծել—կնշանակի հետ գնաւ «մանկաբանությունը» վերականգնելու ուղիով—միայն թե այլ անվան տակ։

Ամենից ավելի կարեոր նշանակություն ունեն այժմ, իհարկե, մանկավարժության՝ վորպես մանուկների վերաբերյալ կարևորագույն գիտության վերականգնումն ու հետազա զարգացումը։ Մանկավարժական գիտությունների բնագավառում մեր տեսական միտքը զարգացնելու նպատակով անհրաժեշտ ե նախ և առաջ ծավալել վերջին տարիներս խորհրդային առաջավոր ուսուցիչների կուտակած մանկավարժական փորձի լավագույն նմուշների ուշադիր և սիստեմատիկ ուսումնասիրությունն ու ընդհանրացումը։ Լավ դասերը և յերեխաների ուսուցման ու դաստիարակման գործում լավագույն նմուշների հասնելու «գաղտնիքը» պետք ե դասավան առանձնապես խնամքոտ ուսումնասիրության առաջեա-

այդ լավագույն նմուշները պետք ե լայն լուսաբանություն ստանան մեր խորհրդային մամուլում, առաջին հերթին մանկավարժական մամուլում։ Հասկանալի յե, պրակտիկ ուսուցիչները, հատկապես խորհրդային դպրոցի լավագույն ուսուցիչները, կարող են և պետք ե մեծ ողնություն ցույց տան խորհրդային մանկավարժությունը վերականգնելու գործին։

Վոչ մի կասկածի յենթակա չե, վոր մանկավարժական ուսումնական հիմնարկներում մանկավարժական կուրսի շասուվանդման խնդիրները ներկայումս շատ բարդացել և ընդարձակվել են։ Մանկավարժություն դասավանդող գիտական աշխատողների վրա այժմ մեծ պատասխանատվություն ե դրվում։ Նրանք պետք ե յերեխաների դաստիարակման գիտությունը դարձնեն լիարյուն գիտություն, վորն ապագա ուսուցչին ինչպես պետքն ե զինի մանկավարժական վարպետությամբ։ Ապահովելով ուսանողների լայն ընդհանուր կրթությունը, մեր մանկավարժական ուսումնական հիմնարկները պետք ե ապագա ուսուցիչներին զինեն յերեխայի, նրա տարիքային առանձնահատկությունների լավ ճանչողությամբ, այդ յերեխայի նկատմամբ մանկավարժական ճիշտ մոտեցում ունենալու ունակություններով, դպրոցի, նրա կազմակերպման, դասավանդման այն մեթոդների հիանալի գիտությամբ, վորոնք մեծագույն եֆեկտ տան յերեխաների ուսուցման գործում։ Այդ ապահովելու համար, մանկավարժական ուսումնական հիմնարկները պետք ե մանկավարժության դասավանդումն այնպես զնեն, վոր նա դառնա առաջատար գիտակալին։ Նմանապես անհրաժեշտ ե արմատապես բարելավել նաև առարկայական մեթոդիկաների դասավանդումը։

Վերջին հանդամանքն առանձնապես կարեոր ե ընդգծել նրա համար, վոր առարկայական մեթոդիկաները մինչեւ այժմ գտնվում են մոռացված վիճակում։ Նրանց այնպիսի տեղ է հատկացվում մանկավարժական ուսումնական հիմնարկների ուսումնական պլաններում, վոր հազիվ թե հնարավոր ե առանձին ուսումնական առարկաների դասավանդման գործում ուսուցչին զինել լավագույն մեթոդներից ոգտվելու գիտությամբ և կարողությամբ։ Առարկայական մեթոդիկաները պետք ե լինեն կատարելապես կոնկրետ, նրանք պետք ե հիմնավորեն այս կամ այն ուսումնական առարկայի ուսումնական նյութի ծավալը, բացարեն ուսումնական ծրագրերի հիմնական բաժինների նշանակությունը, ապագա ուսուցչիներին զինեն ուսուցման ամենից

ավելի եֆեկտավոր պրիոմներով ու յեղանակներով։ Դրա համար ել նրանք պետք ե ապագա ուսուցիչներին մանրամասնորեն ծառաթացնեն դիդակտիկական նյութն ոգտագործելու, ակնառու պիտույքներ կիրառելու և այլ պրիոմների հետ։

Առարկայական մեթոդիկաները պետք ե նաև բավականաչափ ուշադրություն դարձնեն այնպիսի հարցերի, ինչպես կայուն գտառադրքերի վերլուծությունը, դասերի բաժանումն ինչպես դասարանում, այնպես ել տան համար, տվյալ առարկայից աշակերտների դիտելիքների գնահատումը, դիտելիքներն ամբացնելու պրոբլեմը, մասնավորապես անդիր սովորելը ևայն, ևայն։

Առարկայական մեթոդիկաները, դրանից բացի, պետք ե տան ինչպես տվյալ ամբողջ առարկայի, այնպես ել նրա առանձին բաժինների դասավանդման մեթոդների հանրակողմանի պատմական լուսաբանությունը։

Յեթե զեռևս վոչ շատ ժամանակ առաջ դպրոցում ուսումնական առարկաների դասավանդման գործում ժողովրդական կը թության որդանները հաճախ բռնում եյին պրակտիկայում չըստուղված մեթոդները դպրոցում արմատավորելու ճանապարհը, մեթոդական պրոֆեկտորության ճանապարհը, ապա այդ բղնում եր այն բանից, վոր նրանք թերագնահատում եյին և չդիտեյին մանկավարժությունը՝ վորպես դիտություն՝ և առաջին հերթին առարկայական մեթոդիկաները։

Մեր սոցիալիստական յերկիրն աճեցրել ե տարբեր ազդությունների տասնյակ միլիոնավոր ակտիվ, յեռուն ստեղծագործական աշխատանքի ձգտող աշխատավորների։ Մեր յերկիրն աճեցնում ե սքանչելի մանուկ սերունդ, վորը տողորված ե դիտություններին տիրապետելու ջերմ ցանկությամբ։ Մեր յերեխաները ձգտում են դառնալ հանրակողմանիորեն զարգացած կուլտուրական սերունդ, հակառակ խորհրդային յերեխաների բախտի ճակատագրական պայմանավորվածության վերաբերյալ մանկաբանների զբարտողական պնդումներին։

Հճող սերնդի ուսուցման և դաստիարակման գործում բացառիկ մեծ ու պատվավոր ե խորհրդային ուսուցչի դերը։ Ուսուցչի այդ պատվավոր, պատասխանատու դերը բաղմից ընդգծել են և՛ լենինը, և՛ Ստալինը, և՛ դպրոցի մասին կուսակցության ընդունած բոլոր վորոշումները։

Բայց վորպեսզի ուսուցիչն ամբողջապես կարողանա կատարել այս պատասխանատու խնդիրն աճող սերնդի ուսուցման և

դաստիարակման բնադավառում, նա պետք ե անպայման զինվիւրությանուր և մասնագիտական դիտելիքներով։ Այնինչ, ինչպես քանից արդեն ընդգծվեց, շատ ուսուցիչների ընդհանուր և մասնագիտական պատրաստությունը դեռ մինչև այժմ ել անրագարար է։ Այդտեղից եյին բղնում մեր խորհրդային դպրոցի աշխատանքի շատ խոչոր թերությունները։ Ժողովրդական կրթության որդանները մանկավարժական կրթության գործը զեկավարելու խնդրում պետք ե այժմ ամեն գնով ապահովեն այդ բարձր ընդհանուր և մասնագիտական մանկավարժական պատրաստությունը։ Մանկավարժական կրթության ամերող դրվագը պետք ե յերիշատարդ ուսուցիչներին տա մանկավարժական խորը կուլտուրա և մանկավարժական գերազանց վարպետություն։ Ժողովրդական կրթության որդանների աշխատողները մինչև այժմ խոսում եյին մանկավարժության և մանկավարժական վարպետության առթիվ, իսկ գործնականում շատ վատ եյին ողնում ուսուցչին՝ տիրապետելու մանկավարժությանը և մանկավարժական վարպետության եյությանը։

Այստեղից ել՝ մանկավարժության պատմության թերագնահատումը։ Այստեղից ել՝ մանկավարժության ծրագրերի անառարկայականությունը, վերացականությունը, անբովանդակությունը։ Այստեղից ել՝ մեր խորհրդային դպրոցի լավագույն դմուշներն ընդհանրացնող որիգինալ աշխատությունների բացակայությունը։ Այստեղից ել՝ արհամարհական վերաբերմունքը դաշպի մանկավարժության և առարկայական մեթոդիկաների դասվանդումը։

Մանկավարժության՝ վորպես դիտության՝ վերականգնման դրագիր առանձնապես ակտուալ խնդիր ե հանդիսանում առաջին դրագիր առաջելը։ Հրանում թեկուզ և այդ դիսցիպլինից լավ ծրագիր կազմելը։ Ակտուալ ե հանդիսանում նաև ընդհանուր դիդակտիկայի և ակտուալ մեթոդիկաների հարցերի մշակման խնդիրը։ Այս ռարկայական մեթոդիկաների հարցերի մշակման հանդիրը։ Ժամանակամիջոցում։

Ի՞նչ ե նշանակում մանկավարժության ծրագիր մշակել և այն տալ մանկավարժական ուսումնական հիմնարկներին ի զերծ առաջ պատվավոր աշխատանքական դրագիր մշակել նշանակում կավարություն։ Մանկավարժության ծրագիր մշակել այժմ մանկավարժության՝ վորպես դիտության՝ բովանդակությունը։

Մանկաբանություն կեղծ-դիտության լիկվիդացիան մանկա-

վարժությանը և նրա ներկայացուցիչներին պարտավորեցնում են խորապես զբաղվել յերեխայի, նրա զարգացման, ընդունակությունների, հետաքրքրությունների և այլ խնդիրների ուսումնասիրությամբ։ Մանկավարժության նախկին կուրսերը լավագույն դեպքում խոսում եյին յերեխայի առթիվ և վոչ թե յերեխայի մասին։ Այնինչ մանկավարժի համար յերեխայի ուսումնասիրության, նրա ուսուցման և դաստիարակման հարցերը դիալեկտիկորեն անբաժանելի յեն։ Դրա համար ել այժմ մանկավարժության մեջ՝ վորպես իրավագործ հարցեր՝ պետք է մտնեն այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպես յերեխայի խարակութերի և կամքի դաստիարակումը, նրա հետաքրքրությունների ուսումնասիրությունը, հիշողության զարգացումը, գիտելիքների և նրանց ամրացման պրոբլեմը, հոգնածության պրոբլեմը ևայլն։ Մեկ խոսքով, մանկավարժության մեջ պետք է մտնեն յերեխայի դաստիարակության և ուսուցման այն բոլոր կարևորագույն հարցերը, վորոնք մինչև այժմ հանված եյին մանկավարժության կուրսից և վորոնց մասին խոսելը չդիտես ինչո՛ւ արդելիքած եր համարվում։ Յերեխայի դաստիարակության և ուսուցման հետ կապված այս բաժինները պետք են ամբողջապես վերականգնելն մանկավարժության մեջ։ Խորհրդային մանկավարժները պետք են հիշեն, վորի իրական դաստիարակությունը—դա զերազանց գիտելիքներն են, «Պահապահականությունացած կամքն եւ, խարակութերը» (Ստալին)։

Վերջապես, շատ կարևոր խնդիր ե հանդիսանում այժմ ու-
սուցչի ծանոթացումը մանկավարժության կլասիկների լավագույն
աշխատություններին՝ այդ կլասիկ աշխատությունների հրատա-
րակման և պրոպագանդի ճանապարհով:

Յերբորդ կարևորագույն խնդիրն ե՝ ամբողջապես վերականգնել խորհրդային մանկավարժի իրավունքները՝ վորապես մանուկների վերաբերյալ խսկական մարքսիստական դիտության կրողիութեան:

Իսկ ի՞նչպիսի դասեր պետք ե վերցնի իր գործնական աշխատանքի համար խորհրդային ուսուցիչը Համեկ(բ)կ Կե-ի 1936թվի Հուլիսի 4-ի վորոշումից։ Խորհրդային ուսուցիչը պետք ե առաջին հերթին լիկվիդացիայի յենթարկի այն խզումը, վոր կա նրա ուսումնա-դաստիարակչական աշխատանքի և յերեխայի ուսումնասիրման աշխատանքի միջն։ Ամենակոպիտ ինքաթյուրումը դպրոցում մինչև այժմ հանդիսացել է մանկաբաններից ծագում առնող այն դրությունը, յերբ յերեխայի ուսումնասիրությունը

կտրված եր նրա ուսուցման ու դաստիարակման ամբողջ պրոցե-
սից : Այդ գրությունը պետք է այժմ վճռականապես վերացվի :
Այդպիսին և խորհրդային ուսուցիչին առաջադրվող առաջին պա-
հանջը :

Ուսուցիչը պետք է այժմ ինչքան կարելի յև մոտենա իր դասարանի յուրաքանչյուր աշակերտին: Ուսուցիչը պետք է գիտենա յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը, նրա ընդունակությունները, հետաքրքրությունները, հակումները և այլն: Ուսուցչի համար գոյություն ունի վոչ միայն դասարանը վորոշված աշակերտներով, — ուսուցչի համար գոյություն ունի յուրաքանչյուր աշակերտն իր առանձնահատկություններով, հետաքրքրություններով, պահանջմունքներով: Ուստի պետք է ապահովվի միանդամայն կոնկրետ մանկավարժական մոտեցում դեպի յուրաքանչյուր աշակերտը, ուշադիր և նըրազգաց վերաբերմունք նրա հանդեպ ուսման գործում հետ մնալու դեպքում: Այդպիսի ուշադիր և նըրազգաց վերաբերմունքը աշակերտի և դպրոցական զարգնթացն անցնելու գործում նրա ձեռք բերելիք հաջողությունների հետազա աճման յերաշխիքն և հանդիսանում:

Մանկաբանությունը յերեխայով հետաքրքրվում եր «Ըստհամ-
րապես»։ Մանկաբանին հետաքրքրում եր վոչ թե կոնկերո, կեն-
դանի յերեխան իր առանձնահատկություններով և հետաքրքրու-
թյուններով այլ, ընդհակառակը, կենդանի, կոնկը յերեխան
մանկաբանի համար հանդիսանում եր հարցաթերթիկ, տեսու և
ինչ ուզում եք, բայց վոչ ձևակորպող մանկական անհատակա-
նություն։ Յուրաքանչյուր կոնկը յերեխայի հարցաթերթային
ուսումնասիրությունը մանկաբանին անհարժեշտ եր յերեխաների

այսպես կոչված տարիքային առանձնահատկությունների մասին վերացական յեղակացություններ հանելու համար :

Ուսուցիչը պետք է յերեխային մոտենա ուրիշ կողմից : Նա պետք է յերեխային ուսումնասիրի վոչ թե վիճակադրության և ընդհանուր վերացական յեղակացությունների համար, այլ նրա մանկավարժական կոնկրետ զեկավարման համար :

Ամեն որ չփելով յերեխանների հետ, ուսումնասիրելով նրանց ընդունակությունները, հետաքրքրությունները և հակումները, իրագործելով նրանց ուսուցման և դաստիարակման մանկավարժական կոնկրետ զեկավարությունը, ուսուցիչը վոչ մի զեպքում չգետք է թույլ տա թեթևամիտ, բազմիցս չստուգված յեղակացություններ այս կամ այն յերեխայի զարգացման և ընդունակությունների վերաբերմամբ : Այսեղ ավելի շատ, քան վորեւ այլ տեղում, պահանջվում ե զգույշ և բարեխիղ վեպի յերեխայի ուսումնասիրությունը, սեփական յեղակացությունների բազմիցս ստուգումը, վորպեսզի մանկավարժն ոգտագործելով իրեն մատչելի բոլոր միջոցները, կարողանա զեկավարել դպրոցականի հետագա զարգացումը, նրա ուսուցումն ու դաստիարակությունը :

Ուսուցչի առաջ այժմ, ինչպես յերբեք, ինդիր և դրվածքարձրացնել իր վորակավորումը մանկավարժական գիտությունների բնագավառում, մանկավարժական վարպետությանը տիրապետելու բնագավառում : Այս ինդիրը պետք է դրվի որակարգում ժողովրդական կրթության որգանների կողմից, վորպես կենտրոնական խնդիր ներկա ետապում, նաև նրա համար, վոր ուսուցիչների ատեսացիա անցկացնելու կապակցությամբ յերեվան և զալիս բավականաչափ մանկավարժական պատրաստություն չունեցող ուսուցիչների շատ մեծ խումբ : Զպետք է մոռանալ նաև այն, վոր մեր յերիտասարդ խորհրդային ուսուցչության նշանակալի մասսան պատրաստություն և ստացել մանկավարժական ուսումնական հիմնարկների պատերից ներս այն ժամանակ, յերբ տեղի ունելին ամեն աեսակ խեղաթյուրումներ, վորպեսին անկասկած շատ ուժեղ և անդրադարձել նրանց մանկավարժական վորակորման վրա :

Համեկ(բ)կ ԿԿ-ի 1936 թվի հուլիսի 4-ի վորոշումը խորհրդային ուսուցչության ամբողջ մասսայի խանդակառ արձագանքին հանդիպեց և ցանկություն առաջացրեց կատարելապես տիրապետելու մանկավարժական վարպետությանը՝ դրանով իսկ

ամենակարճ ժամանակամիջոցում վերացնելու համար բոլոր խելացիությունները դպրոցական աշխատանքում : Տարակույս չկա, վոր այն բացառիկ սքանչելի պայմաններում, վոր ստեղծել են մեր ուսուցչի համար կուսակցությունն ու կառավարությունը, խորհրդագային ուսուցչությունն անպայման կկարողանա կատարել այն բոլոր խնդիրները, վոր դնում են նրա վրա կուսակցությունն ու կառավարությունը : Այդ խնդիրների իրագործմանը կողմեն այն կարձրագործությունը, վոր այնպիսի հաջողությամբ դաստիարակում է մասսաների մեջ մեր կուսակցությունը, դաստիարակում է մեծ Ստալինը : «Նպատակի պարզություն, հաստատակամություն նպատակին հասնելու գործում և խարակտերի ամրություն, վոր փշում ե բոլոր և ամեն տեսակ խռչենդուները» (Ստալին) :

Ա. ՔՈՒԲՆՈՎ

4. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՂՐԻԱՅԻ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՀԱՄԱ-
ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԽՈՐՃՐԱԿՑՈՒԹՅԱՆ 1936 թ. ՀՈՒԼԻՍԻ 11-ի
ԱՐՏԱՎԱՆԱԾ ԶԱՐԻ ՎԵՐԱՎԱԿՎԱԾ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային դպրոցը բարձրացնելու բոլոր կարևորագույն խնդիրները կապված են այժմ կուսակցության կենտրոնական կոմիտեյի ղերեկախիմի կատարման հետ—«ամբողջապես վերականգնել մանկավարժության և մանկավարժի իրավունքները»—մի ղերեկախիմ, վորը դրված և «լուսաժողկոմաների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրմների մասին» վորոշման մեջ, ոթ. Հուլիսի 4-ին:

Ինչո՞ւ կարելի յե բացատրել այն փաստը, վոր կուսակցության կենտրոնական Կոմիտեն նորից ստիպված յեղալ բաց անել, հավաստել ու մերկացնել ամենավիճասակար խեղաթյուրումները դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատների մանկավարժական աշխատանքի թեորիայում և պրակտիկայում։ Այդ կարելի յե բացատրել միայն նրանով, վոր լուսժողկոմատները փաստորեն մոռացել ելին կենինի ու Ստալինի ցուցումներն այն մասին, վոր բոլշևիկի համար կործանարար և անփույթ վերաբերմունքը թեորիայի ու թեորետիկ ախտանիքի հանուեա.

Անհողությունը, բացիք բանությունը և տղիտությունը մեկ անդամ արդեն անողոք հարփած հասցրել են ժողովրդական կրթության ամբողջ սիստեմին։ Դա «դպրոցի մահացման» հակալենինյան թեորիայի և դշանից բխող դասավանդման կոմպլեքսային-պլոյելատոյին մեթոդի կապակցությամբ էր։ Կենտրոնական կոմիտեն

1931 թվի սեպտեմբերի 5-ին դպրոցի մասին ընդունած վորոշման մեջ ջախջախեց այդ թերթիան, մատնանշելով, վոր թե՛ այդ թերթիան և թե՛ նրա գործնական կիրառումը «տանում ելին փաստորեն դեպի գպրոցի կործանումը»:

կենտրոնական կոմիտեն բազմիցս նախազգուշացրել ե լուս-
ժողկոմատին, ժողովրդական կրթության բոլոր որդաններին և
այլ սիստեմի բոլոր աշխատողներին, վոր «դպրոցի մահացման»
թեորիան վերացած չե, վոր նա տակավին ըրջանառություն ունի
ժողովրդական կրթության աշխատողների դպալի մասի մեջ: Դա,
ինչպես ցույց են տալիս փաստերը, հարկ յեղած ներգործու-
թյունը չունեցավ ժողովրդական կրթության աշխատողների վրա,
չբացառած նաև ՌՍՖՀ կ լուսժողկոմատի ղեկավարությունը: Կա-
րիք չկա ուրիշի մատնացույց անել և հարեանի վրա աչք նետել:
Բանն այն չե այստեղ, վոր ճառ արտասանենք կամ դրենք հող-
ված, վորի մեջ ընդունենք մեր սիստեմերը, թեպետև դա ել վոչ
սակավ նշանակություն ունի: Գլխավորն այն ե այստեղ, վոր կա-
րողանանք այս դասից անմիջապես և հարկ յեղածին պես, ինչպես
վայել ե բոլշևիկներին, գործնական յեղբակացություններ անել
մեր ամենորդա աշխատանքի համար:

Մեր առաջ կը կնակի խնդիր և ծառացած։ Առաջին, մինչեւ
վերջը մերկացնել ժամանակակից մանկաբանության հակադիտա-
կան սկզբունքները, այդ անելով այնպես, վոր յուրաքանչյուր
ուսուցիչ, ժողովրդական կրթության յուրաքանչյուր աշխատող,
դիտահետազոտական ինստիտուտի յուրաքանչյուր աշխատակից
լրիվ չափով դիտակցի այդ սկզբունքների հակամարքսիստական
բնույթը։ Յերկրորդ, մանկավարժական դիտությանը և խորհր-
դային դպրոցի ամբողջ գործիք այնքան վնաս հասցրած այդ
մանկաբանական խեղաթյուրումներն իրոք հաղթահարելու հիման
վրա, ձգտել «լիովին վերականգնելու մանկավարժությունն իրեն
դիտություն և մանկավարժներին իրրե նրա կրողների ու կիրա-
ռողների»։ Միայն այս ճանապարհով հնարավոր և «մարքսիստա-
կան դիտություն ստեղծել մանուկների մասին»։

ԱԽՖՍՀ լուսադրությամբ կա մանկաբանական պրոֆեսորականության հետ ամենասերտ կերպով կապված բավական ընդարձակ «որենսդրություն», —վորոշումներ, հրամաններ և կարգադրություններ 1928-ից մինչև 1935 թվականը:

Այդ «որենակը բության» հետևանքով ստեղծված ել, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, մանկաբանների հասուն կոր-

պուս, վորը զինված մէծ իրավունքներով, ըստ եյության միանգամայն անզատասխանատու յեր, փաստորեն դրվագ՝ մանկավարժներից վերև, չեր յենթարկվում դպրոցի վարչությանը, իր տրամադրության տակ ունեն մանկաբանական կարիքնետների, լաբորատորիաների և գիտա-հետազոտական ինստիտուտների ցանց։ Մանկաբանները հեռու ելին կանգնած մանկավարժական պրակտիկայից և իրենց ընթացիկ աշխատանքում դորձում ելին կեղծ-գիտական ու հակամարքաբանական մանկաբանական թեորիայի հիման վրա։ Դրա հետևանքով դպրոցների աշխատանքում ամենավառակար խառնաշփություն եր մտցված։

Այժմյան մանկաբանների հողվածներն ու գրքերը լեփ-լցուն են մարքսիզմի թեջրերումներով, Մարքսի, Ենդելսի, Լենինի և Ստալինի յերկերոց բերված ցիտատներով, «մարքսիստական մանկաբանություն» տերմիններով և իրենց «թեորիաների» հաղթական յերթի վերաբերյալ պարծենկոտ հայտարարություններով։ Դրանով առանձնապես աչքի յեր ընկնում պրոֆ. Ա. Բ. Զալկինդը, վորը տալիս եր այն բանի պատկերը, թե ի՞նչպես եր ընթացել «խորհրդային մանկաբանությունը»՝ Խորհրդակցություններում և համագումարներում, սկսած 1924 թվից, ընթացել իրար հետեւց դիրքեր նվաճել։

Նախանձելի «Համեստությամբ» նա հայտարարում էր մերթ
«մեր նախագահությամբ» (այսինքն պրոֆ. Զալկինդի նախագա-
հությամբ) անցկացված I համամիութենական մանկաբանական
խորհրդակցության մասին, վորի աշխատանքները ծավալվեցին
«Հենց ըստ այն հիմնական բաժինների, վորոնք գրակորպված եյին
մեր բոռշջուրում», մերթ ել I համամիութենական մանկաբանական
համագումարի մասին, «վորի սկզբունքային պլատիզումի համար
մեր բոռշջուրի նյութերը նշանակալի չափով հիմնական յեղան»:

Սրանից բացի, ավելորդ չելինի նշել, վոր մանկավարժական տեխնիկումների նախազպրոցական բաժանմունքների համար մանկաբանության դասագիրքը հրատարակված եր «պրոֆ. Ա. Բ. Զալկինդի խմբագրությամբ», իսկ մանկավարժական տեխնիկումների դպրոցական բաժանմունքների համար մանկաբանության դասագրքի առաջարանում «Հեղինակները պրոֆ Ա. Բ. Զալկինդին չնորահակալություն են հայտնում կոնսուլտացիոն այն մեծ աշխատանքի համար, վոր կատարել ենա հեղինակների հետ դասագրքերը դրելու պրոցեսում»:

Ա. Տ. Զարկինդի գլուխելում մարքսիզմի բոլոր մեջբերումները

վոչ այլ ինչ են, յեթե վոչ խարդախ, կեղծ-մարքսիստական վետ-
բակորում, ծաղր լենինիզմի և նրա փիլիսոփայական հիմունքների
հասցեին:

կուսակցության կենտրոնական կոմիտեն մատնչում ե, «վորացական կոչված մանկաբանության թե՛ թեօրիան և թե՛ պրակտիկան հիմնվում են կեղծ-գիտական, հակամարքափոտակական գլուխթների վրա»: Յեկայնուհետեւ բացատրվում ե, վորացական կուսակցության և պատկանում, նախ և առաջ, ժամանակակից դրույթներին ե պատկանում՝ նախ և առաջ, ժամանակակից դիրքականության դիմավոր «որենքը»—յերեխաների բախտը կից մանկաբանության դիմավոր «որենքը»—յերեխաների բախտը բխութիւնական և սոցիալական գործոններով, ժառանգականություն բխութում անփոփոխելի միջավայրի ազդացությամբ ձևակատական բնշավորեն անփոփոխելի մայմանավորված լինելու «որենքը»: Այս խորապես ուեակցիոն «որենքը» աղաղակող հակասության մեջ ե գոնվում մարդության նկատմամբ և սոցիալիստական շինարարության այն մարդության մեջ:

Յերեխաների բախտի ճակատագրական պայմանավորիցառը՝
թյուն, —ո՞վ արդյոք «համարձակություն» կունենա բացահայտո-
թեն պաշտպանելու այսպիսի խավարամոլությունը։ Տեսնենք, թե
ի՞նչ էր ստացվում պղոփ. Զալկինդի մոտ։ Լուսավորության Հա-
մառուսաստանյան կոմունիստական լինսահոսութիւն ասպիրանտներին
կարգացած իր գասախոսություններում (1933 թվի վերջում)
Զալկինդը պնդում էր, թե՝ «յերեխան աճում է իր և միջավայրի
պայքարի պայմաններում», «միջավայրն սուածագրում է պար-
տավորություններ, իսկ յերեխան նրանց հակադրում է իր ա-
ռանձնահատկությունները, իր բոլորի կան բովանդակությունը,
իր բնածին ֆոնդը», և այդ պայքարում «աստիճանաբար ծավալ-
վում են յերեխայի թե՛ անհատականությունը և թե՛ որդանիզմն
ամբողջապես վերցրած, ընդ վորում այդ պայքարը չափաղանց
խորն է գնում մանկական բովանդակության ներսում»։

կումն» ու կազմալուծումը, նոր և նորագույն փորձի զուգահեռ վլչ-ամրության պայմաններում (սոցիալական միջավայրի կատարդի դինամիկան թույլ չի տալիս նրան պահպանվել, դիմանալ), ստեղծում են հարաբերական դյուրաբեկություն ժամանակակից սոցիալականացված մարդկային որդանիքում»:

Առկա յե գատողությունների հետեւյալ շրջանակը. յերեխան ծնվում և մեծանում ե «Հին բիոլոգիական փորձով», վորը տիրաբար վորոշում է նրա վորզ հետագա զարգացումը: Այդ զարգացման ճանապարհին յերեխան, սոցիալական միջավայրի ներդրություն հետևանքով, փոխվում է, բայց այդ նոր ու նորագույն փորձն «անամուր» է, վորն ստեղծում է «Հարաբերական դյուրաբեկություն ժամանակակից սոցիալականացված մարդկային որդանիգումում»:

Այս դատողությունների մեջ մարքսիզմի վոչ մի նշույլ չկա : Նրանք, ծայր աստիճանի խառնացիոթ լինելով, իրենց յուրաքանչյուր դրույթում սայլֆաքում են զեպի մարդու բախտը ձակատագրականորեն պայմանավորող ամենազոր միջավայրի հակամարք-սիստեման թեորիան :

Զալկինդի տիպի տեսաբաններին ոտար և սոցիալիզմի ազատագրական մեծ նշանակության բմբոնումը, սոցիալիզմի, վորչ վերացնում ե կապիտալիստական արտազգության անարխիան, գասակարգերը, «իրային հարաբերությունների տիրապետությունը անհատների վրա, անհատականության ճնշումը պատահականության կողմից»։ Սոցիալիզմը անհատների վրա հարաբերությունների ու պատահականության ունեցած տիրապետությունը՝ փոխարինում ե պատահականության ու հարաբերությունների նկատմամբ անհատների տիրապետությամբ և բնության ուժերի աստիճանական տիրապետումով՝ սոցիալիստական հասարակության մեջ արտազգողական ուժերի հսկայական դարդացման հիման վրա։ Այս ամենն առանձնապես ակնառու յե դառնում ստալինյան եպօխայի պայմաններում, յերբ աշխատանքը դարձել ե պատվի, փառքի, արիության և հերոսության դործ, յերբ բոլոր կապիտալներից ամենաարժեքավորն ե հայտարարված մարդը, յերբ ավելի ու ավելի յե ապահովում «ամեն մարդու» կոչումը, յերը, խնդիրը իր ընդունակությունները հանրակողմանի կերպով զարգացնելու ուղղությամբ» և յերբ «արտաքին աշխարհի ներդորությունը, վորն արթնացնում ե անհատի յերաշխիքներն իրական զարգացման համար, վերագիրու յե հենց

իրենց՝ անհատների վերահսկողության տակ» (Կ. Մարքս և
Ֆ. Ենգելս «գերմանական իդեոլոգիան»):
ՊրոՓ. Զալկինդը, դատելով դաստիարակության եյության
մասին, պնդում էր, թե՝ նա հանդիսանում է «մերթ թագուն,
մերթ բացահայտ անողոք պայքար դաստիարակի և դաստիարակ-
վազի միջև»:

Պրոֆ. Զալիկինդը քարոզում էր, թու պահանջում է առաջարկ կատարել այս ամենն, ինչ հոսով ընթացող տարերային պրոցես ե և վոր այն ամենն, անում է նա, «անում է առանց մեզ»:

Բայց ահա դտնվել ե աշխարհիս յերեսն այսու և մատուցության պատճենը կատարելու համար առաջ գործում եր, թե «հասարակության պատճենը կատարելու համար առաջ գործում են մարդիկ, զորությունք ոժամանակակից մեջ գործում են մարդիկ, զորությունք ոժամանակակից մեջ գործում են մարդիկ, կամ կրքով, իրենց ացությամբ, շարժվում են դիտավորությամբ կամ կրքով, իրենց առաջադրում են վորոշակի նպատակներ : Այստեղ վորչինչ չի արգուածակալության, առանց ցանկալի նպատակի» առանց գիտակցված մտադրության, առանց ցանկալի նպատակի» կաև մի ուրիշ մարդ—Կարլ Մարքս, վորն իր՝ «թեղիսներ Ֆեյբրաւարի մասին» գործում գրում եր հետեւյալը. մտաերիսալիստական բախի մասին» գործում գրում են հետեւյալը. մտաերիսալիստական ուսմունքն այն մասին, վոր մարդիկ հանդամանքների և դաստիարակության արդյունք են, վոր, հետեւաբար, փոխվող մարդիկ այլ հանդամանքների և փոխված դաստիարակության արդյունք են,—այս ուսմունքը «մոռանում ե, վոր հանդամանք դյունք են, վոր մոռանում են մարդկանց կողմից և վոր իրեն՝ դաստիարակները փոխվում են մարդկանց կողմից և վոր իրեն՝ դաստիարակները պատճենը կատարելու համար առաջ գործում են մարդիկ» :

Քիայի զիրքում, մի թեորիա, վորս, ի դեպ ասած, բաժանում
են նաև այժմյան մանկաբանության բոլոր տեսաբանները:

Այսպիսով, ի մի ամփոփելով բոլորը, հարկ է լինում արձանագրել, վոր այժմյան մանկաբանության և նրա գլխավոր աղեալտներից մեկի՝ պրոֆ. Զալիխնդի տեսական Փունդամենտնի բենից ներկայացնում է միանդամայն անալետք եկլեկտիկական շիլա-փլավ, ուր տեղ են գտել մենչև լիլյան խոնարհումը տարերայնության առաջ, «ինքնահոսի» թեորիայի բացահայտ ջտառ-գովությունը, սարութեական որյեկտիվիզմը և նաբողնեկական-եսերական ուսմունքը գործոնների մեջաւունքը։

Յես հարկ եմ համարում նշել նաև, վոր, ժամանակակից մանկաբանության այս գլխավոր «որենքից», հակադրական պայմանավորվածության «որենքից» բացի, վորի մասին խոսվեց վերևում, մանկաբանների յերկերում մենք շարունակ հանդիպում ենք «ինչ-վոր անփոփոխ միջամարիք» հասկառառության:

Հարդելի հեղինակները շարունակ կրկնում են՝ միջավայր, միջավայր ու միջավայր, և պարզամտությամբ յերեակայում են, վոր դա շատ մարդքիստորեն ե հնչում: Իսկ իրականում ժամանակակից մանկաբանների կողմից մեկնաբանվող միջավայրի հակացողության մեջ մարդքիստական վոչինչ չկա:

Մանկական կոլեկտիվը «միջավայր» է, դպրոցը «միջավայր» է, ընտանիքը նույնպես «միջավայր» է: Բայց չե՞ղ վոր մանկական կոլեկտիվի, դպրոցի և ընտանիքի բնույթը վոչ թե ինչ-վոր ինք-նարավ բան է, այլ տվյալ հասարակության մեջ գլխավորող հա-սարակական հարաբերություններից ածանցվող բան: Մի՞թե կարելի յե գործածել այս հասկացողությունները, առանց ճշտիվ վորոշելու, թե վո՞ր տեղին, ժամանակին և տարածությանն են նրանք վերաբերում: Ընտանիքը կատվիտալիտական հասարակու-թյան մեջ ունի այլ բնորոշ առանձնահատկություններ, սոցիա-լիզմի որոք՝ այլ: Ընտանիքը փոփոխություններ և կրում սոցիա-լիզմի առաջիաղացման ընթացքում — նեպ-ի սկզբնական ստա-դիայում, նեպ-ի վերջին ստադիայում (սոցիալիզմի շրջան) և ներկա մոմենտում, յերբ մենք կանդնած ենք անդասակարգ հա-սարակության շեմքին և կարող ենք լիակատար իրավունքով պարծենալ մեծագույն պատմական փաստաթիվով—ստալինյան Սահմանադրությամբ, վորն ամփոփում է սոցիալիզմի հսկայական նվաճումների արդյունքները:

Ի՞նչպես խղճուկ ու հիմար հերյուրանք է առ «հնագոր ան-

վոռական միջավայրը», վորով շատ տարիների ընթացքում անմտորեն ընթանում ելին այժմյան մանկաբանության պատուհաս-տեսաբանները:

Բայց, դժբախտաբար, այս ամենը լոկ թերոքիս չեր։ Դա միաժամանակ ամենավնասակար մի պրակտիկա յեր, վոր վորոշվում եր «տակալին չկազմավորված, տարուբերվող, իր առարկան ու մեթոզը չորոշած և հակամարդքսիստական վնասակար տենդենցներով յեցուն այսպես կոչված մանկաբանությամբ»։

Փոխանակ կոչ անելու հետազոտական ուժերին խորապես ու-
սումնասիրելու այն նորը, վորն աճում է մեր սոցիալիստական
մեծ հայրենիքի բալոր բնագավառներում, ուսումնասիրելու խոր-
հըրդային լավագույն ուսուցիչների և դպրոցների, մեր հիմնալի
դպրոցական կոլեկտիվների փորձը, վորոնց միջավայրում վերա-
գաստիարկվել են հարցուրավոր և հազարավոր այսպես կոչված
«կազմալուծիչներ», պիտներական ճամբարների փորձը, մանկա-
կան տեխնիկական կայանների աշխատանքն ու նրանց ման-
կական ապշեցուցիչ գյուտարարությունը, մանկական գեղարվես-
տական ցուցահանդեսները և այլն, այս ամենի փոխարեն այսպես
կոչված մանկաբանությունը քաջում եր խորհրդային մանկան
գիտական հետազոտությունը և «մանկաբանական» աշխատանքի
վողջ պրակտիկան գեղի հետ, գեղի նախատառերի պատմության
փորձքումը, դեպի պրոֆեկտորական փորձարարությունը, վորն
քրենից ներկայացնում եր «կատարյալ ծաղր սովորողների նկատ-
մամբ»:

Մանկաբանների պրակտիկան, ինչպես մատուցված է Գենու-
րոնական կոմիտեյի վորոշման մեջ, «Հանդում եր հիմնականում
կեղծ-գիտական փորձերի և այն բանին, վոր զալոցականների և
նրանց ծնողների մեջ կատարվում եյն անթիվ քանակությամբ՝
հետազոտություններ անիմաստ ու վնասակար հարցաթերթիկ-
ների, տեստերի և այլ ձևերով, վորոնք վաղուց են գտառապարտ-
ված կուռակցության կողմից»:

Причиной же явления является то, что в результате измерения мы получаем не абсолютную величину, а относительную, выраженную в единицах измерения, и поэтому для ее определения необходимо знать единицу измерения.

Պրոֆ. Զալիկնդը «տեսառերը» կոչում եր «մեքենայական մուտեցում դեպի մարդը», քննադատում եր այդ մեթոդի բացասա-

կան կիրառումները և վերջում «ջերմորեն» առարկում յերեխան-ների նկատմամբ նրանց կիրառմանը:

Բայց չկարմավորված «դիտության» այս տարութերվող տեսաբանին պահանում եր հասարակ վողախոհությունը մինչև վերջը պաշտպանելու իր պնդումները: Մանկավարժական տեխնիկումների մանկաբանության գասազբռում, վորը հրատարակված է 1934 թվին պլոտֆ. Զալկինդի իմքագրությամբ, «տեստերի» հարցի առթիվ ինչ-վոր այլ բան ե գրված: Նախ խոսվում է «մտավոր աճը թվական տվյալներով արտահայտելու» հերադրություն ունենալու «գրավչության» մասին, հետո մատնանըշվում ե, վոր այդ մեթոդն «իր ներկա վիճակով ամենաին չի կարող լայնորեն կիրառվել նախադպրոցական տարիքում», և, վերջապես, տրվում ե այն յեղակացությունը, թե «մենք պետք ե միշտ հիշենք նախադպրոցական տեստավորման դիակնոսափիկ նշանկության սահմանափակության և պարմանականության մասին»: 1935 թվին նույն պլոտֆ. Զալկինդի ամենամոտեկ մասնակցությամբ հրատարակված մանկաբանության դասազբռում «տեստերի» մեթոդը նախ քննադատվում է, իսկ հետո դասադրքի հեղինակները պնդում են, թե «տեստերը կարելի յե և պետք ե կիրառել վորպես մեթոդներից մեկը, քննադատաբար վերաբերվելով նրա արդյունքներին և դրանք ստուգելով այլ մեթոդների ողնությամբ»: Բանից գուրս ե գալիս, տեսնո՞ւմ եք, վոր «տեստերի» մեթոդի ողնությամբ հանրավորությունը կա սահմանել յերեխայի մտավոր զարգացման վորոշակի մակարդակն ու նրա տեմպերը: (Պ. Ա. Փորտպատօ, Մ. Վ. Սոկոլօ, «Պեծոլոգիա»):

Այսպիսին ե այժմյան մանկաբանության վողենչողներից մեկի հայացքների «կայունության» բավական համոզիչ որինակը:

Հայտնի յե, վոր «տեստերի» մեթոդը ծնունդ տվեց մանկաբանական հետազոտությունների ամենալինասակար մի պրակտիկայի, վորի հետևանքով «ավելի ու ավելի մեծ թվով յերեխաներ հաշվում ելին մտավորապես հետամնաց, զեփեկտավոր և «դրժվար դաստիարակվող» յերեխաների կատեղորիխայում:

«Մանկաբանական պասպորտների» հիման վրա յերեխաները հեռացվում ելին նորմալ դպրոցներից և տեղավորվում ելին հատուկ, այսպես կոչված «ոժանդակ» դպրոցներում ու դաստիարաններում: Իսկ գործի գրությունն այդ դպրոցներում կուսակցության կենտրոնական կոմիտեն համարեց «միանդամայն անհան-

դուրժելի հանցագործ անպատճանատվությանը սահմանակացվող»:

Այժմյան մանկաբանության և «դպրոցի մահացման» հակալինին թեորիայի գլխավոր բույնը հանդիսացող՝ դպրոցական աշխատանքի մեթոդների նախափառությունը յելակետային «տեսական» դիրքերը համեմատելիս աչքի յե ընկնում նրանց անտարակուսելի դաշտափարական ազգակցությունը: Կուսակցության կենտրոնական կոմիտեն իր վորոշման մեջ մատնանշեց, վոր «կուսակցության կողմից դատապարտված դպրոցի մահացման հակադիտական ու տղետ թեորիան շարունակում եր մինչև վերջերս ընդունվել լուսադողկոմատներում, և նրա աղետապները թերուում մանկաբանների ձևով տարածվում ելին ավելի ու ավելի մեծ մաշտաբներով»:

Դպրոցական դաստիարակության մեթոդների նախկին ինստիտուտը մանկաբանությունը բնորոշում եր վորպես «մարդու սոցիալական ձևավորման պլոտֆես», քարոզում եր «տարերային դաստիարակություն» («ամենինչ» սովորեցնում ե, «ամենինչ» դաստիարակություն) և, «ամենինչ» դաստիարակությունը և), առանց հոգեներու շաղակարառում եր «խորհուրդների մանկավարժության», «պրոֆմիությունների մանկավարժության», «դորժարանային միջավայրի մանկավարժության» մասին, և այլն: Անցած ժամանակների մանկավարժության վիթխարի ժառանգությունը հայտարարված եր «հիմն դպրոցական մանկավարժություն» և տղետ մեծամտությամբ մեկ կողմն եր նետված:

Մանկաբանության բոլոր զեկավարներից ամենաանհանդիսար, նույն պլոտֆ. Զալկինդը, մանկավարժությունը վերանվանում էր «սոցիալարժություն», («օօպագորուկ») ընդունին ազգարարելով, թե՛ «վողջ ժամանակակից հեղափոխությունը մարդկային որդանիդմների միլիոնավոր մասսաների համար հանդիսանում ե զոր սոցիալարժական մի ազգարատ»:

«Դպրոցի մահացման» այս ամբողջ հակադիտական ու տղետ թեորիայի միջով միակտուր թելի պես անցնում եր խոնահումը տարերայնության առաջ, աճող սերնդի դաստիարակության դրժում «ինքնահու» թույլ տալու թեորիայի քարոզը և քաղաքականության խառնաջփուլումը մանկավարժության հետ:

«Դպրոցի մահացման» թեորիան քատալիստական թեորիա յեր, նրա արմատները հասնում ելին մինչև այժմյան մանկաբանության՝ վերեւում քննված գլխավոր «որենքը», նա հիմնվում

Եր «ամենազոր միջավայրի» մանկաբանական «ուսմունքի» վրա:

Այսպիսով, ժամանակակից մանկաբանության կեղծ-գիտական և հակամարքսիստական տեսական հերութափները հանդիսացան «ուրբոցի, մահացման» հիմար, հակալենինյան թեորիայի և նրա թեթևամիտու բացբերան մեթոդական պրաժեկտորականության փելուովայական, յեթե կարելի յէ այդպես արտահայտվել, հիմնավորումը:

Այժմյան մանկաբանների և «դպրոցի մահացման» թեորիայի նախկին քարոզողների հայացքների աղջակցությունը դեռ հեռու յե դնում:

Պրոֆ. Զարկինդը, բնորոշելով դաստիարակության նպատակները, ասում եր, վոր «խորհրդային սանը պետք և լինի ամենանողոք ստեղծագործող պրակարիկը», և խկոյն հանձնարարում ե. «Պահետք ե վախենալ, վոր իրը թե այս պրակտիցիզմը կվերածվի մեշանական առորիայի պրակտիցիզմի, կենսական մանր կարիքների պրակտիցիզմի»:

Իսկ ահա թե ինչ ե ասում այդ նույն հարցի առթիվ Շուլդինը (գպրոցական աշխատանքի մեթոդների ինստիտուտի նախկին ղերեկտոր) . «Մեզ հարկավոր ե մեր յերեխաներին այնպիսի մարդիկ գարձնել, վորոնք, ինչպես ասում եր Զեկ Լոնդոնը, խոչընդուների վրա նայեն իրու սպորտի-ոլե'տք և հաղթահարել»:

Զավադիպությունը, ինչպես տեսնում եք, լիակատար է: Դժվար չե դանել, այս «իդեաների» սկզբնազրյուրը: Յես այստեղ կտամ յերկու ամերիկացի մանկավարժների՝ պրոֆ. Կիլպատրիկի և պրոֆ. Կոլինդսի անունները: Այն գպրոցի առաջ, վորն իր ժամանակ կազմակերպել եր Կոլինդսը, այսպիսի խնդիր եր գրված—յերեխաներին և պատանիներին հնարավորություն տալ «վարժվելու նպատակների ընտրման ու հաջող իրականացման գործում»:

Երկու ամերիկացի պրոֆեսորների մանկավարժական դիրքավորումը պրոֆ. Կիլպատրիկը ձևակերպել և հետեւյալ կերպ. «իմ ամբողջ փիլիսոփայական հայացքն ինձ անվատահություն պատվաստեց ամեն տեսակ ընդհանուր ոկղունքների նկատմամբ», «մենք խոնարհվում ենք այն մարդու առջև, վորն իր հակատաղի տերն ե հանդիսանում» և «վորը խնամքով մշակում ու կատարում ե իր խոլ կազմած նախագծերը»:

Միանդամայն ակնհայտ ե, վոր Կիլպատրիկի և Կոլինդսի մանկավարժական փիլիսոփայությունը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ

ամերիկական իմպերիալիզմի և նրա համար բնորոշ դործամոլության անդրադարձում:

Կոլինդսի դպրոցը, վորն իր հիմունքն ունի նախագծերի մեթոդը, ըստ եյտթյան համապատասխանում եր ամերիկական իմպերիալիզմի սոցիալական պատվերին: Նրա սովորակները վարժվում եյին «գործերի մեջ», —մեկը արդուկելու տախտակ եր շինուալ, մյուսն ուսումնասիրում եր սուրճ պատրաստելու յեղանակը և այլն:

Գիտությունների հիմունքները յերկրորդ պլանի վրա եյին դանիվում, և սովորողները դրանք պետք ե յուրացնելին պրակտիկ «գործերի» պրոցեսում:

Ինքը Կոլինդսն ասում ե, վոր այլ գպրոցի ծրագիրն ընտրված եր նպատակներից, վոր իրենց առաջադրում եյին իրենք յերեխաները, այդ ծրագիրը անընդհատ վերակառուցվում եր, դասատախտակներ փաստորեն չկային, «վոչ մի դասագիրք, վորպես այդպիսին, դպրոցում չեր գործածվում»:

Այդպիսին ե բուրժուական այն սկզբնազրյուրը, վորից գպրոցական աշխատանքի մեթոդների «ձախ»-պրոդեկտորական ինստիտուտի մանկավարժները փոխ եյին առել ամերիկական «նախագծերի մեթոդը», վորի թեթևամիտ-պրոդեկտորական կիրառումը մասսայական ձեռով՝ այնքան վնաս հասցեց խորհրդային գպրոցին և վաստորեն տանում եր զեպի նրա խորտակումը: Հետաքրքիր ե պարզել, թե այդ հարցերի վերաբերյալ ի՞նչպես եյին մտածում մանկաբանները:

«Դպրոցի մանկավարժական պրոցեսի մանկաբանական վերլուծությունը» ժողովածույում (պրոֆ. Ս. Մոլոժավու խմբագրությամբ) մենք գտնում ենք հետեւյալ գրույթները, վորոնք կոմենտարիաների կարիք չեն զում, առաջին՝ «բարձրադույն», մանկավարժորեն ամենից ավելի արժեքավոր կառուցվածքային մակարդակ մենք կունենք այն ժամանակ, յերբ աշխատանքի պրոցեսն ուղղություն ե ստացել, բայց չի կանխորոշվել, յերբ վորոցեսն ուղղություն ե ստացել, բայց չի կանխորոշվել, յերբ լայն վորոնումներ կատարելու անհրաժեշտության առաջ, յերբ նրանց ձեռքումն են և՝ միջոցների պլանավորումն ու վորոնումը, և այդ միջոցների գործադրումը» (ձիշտ և, չը, վոր սա ամբողջապես կոլինդսից ե արտադրված), և յերկրորդ՝ «մանկավարժական դիրքավորումը, վորն առաջին պլանի վրա յե մղում գիտության ամերիկական իմպերիալիզմի վերաբերյալ»:

թյան ուսուցումն ու ունակությունները, հենց դրա համար ել հակադասակարգային դիրքավորում ե»:

Բուրժուական մանկաբանության պարագլուխ Ստենլի Հոլլը
պնդում է, թե՝ «գպրոց» բառը նշանակում է պարապ ժամանակ,
աղասություն աշխատանքից, այն սկզբնական դրախտային վիճակի չարունակությունը, վորագիսին ստեղծվել եր նախքան դույության պայքարի սկավելը, թե՝ «մանկավարժի միջամտությունը զեկավարման գործում՝ կարիք ունի արդարանալու յերեխայի առաջ», թե՝ «մենք պետք ե ավելի քիչ նշանակություն տանք ուղղագրականորեն ճիշտ գրությանը» և վոր «մենք պետք ե հաղթահարենք Փետիշիզմը այրութենի, բազմապատկության աղյուսակի, լեզվի ուսուցման, թվանշանային սխառեմի ու առհասարակ դրբերի հանդեպ և հիշենք, վոր ընդամենը միքանի սերունդ առաջ մեր նախնիները չեյին կարողանում վո՛չ կարգալ, վոչ ել գրել»:

Կոմինտարիթաներն այսուղ ել կարծես թե ավելորդ են։ Բայց
հետաքրքիր են այն պատճառաբանությունները, վոր անում ե
Ատենակի Հոլլը։ Խոսելով այն մասին, վոր «մենք պետք ե հաղթա-
հարենք Փետիշիզմը՝ այբուբենի՝ բազմապատկության աղյուսակի
հանդեպ», նա վկայակոչում է . . . Կարլոս Մեծին, վոր չեր իմա-
նում գրել-կարդալ, և նույնիսկ աստվածածնին, վորը «յերեք
ձեռքում վո՞չ գրիչ, վո՞չ ել մատիտ և բռնել»։ Սրանից նա անում
ե հետեալ ընդհանուր յեղբակացությունները։ «տղիսությունը
բարերար և հոգով տկարների համար» և «անընդունակներին ան-
հրաժեշտ ե, նրանց իսկ սեփական շահերից յելնելով, թողնել
մեր կրթական սիստեմի սահմաններից դուրս» (Ստենլի Հոլլ—
Մանկաբանական և մանկավարժական հոգածածների ժողովածու)։

Այս ազնվումների մեջ արդեն իսկ միանգումայն ակնհայտ եղանակում, վոր այս ամերիկացի «զիտնականը» կատարում է պարունայք կապիտալիստների կամքը և դործում է նրանց մատնաշուռումը: ԶԵ՞ վոր շահագործող դասակարգերի տիրապետության շահերից յենելով կարեռ և «զիտության հիման վրա» ապացուցել, վոր կրթության իրավունքից կարող են ուժովել միայն «ընտրյաները» հարուստ դասակարգերի միջավայրից: Պրոլետարները և չքափորները—«ռամբկը»—պետք է բավարարվեն խզուկ կրծոններով և ապաստանեն կապիտալիստական քաղաքների հետնաբակերի գարշահոտ վորչերում, դրա համար որոնելով իրենց «քարերաբներին»—պարունայք կապիտալիստներին և միսիթարվե-

Սաբենի Հովի այս նույն դրույթները կրկնում և զարգացնում
ե բուրժուական մանկաբանության մի այլ «ոյուն»—Աղքաղը Բի-
նեն :

«Մեր հետազոտությունները, —ինչպես ասում ե Յ. Իսրայել, — այնպես, ինչպես շատ ուրիշ հետազոտողների հետազոտությունները, ցույց են տվել, վոր աղքատ դասակարգի յերեխան ավելի փոքր հասակ, ավելի պակաս քաշ, ավելի փոքր գլուխ, ավելի քիչ մկանային ուժ ունի, քան հարուստ դասակարգի յերեխան, նաև ավելի սակավ ե ձգտում հասունության վկայականի, նա ավելի հաճախ հետ ե մնում իր պարապմունքներում»:

Յել այնուհետև Ա. Բինեն կրկնելով Ստեղլի Հովի դատո-
ղությունները, դրանք լրացնում ե այսպիսի մի ուսանելի և բա-
ցահայտ հայտարարությամբ—«պահպանելով այս նախազգուշու-
թյունը (այսինքն յերեխաներից ջոկելով միայն «ընտրյալներին»
Ա. Բ.), մենք դրանով իսկ յերեկի կպակասեցնենք դժգոհների ու
լքվածների թիվը. յուրաքանչյուրին ցույց տալով նրա խական
տեղը, մենք կավելացնենք բոլորի տնտեսական բարեկեցությունը,
և դա կլինի, իհարկե, ամենից ավելի պարզ, բնական ու ռա-
ցիոնալ միջոցներից մեկը լուծելու, առնվազն մասամբ, մի քանի
տանջալի սոցիալական հարցեր, վորոնք այնքա՞ն մտքեր են ան-
հանդապահ սպառացնում և սպառնում են ժամանակակից հասարակության
ապագային:

Ահա թե ի՞նչպիսի սկզբանըյուրներից եյին իրենց մանկա-
բանական «զերիմաստությունները» քաղում ներկայումս մեր-
կացված մանկաբան տեսաբանները պրոֆ. Զալինդիկ գիտակուրու-
թյամբ։ Այդ «թեորիայի» մերկացման համար բացառիկ նշանա-
կություն ունի Կուսակցության կենտրոնական կոմիտեյի ցուցումն
այն մասին, վոր «այդպիսի թեորիան կարող եր յերեան դալ
միայն այն բանի հետևանքով, վոր անքննադատորեն խորհրդային
մանկավարժության մեջ եյին փոխադրվում հակադիտական բուր-
ժուական մանկաբանության հայացքներն ու սկզբունքները, ման-
կաբանության, վոր իրեն խնդիր ե առաջադրում շահագործող
կարանության, վոր իրեն խնդիր առաջադրում նպատակով ապա-
դասակարգերի տիրապետության պահպանման նպատակով
ցուցել շահագործող դասակարգերի և «բարձր ցեղերի» հատուկ
գործող դասակարգերի և «բարձր ցեղերի» հատուկ ոժավածու-
թյունն ու գոյության հատուկ իրավունքները և մյուս կողմէից,
թյունն ու գոյության հատուկ իրավունքները և մյուս կողմէից,

աշխատավոր դասակարգերի ու «ստորին ցեղերի» Փեղիքական և Հոգեոր դատապարտվածությունը:

Անհրաժեշտ է առանձնապես ընդգծել, վոր ինչպես տեսական խեղաթյուրումները, այնպես ել վնասակարագույն կազմակերպական խառնաշփոթությունը՝ մանկավարժական պրակտիկայում, վորոնք մերկացվեցին Կուսակցության կենտրոնական կոմիտեյի վերջին վորոշումով, համառօրեն պահանջում են, վոր լուսժող կոման ու նրա տեղական որդաններն ընդհուպ մոտենան «զպրոցի ղեկավարման և խորհրդային մանկավարժական դիտության գարգացման արմատական ու կենսական խնդիրներին»:

Մարքսիզմ-Լենինիզմի թեորիայով զինված, անշեղորեն ընթանալով լենինի և Ստալինի մատնանշած ուղիով, մինչև վերջը մերկացնելով և հաղթահարելով բոլոր կեղծ գիտական «թեորիաները», մենք կկարողանանք ստեղծել մարքսիստական զիտություն մանուկների մասին, վորը կապահովի աճող սերնդի կրթության ու գաստիարակության բարձր վերելք, հաղթանակած սոցիալիզմի հզոր, բերկրալի և յերջանիկ յերկրում ապրող այդ յերիտասարդներից պատրաստելով Մարքսի-Ենդելսի-Լենինի-Ստալինի դրոշի ներքո հաղթանակորեն առաջ ընթացող կոմունիզմի մեծ բանակի հերոսական մարտիկներ :

Մ. ԲՈԳՈՄՈԼՈՎ

5. ՊՐՈՖԵՍՈՐ Պ. Պ. ԲԼՈՆԱԿՈՒ ԿԵՂԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Բլոնսկին հանդիսանում է մանկաբանության ամենից ավելի տարածված դասագրքերի հեղինակը, խորհրդային մանկան ուսումնասիրության կեղծ-գիտական՝ մանկաբանական թեորիաների և մեթոդների հաղորդիչը պրոֆեսորական ամբիոնից : Պրոֆ. Բլոնսկու դասագրքերի և դասախոսությունների հիման վրա դաստիարակվում եյին տասնյակ և հարյուրավոր մանկաբաններ, վոտիարակվում են նրա մանկաբանական իդեաները կիրառում եյին դպրոցական պրակտիկայում :

Պրոֆ. Բլոնսկին, ինչպես այդ ինքն է խոստովանում, մեկ անդամից չի յեկել դեպի մանկաբանությունը, նա իդեալիստական գիտական կառուցական ու հոգեբանությունից դեպի մանկավարժությունը և ապա դեպի մանկաբանությունը կատարած անցումների թյունը և ապա դեպի անցել : Իսկն ասած, նա մանկաբանությամբ յերկար ուղի յե անցել : Համար միայն : «1924 թվից յես ինձ համակսել ե զբազլել 1924 թվից միայն : 1924 թվից յես ինձ համարում եմ վոչ թե մանկավարժ, այլ մանկաբան», —ասում է նա իր ինքնակենսագրականում :

Բլոնսկու հակամարքսիստական մանկաբանական հայացքները պատահական չեն, նրանք անընդմեջ շղթայի պես իրենց սկիզբն են առնում նախահեղափոխական անցյալից :

Նրա գիլիսովայական տատանումները չեյին կարող չանդրադառնալ նաև նրա մանկավարժական թեորիաների վրա : Նախադառնալ նաև նրա մանկավարժական թեորիաների վրա : Նախադառնալ նաև նրա մանկավարժական շրջանում պրոֆ. Բլոնսկին մանկավարժական սկզբունքները մեկնաբանում եր մերթ կրօնա-բարոյական դաս-

ամարակության վողով, մերթ ել մանր-բուրժուական «գեմոկրատական» հայացքների վողով (1914—1916 թ.թ. ժուրնալային ժողովածուներում) :

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո պրոֆ. Բլոնսկին դարձավ «աշխատանքային դպրոցի» ցայտուն իդեոլոգներից մեկը, դպրոց, վորը նա գովերդել ե «Աշխատանքային կուրոց» դրում : Կռապերը խղելով նախահեղափոխական մանկավարժական սկզբունքներից, Բլոնսկին իր մանկավարժական հայացքների ասպարեզում այնպիսի ուժեղ թուչք դործեց, վոր հանդեց դպրոցի՝ իրու ուսումնա-դպատիարական հիմնարկի՝ լիակատար ժխտմանը : Յուրացնելով այսպես կոչված աղատ դաստիարակության սկզբունքները մանր-բուրժուական մանկավարժների մեկնաբանությամբ, Բլոնսկին իր երուղիցիայի ամբողջ ուժով հարձակվեց դպրոցի, ուսուցչի վրա : Նա սկսեց Փանտաստիկ ձեռովով դպրոցին հակադրել ինքնագոյացական համայնքը, անդամակ կղզու ոռբինդոնիադան, ուր յերեխաներն իրենց գլուխ թողնված՝ ինքնիրեն են սովորում : Երանք ինքնիրեն են հայտնաբերում կրակը և սովորում կերակուր յեփել, կրկնելով, այդպիսով, մարդկության զարդացման վողջ կուլտուր-պատմական ուղին : Այլ կերպ ասած, «Աշխատանքային դպրոցի» այդ շրջանում պրոֆ. Բլոնսկին հող եր մշակում և իդեոլոգիական հիմունքներ նախապատրաստում «ձախ» խեղաթյուրումների համար : Ինչպես Բլոնսկին աշխատանքային դպրոցի իր թեորիայում, այնպես ել «ձախները» «դպրոցի մահացման» իրենց հիմար թեորիայում ժխտում են տեսական կըրթության, գիտությունների հիմունքների տիրապետման նշանակությունը : Հայտնի յե, վոր «դպրոցի մահացման» հակալենինայն թեորիան ամեց բուրժուական մանկավարժության անքննադատարար փոխ առնված իրեաներից : «Ձախ» տեսաբանները բուրժուական և մանր-բուրժուական մանկավարժական սկզբունքների մշշման ներքո չհասկացան մարքսիզմի կասիկների ցուցումներն այն մասին, վոր բանվոր դասակարգն իր զարգացման ընթացքում բուրժուաղիայից ավելի բարձր լինելու համար պետք ե տիրապետի «մարդկության կուտակած գիտելիքների վողջ հարստությանը» :

Հետեւողականորեն կանգնելով բուրժուական մանկավարժական դիրքերում, պրոֆ. Բլոնսկին առաջատար դեր խաղաց գուտական* (կոմպլեքսային) ծրագրերի տեսական հիմնավորման և մշակման

ոլործում, ծրագրեր, վորոնց վրա կատարված աշխատանքը նա վերադրում է 1922—1924 թվականներին : Բլոնսկու մասնակցությունը ծրագրի կառուցման կոմպլեքսային սրոտեմի մշակմանն ու մասսայականացմանը՝ աշխատանքային ուսուցման բուրժուական թեորիաների հողի վրա մանկավարժական իդեաների հետազարդացման ու ձեալորման վառ արտահայտությունն ե հանդիսանում :

Բլոնսկին դանում եր, թե առարկայական ծրագրը հենց իր առարկայնությամբ չի համապատասխանում յերեխաների հոգեբանությանը, ուսափ առարկական դպրոցում յերեխան անընդունակ է գիտություններն ըմբռնելու, և այդ ըմբռնումը նրան պարզապես հարկավոր չէ : Կոմպլեքսային ծրագրերի վերաբերյալ իր դիրքավորումների մեջ պրոֆ. Բլոնսկին փորձում եր կոմպլեքսային մեթոդը նույնացնել դիալեկտիկական մատերալիզմի մեթոդի հետ, զրանով իսկ գոեհկացնելով ճանաչողության դիալեկտիկական մեթոդը :

Կոմպլեքսային ծրագրերի հիմքում ինչպես նրանց հիմնավորման տեսակետից, այնպես ել թեմաների ընտրության տեսակետից դրված ելին մանր-բուրժուական մանկավարժության սկզբունքները—ամբողջ ուսուցումը կառուցել յերեխայի փորձի վրա, «ամբողջ ուսուցումը կապել յերեխայի պրակտիկայի հետ» : Կոմպլեքսային ծրագրերից մինչեւ կոմպլեքսային-նախագծային սիստեմը մեկ քայլ եր մնում, վորը և արին «ձախները», վորոնք հանդես յեկան թեորիան հետին պլանում թողնող այսպես կոչված պրակտիկ ուսուցման ակտիվ պաշտպանների գերում : Այսպիսով, այն մանկավարժական դրույթները, վորը առաջադրեց և մշակեց Բլոնսկին վոչ առանց բուրժուական և մանր-բուրժուական մանկավարժների անմիջական ողնության, իրենց տրամաբանական ավարտումը գտան այն «ձախ» խեղաթյուրումների մեջ, վորոնք աղաղակող հակասություններ ելին արտահայտում դաստիարակության, կրթության և ուսուցման մարքունինյան սկզբունքների հետ :

Մենք հատկապես կանգ առանք մանկավարժական հարցերի, մասնավորապես «ձախ» խեղաթյուրումների վրա այն նպատակով, վորպեսզի հաջորդաբար հետազոտելով Բլոնսկու մանկավարժական հայացքների զարգացման առանձին ետապները, հա-

վաստենք նրա հակամարքսիստական, հակալենինյան սխալները մանկավարժության բնադրավառում և ցույց տանք, թե ի՞նչպես նրանք վերաճեցին մանկաբանական խեղաթյուրումների։ Նրա մանկավարժական վոչ-ճիշտ հայտքների ամբողջ «սիստեմը» նրանց զարգացման բնական ընթացքում պայմանավորեց նաև կեղծ-գիտական մանկաբանական «աշխատությունների» ստեղծումը նրա կողմէից։ Անցած տարիների իր ամբողջ մանկավարժական խառնաշխութությունը (սումբուր) վորը շերտադրվել եր բուրժուական մանկավարժության նորությունների հանդեպ օւնեցած անքննապատական վերաբերմունքի հողի վրա, Բլոնսկին մեխանիկորեն փոխադրեց նաև մանկաբանության բնադրավառը, հույսունենալով այնուեղ ավելի սույն ապաստան գտնել իր համար։

Իր անցումը՝ մանկավարժությունից դեպի մանկաբանություն
Բլոնսկին պատճառաբանում է մանկավարժությունն ու հոգեբա-
նությունն ավելի խորապես մշակելու և նրանց համար ամուր
հիմք դնելու դիտավորությամբ, վորովհետեւ նա չեր բավարար-
վում ինչպես հոգեբանության, այնպես ել մանկավարժության
«մակերեսայնությամբ» և վերացականությամբ»։ Հետանալով ման-
կավարժությունից, նա իրեն միշտարում եր նրանով, թե վոչ-հե-
ռու ապագայում նորից կիբերագաննա նրան և այն ժամանակ
վերջնականապես բաց կանի աշխարհի առաջ, «թե ի՞նչ բան ե
դաստիարակությունը, ինչպես վոր նա կա»։

Ձեռնամուխ լինելով՝ մանկաբանական պրոբլեմների ժակմանը, պրոֆ. Բլոնսկին խսկույն և յեթ գեմ առավ մանկաբանության առարկան վորոշելու՝ բոլոր «տնաբույս» մանկաբանների համար խիստ անախորժ ինդրիին։ Մանկաբանություն կոչվող կեղծ-գիտության առարկայի ընորոշումը վորոնելու ընթացքում նա դիմեց ամեն տեսակ հնարքների, միայն թե մի կերպ բնորոշվերա առարկան և սույն «գիտությանը» տեղ հատկացնի մյուս գիտությունների շարքում։ Բլոնսկին մարզվեց ամենատարբեր ձևակերպումների մեջ։ «Մանկաբանությունը վորպես մանկական տարիքի առանձնահատկությունների վերաբերյալ գիտության» (վաղ շրջանի մանկաբանական աշխատություններում)։ «մանկաբանությունը տարբեր եպօխաններում և փուլերում տիպիական մասսայական յերեխայի աճման, ընակաղմության և վարքի վերաբերյալ գիտությունն ե» (նկատեցե՛ք—յերեխան իր զարգացման ընթացքում անց ե կենում ամբողջ եպօխաններ և շրջաններ Մ. Բ.)։ «մանկաբանությունն ուսումնասիրում ե մանկական տարիքի

տարբեր եպոխաների, փուլերի և ստագիանների սիմպոզիումպ-պ-ի եքսները նրանց ժամանակային հաջորդականության և տարբեր պայմաններից նրանց ունեցած կախման մեջ» . «Մանկարանությունը վորոշակի սոցիալ-պատմական միջավայրի պայմաններում յերեխայի տարիքային զարգացման վերաբերյալ գիտություն և» և այլն : Մեկ խոռովով, Բլոնսկու մոտ մանկարանության առարկայի նույնօքան բնորոշումներ կան, վորքան անդամ Հրատարակակայի են նրա մանկարանական «աշխատությունները» . մանկարանակուն դասագրքի յուրաքանչյուր նոր Հրատարակությունը քաղաքում եր տվյալ «դիտության» առարկայի նոր բնորոշում : Աճճվելով մանկարանության բնորոշումը տալու անհույսալի փորձագիր մեջ, Բլոնսկին անողնական կերպով հայտարարում եր, թե «մանկարանությունը յերիտասարդ գիտություն և և չի կարող իր առարկայի անբասիր ստույդ և ճիշտ բնորոշումը» («Պետոլոգիա», Հրատ . 1936 թ ., եջ 10) :

Իր «զիտության» յելակետերում կանդակը բուրքավագուց-
վոչ-ճիշտ գիրքերում, Բլոնսկին արհեստական փոխարարքերու-
թյուններ եր հաստատում մանկավարժության և մանկաբանու-
թյան միջև, բնորոշելով, վոր մանկավարժությունը վճռում ե
այն հարցը, թե ուսուցիչն ի՞նչպես պետք է ավարտեցնի, իսկ
մանկաբանությունն այն հարցը, թե ի՞նչպես ե յերեխան ավո-
րում։ Այսպիսով, դաստիարակության բուրքուական թեորիայի
ողնությամբ Բլոնսկին արհեստականորեն միասնական մանկավար-
ժական պրոցեսն անդամահատում ե յերկու առանձին ինքնուրույն
մասերի։ Ուսման կաղմակերպման և ըովանդակության մեջ
մտնող բոլոր հարցերը առնչություն ունեն ուսուցչի հետ, վորը
պետք ե լոկ դասավանդի, իսկ բոլոր այն հարցերը, վորոնք վե-
րաբերում են աշակերտների ուսումնական աշխատանքի զեկավար-
մանը, ուսման վորակի բարձրացման, զիտությունների հիմունք-
ների ամուր ու սրբածմատիկ տիրապեսաման, զպրոցում գիտակ-
ցական կարգապահության ամրացման, կոմունիստական կայուն
դաստիարակության համար պայքարելուն և այլն, մանկավար-
ժական պրոցեսի այս բոլոր կարենուագույն մօմենտներն արհես-
տականորեն առանձնացվում են հատուկ բաժնում և կապալով են
տրվում մանկաբանությանը։ Այսպես, պըռֆ. Բլոնսկին, խոր-
հըրդային հողի վրա փոխադրելով՝ մանկաբանություն կոչվող
բուրքուական «զիտությունը», ստեղծելով և քարոզելով ման-
կաբանական անսկզբունք եկլեկտիկական թեորիաներ, յերկու

մասի յեր բաժանում մեկ ամբողջական մանկավարժական պրոցեսի բնույթը և դրանով իսկ խորհրդային ուսուցչին մեկուսացնում եր նրա հիմնական խնդրից, այն ե՝ յերեխաներին վոչ միայն սովորեցնելու, այլև դաստիարակելու խնդրից։ Բլոնսկին հանուն իր կեղծ գիտության ազակողմնորոշում և ուսուցչին և նվազեցնում նրա պատասխանատվությունը յերեխաների ուսման ու դաստիարակման համար։ Ուսուցիչը վորպես կենտրոնական դեմք զպրոցում, ուսուցիչը, վորը կրում և ուսումնա-դաստիարակչական աշխատանքի դրվածքի վողջ պատասխանատվությունը, Բլոնսկու ջանքերով մղվում և յերկրորդ տեղից, վորովէնտե ուսուցչի փոխարեն գլխավոր դերում հանդես և դալիս մանկարանը, վորը վճռականապես հավաենում և ընդդրելու ուսումնա-դաստիարակչական աշխատանքի բոլոր բաժինները ինչպես պարոցում, այնպես ել գալրոցից դուրս։

Դպրոցական աշխատանքի բոլոր կարևորագույն բնագավառները մանկարանության աղեղպանները փորձում եյին հանձնել մանկարանի տնօրինությանը, — դասացուցակ կազմելը, ուսումնականորվա ռեժիմը, կարդապահության կազմակերպումը դպրոցում, աշակերտների առաջադիմության հաշվառումը, դասարանից դասարան փոխարելու մասին յեղրակացություն տալը և այլն։ Այսպիսով, մանկարանները խառնվում եյին ուսուցչի ուղղակի պարտականություններին, և դա մանկարանների լեզվով կոչվում եր ուսումնական պրոցեսի մանկարանացում։

Բլոնսկու մանկարանական գրքերը լեցուն են մարքսիզմի վկայակոչումներով, Մարքսի, Ենդելսի, Լենինի, Ստալինի յերկերից բերված ցիտատներով և այնպիսի պեղումներով, թե մանկարաններն ամենայն վճռականությամբ ուսումնասիրում են մարքսիզմի հիմնադիրների յերկերը, Մարքսի, Ենդելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների մեջ վնասելով ղեկավար ցուցումներ, յելակետային սկզբունքային գիրքավորումներ։ «Այժմ արդեն կասկած չկա այն բանում, — գրում եր Բլոնսկին, — վոր դիալեկտիկական մատերիալիզմը մեր մանկարանության վիճակությական հիմքն ե, վոր մեր մանկարանությունը պետք ե լինի յերկու ֆրոնտով իդեալիզմի և մեխանիստական մատերիալիզմի դեմ պայքար մղող մարքս-լենինյան մանկարանություն» («Պեծոլոտիա», 1936 թ. հրատ., եջ 10)։ Մարքսիզմի հիմնադիրների յերկերից բերված ցիտատները հաճախակի կրկնելու ճանապարհով, աճող սերնդի զարգացման և ձեւավորման որենքների վերա-

բերյալ իրր թե մարքսիստական դեկլարացիաների ճանապարհով, Բլոնսկին քննադատությունից յեռանդադին պաշտպանում եր իր կեղծ-գիտական մանկարանական սկզբունքները։ Զեականորեն կեղծ-գիտական մանկարանական սկզբունքները։ Զեականորեն սահմանադատվելով բուրժուական մանկարանությունից, Բլոնսկին քողարկված ձեռվ «Խորհրդային մանկարանություն» պիտակի տակ քաշ եր տալիս բուրժուական ուեակցիոն թեորիաները։

Համկ(բ)կ Կկ-ի 1936 թ. հուլիսի 4-ի վորոշումը մանկարանական խեղաթյուրումների մասին ամենայն վորոշակիությամբ մերկացնում և այդ, մատնանշելով, վոր «այսպես կոչված մանկարանության թե՛ թեորիան և թե՛ պրակտիկան հմտնվում են կեղծ-գիտական, հակամարքսիստական դրույթների վրա։ Այդպիսի դրույթներին և վերաբերում, նախ և առաջ, ներկայիս մանկարանության դլխավոր «որենքը»— յերեխաների ճակատագիրը բիոլոգիական և սոցիալական գործոններով, ժառանգական և ինչ-վոր անփոփոխ միջավայրի ազդեցությամբ Փառության և ինչ-վոր անփոփոխ միջավայրի ազդեցությամբ լինելու «որենքը»։ Այդ խորատավատությեն պայմանավորված լինելու «որենքը» աղաղակող հակասության մեջ և գըունը նըլում մարքսիզմի և սոցիալիստական շինարարության ամբողջ պրակտիկայի հետ, վորը հաջողությամբ վերադաստիարակում և մարդկանց սոցիալիզմի վորով և լիկվիդացիայի յե յենթարկում կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց գիտական պահպանության մեջ։

Համկ(բ)կ Կկ-ի այս խոսքերի մեջ տրված և մանկարանություն կոչվող կեղծ-գիտության վոչնչացնող քննադատությունը։ Դա լրիվ չափով վերաբերում ե նրա ամենաականավոր տեսաբան պրոֆ. Բլոնսկուն։ Բլոնսկու մանկարանական աշխատությունների վերլուծությունը պարզ կերպով յերևան և հանում «գորների վերլուծությունը պարզ կերպով յերևան և հանում «գորների մեջ կարմիր թելի պես անց ե կենում այն հիմնական իդեալական մանկարանությունը և անփոփոխ միջավայրով», «յերեխայի զարդարումը նությամբ և անփոփոխ միջավայրով» («Մանկարի փոխազդեցության արդյունք և հանդիսանում») («Մանկարի փոխազդեցության հանրադիտարան», հ. 1, եջ 195)։ Ֆատալիստորեն վարժական հանրադիտարան յերեխայի զարդարումը ժառանգականության պայմանավորելով յերեխայի զարդարումը ժառանգականության որդունով, Բլոնսկին տեսդենցիոն կերպով չափազանցնում եր գործոնով, Բլոնսկին տեսդենցիոն կերպով չափազանցնում եր գործոնով, ամսող սերնդի զարգացման և ձեւավորման որենքների վերա-

Նույնեղի ողնությամբ դրաբարտություն բարդելով աշխատա-
վորների վրա :

Ծառականդականությամբ ծանրաբեռնված յերեխաների մեծ տոկոսի վերաբերյալ իր գատողությունների մեջ Բլոնսկին գործ և ածում ամերիկական դիտնականների վեճակագրական հաշվարքությունները, զրագարտողաբար հայտարարելով, թե «Ըուսաստանի, հատկապես արևելյան Ըուսաստանի համար այս թվերը պետք է շատ ավելի բարձր լինեն» («Պեծոլոգիա», 1925 թ. հրատ., էջ 68):

Հիմնվելով բուրժուական մանկաբանական յեղակացությունների վրա, Բլոնսկին իր մեծածավալ մանկաբանական «աշխատավորթյունների» մեջ փորձում է ապացուցել, թե՝ անսուռզ, անսործալ յերեխանների մեծ թիվն ընկնում է աշխատավորների ընտանիքներին. այդ պնդումների մեջ Բլոնսկին ուղղակի հիմնվում է բուրժուական մանկաբանների վրա, վորոնք մարտնչում են միայն ունեօր դասակարգերի կրթության իրավունքի համար: Յեզ նման պնդումներ Բլոնսկին առաջադրում եր այն դասակարգի գեմ, վորը հեղափոխության կրակում տապալեց կապիտալիստական շահագործման լուծը և վորը, զինված լինելով մարքսիզմի-լենինիզմի թեորիայով, աշխատավորության հմաստուն աստիճանորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ հաջողությամբ կառավարեց սոցիալիստական անդասակարգ հասարակություն:

Բուրժուական մանկաբանության սյուններից մեկը՝ Ա. Բինեն
այսպիսի մի միտք և հայտնում՝ «Մեր հետազոտությունները,
ինչպես և ուրիշ շատ հետազոտողների հետազոտությունները,
չուցելու տվյալն, վոր աղքատ դասակարգի յերեխան ունի ավելի
փոքր հասակ, ամելի սրակաս քաշ, ավելի փոքր դլուխ, ամելի
քիչ մկանային ուժ, քան հարուստ դասակարգի յերեխան, նաև
ամելի սակավ և ձգտում հասունության վկայականի, նու հաճախ
հետ և մնում իր պարագմունքներում»։ Այս «արտահայտություններ» պարզ են, թե ում ոդտին եր մշակվում մանկաբանությունը,
ո՞վ, վո՞ր դասակարգերը պետք են վաստակեն մանկաբանական
հայտաբերումների դափնիները։ Նույնպիսի բանդաղուշանք,
վորը համատարած զրպարտություն եր մեր յերկը աշխատա-
վորների հասցեյին, հրամցվում եր նաև տնաբույս կեղծ-դիտու-
թյան՝ մանկաբանության մեջ։ Տեղին ե տվյալ գեղքում բերել
լուսավորության ժողկոմ Ա. Ս. Բուրնովի խոսքերն՝ ուղղված
Զալյինովի հասցեյին։ «Ա. Բ. Զալյինովի զրպերում մարքսիզմի

բոլոր վկայակոչումները վլոչ այլ ինչ են, յեթե վոչ խարդախ
կեղծ-մարքսիստական փետրավորում, ծաղր լենինիզմի և նրա
փելիսոփայական հիմունքների հասցեյին» (Ընկ. Բուռնովի ճառը
ՌՄՖԽՀ լուսավորության ժողկումին կից խորհրդի նիստում):

Առանձնապես մեծ ջանապարհություն ցույց-է կատարված առաջին աշխատական թեորիաներն ու մեթոդները աշակերտների անառաջադիմության պատճառների պարզաբանման ուղղությամբ կիրառուելու գործում։ Ուսման մեջ հետաժնաց լինելու պատճառները նա տեսնում ե դպրոցից դուրս, որինակ՝ ընտանիքի նյութական վաստականության մեջ, յերեխաների ծնողների անկուլատուրականության մեջ, յերեխաների մասսային իրք թե որդանապես յուրահատուկ դեֆեկատների մեջ և այլն։ Ուսման հետաժնացությունը աշխատավորների յերեխաների մեծ տոկոսի համար Բլոնսկին համարում ե ճակատագրականություն անխուսափելի, նրանց դպրոց գալուց չատ առաջ կանխորոշված։ Նա հասնում է նույնիսկ այնպիսի անդումների, թե «արդեն իսկ անաշխատ առաջարկած կերպով» և թե «մեր անառաջադիմ յերեխաների անբարենպաստ կերպով» և թե «մեր անառաջադիմ յերեխաների մեկ յերրորդ մասը ծնվել է վնասալած ուղեղով»։ Այսուեղից Բլոնսկին անում է այն յերակացությունը, թե «անառաջադիմ դպրոցականների մոտավորապես յերկու յերրորդը մոտավորապես անդարդացած են» («Трудные школыники», 1924 թ. հրատ., եջ

1936 г.):

«Մատղորապես հետամնաց» յերեխասալի լւուը
ների ջանքերով աճում եր նաև աշակերտներին այսպես կոչված-
տեստերի միջոցով մանկաբանական «հետազոտությունների» յեն-
թարկելու առնչությամբ։ Բլոնսկին իր գիտական գործունեյու-

թյան ամբողջ ընթացքում Բինելի, Սիմոնի, Շերտի և այլոց ժակած տեղողութիւնի ակտիվ կողմնակիցներինց մեկն ե յեղել։ Հայոց նորեն կիրառելով բուրժուական տեստերը է որհրդադային դրսոցում, Բլոնսկին չեր ուղղում նկատել այդ տեստերի դասակարգային ելությունը։ Զհամականալով, վոր «այսուհետ կոչված մանկաբանության թերթիան և պրակտիկան հիմնվում են կեղծ-գիտական, հակամարքսիստական դրույթների» վրա» (Համկ (ր) Կկ-ի վորոշումից), վոր տեստերը հնարել են բուրժուական գիտականները բուրժուազիայի տիրապետությունն արդարացնելու նպատակով, Բլոնսկին հայտարարում ե։ «Զավումների ամենալավ սիստեմն ինտերնացիոնալ սիստեմն ե։ Այսպես, ահա, մենք կարող ենք պայմանավորվել 1921 թվին հրատրակած շկալայի փոխարեն ընդունելու Բերդի լոնդոնյան շկալանն ։ Այն ընդունելով վորպես ինտերնացիոնալ չափանիշ, մենք այժմ կարող ենք այդ շկալայի միավորներով արտահայտել տաքրեր յերկիրների, եպօխաների և դասակարգերի յերեխաների մտավոր զարգացումը» («Պեծոլոգիա և մասսով ակադեմիա առաջնորդության մասին» 1925 թ., հրատ., եջ 58—59)։ Բլոնսկու կարծիքով, տեստերը պիտանի յեն բոլոր ժողովաւրդների և եպօխաների համար։ նա չի ուղղում թափանցել նրանց սոցիալ-դասակարգային ելության մեջ։ Հետազոտությունների և տեստերի հանապարհով դպրոցականին ուսումնասիրելու վողջ դրվածքը կարծես թե կանխադիտավորյալ կերպով ուղղված լիներ յերեան հանելու դիսավորապես ախտաբանական մոմենտները և վոչ թե խորհրդային կենդանի յերեխային իր կենսուրակիությամբ ու հարցասիրությամբ։ Յերեխաների մանկաբանական հետազոտությունների ամբողջ սիստեմում խստիվ արտահայտվում եր նրանց վրա ամեն տեսակի բացասական ազդեցությունները յերեան հանելու տենդենցը։ Ստեղծվում ե այնպիսի տպավորություն, վոր Բլոնսկին իր մանկաբանական հրահանգներն ըստ յերեւոյթին մշակում եր բացառապես վերցնելով կինեկական հետազոտության կողմնորոշում, յենթագրելով դորձ ունենալ բացահայտորեն վնասված որդանիդմների և վոչ թե կյանքով ու հրաբորբությամբ լեցուն այն լիարյուն յերեխաների հետ, վորպիսիք մեր խորհրդային յերեխաներն են։

Այդ նույն մանր-բուրժուական թեորիան, միայն այլ վարչականութեալ խորհրդային ուսուցչին է հրամցնում նաև Բլոնսկին, Հայտով, իսրահրդային ուսուցչին է հրամցնում նաև սովորեցնելը հայտարարելով. «Յերեխաներին գրադիտություն սովորեցնելը հիմնվում է ընդուրինակման և վարժության վրա: Յերեխան տես-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

նում ե , վոր կարդում ե ուրիշը , ընդորինակում ե նրան , ընդուրինակման պրոցեսում վորսում ե ընթերցանության մեխանիզմը և վարժության ճանապարհով տիրապետում ե այդ մեխանիզմին : Այսպես , տեսնելով , թե ի՞նչպես ե կարդում ուրիշը , յերեսան սովորում ե ինքնիրեն կարդալ դպրոցից դուրս» : Այսպիսի , թող թույլ տրվի ասել , մեթոդիկան դպրոցին մեծ վնաս հասցրեց : Նա ապակողմնորոշում եր ուսուցչին և ուսուցիչներ պատրաստով մեթոդիստ ղեկավարներին : Ուսուցման մանկաբանացման կողմնորոշում վերցնելով , Բլոնսկին հիշյալ գրքում «սովորական ուսուցչից» տարբերում ե մանկաբան մանկավարժին , վորն հետեւ վում ե այս կանոնին — ուսուցումն սկսի՛ր՝ յելնելով յերեխայի անձնական փոքրից :

Նման հայցքները , վորոնք արտահայտվում են պրակտիկայում ստուգված ուսուցման մեթոդների ժխտումով , լցնում են այդ գրքի ամբողջ շարադրումը և , բացի վնասից , այդ գիրքը վոչինչ չի տալիս :

Կեղծ-գիտական և հակամարքսիստական դիրքավորումները Բլոնսկու , ինչպես և մյուս մանկաբանների մանկաբանական հայցքներում ամենայն պարզությամբ յերեսն են հանում նրանց սոցիալական արժանապետության սեակցիոն մանկաբանության մեջ : Մանկաբաններն ուրեկտիվորեն դարձել եյին «բարձր» և «ցածր» ցեղերի թեորիայի մունետիկները : Այդ միանդամայն ձիչտ ե նաև պրոֆ . Բլոնսկու վերաբերմամբ , անկախ այն բանից՝ նա այդ ուղեցել է , թե չի ուղեցել :

Իր «գիտական» կառուցումների մեջ յելնելով այսպես կոչված մանկաբանությունից , Բլոնսկին , կտրվելով սոցիալիստական շինարարության պրակտիկայից , դպրոցից և մանկավարժությունից , խորհրդային յերեխանների և նրանց բազմակողմանի կյանքի , ուսման իրական ուսումնասիրությունից , գլորվեց «տարութերվող» կեղծ-գիտության՝ մանկաբանության լերկ վերացական դիրքերը : Բլոնսկու մանկաբանական թեորիան , ամբողջապես հագեցած լինելով անսկզբունք , եկլեկտիկական հայցքներով , մեծ վնաս հասցրեց խորհրդային դպրոցի ամրացման գործին , կոմունիստական հասարակության ակտիվ , դիտակից և ձեռներեց կառուցողների պատրաստման գործին : («Начальная школа» 1937 г. № 3):

- | | | |
|------|---|-----|
| 1. | Լուսժողկոմատի սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին (Համկ(բ)կ կենտրոնական կոմիտեյի 1936 թ. հուլիսի 4-ի գորոշումը) | 1 |
| 2. | Մանկաբանական կեղծ-գիտության մերկացումը («Պրակտիկա»-յի հուլիսի 5-ի առաջնորդողը) | 9 |
| 3. | Ի. Գ. Լոբով .—Լուսժողկոմատների սիստեմում յեղած մանկաբանական խեղաթյուրումների մասին | 13 |
| I. | Դպրոցական կրթության աճումը ԽՍՀՄ-ում | 14 |
| II. | Խեղաթյուրումները դպրոցի ղեկավարման գործում | 28 |
| III. | Մանկաբանական կեղծ-գիտությունը և նրա արմատները | 41 |
| IV. | Մանկաբանների «գործունեյությունը» դպրոցում | 61 |
| V. | Մեր խնդիրները | 77 |
| VI. | Ա. Բուրմով .—Ժամանակակից մանկաբանության թեորիայի և պրակտիկայի մասին | 80 |
| VII. | Ա. Բոգոմով .—Պրոֆեսոր Պ. Պ. Բլոնսկու կեղծ-գիտական , հակամարքսիստական հայցքների մասին | 105 |

Գլավլիտի լիազոր—Խ—9223, հրատ. 4129, պատվ. 101, տիրաժ 3000

Հանձնված և արտադրութ. 7 հունիսի 1937 թ.

Ստորագրված և տպադրելու 15 հուլիսի 1937 թ.

Թղթի չափը 62×94 , տպ. $7\frac{1}{2}$ մամ. մեկ մամուլում 38400 նիշ. հեղինակ. $7\frac{1}{5}$ մամ. չափը 6×10 , կորպուս, 117 ել.

Հայկական ազգային, Շենքան, Ալիակերպյան Նոյն

ԱՐԻՊԱԿՆԵՐ

Պետք ե լինի

Տպված և

- Ա2
59 կ. 4 տ. Մանկաբանությունը հայ-
տարարված եր...
62 կ. 14 տ. առաջադիմության
64 ս. 5 տ. դասատուների
67 կ. 1 տ. ընտրություն ե
93 կ. 10 տ. ժառանդականություն
113 ս. 7 և 18 տ. մոտավորապես
116 ս. 17 տ. սեկցիոն

Մանկավարժությունը արհամա-
հական կերպով հայտարարված ե
չառաջադիմելու
դասարանների
ընտրության և
ժառանդականությամբ
մտավորապես
ռեակցիոն

ՀՀ Ազգային գրադարան



NL0977608

425

4110 1 п. 80 4.

11

28549

30

РАЗОБЛАЧЕНИЕ
ПЕДОЛОГИИ КАК
ЛЖЕНАУКИ

Гиз. Аризона ССР, Ереванъ 1907